ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

№1(1586) ՅՈՒՆԻՍ 2007

Վահան Հովհաննիսյան

Արմեն Ռուստամյան

Ալվարդ Պետրոսյան

Արտյուշա Շահբազյան

Միքայել Մանուկյան

Արթուր Աղաբեկյան

Ռուզաննա Առաքելյան

Արայիկ Գրիգորյան

Աշոտ Ափոյան

Կարեն Վարդանյան

Հրայր Կարապետյան

Արամայիս Գրիգորյան

Լիլիթ Գալստյան

Արծվիկ Մինասյան

Արա Նռանյան

Գագիկ Գեւորգյան

ՄԵՐ ՀԻՆ ԸՆԿԵՐԸ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է

Ս.Դ. ԲԻՒՐՈՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

ԴՐՈՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԱՇՏՕՆԱԹԵՐԹ





Յարցազրույց

3 Հարցերին պատասխանում է Հրանտ Մարգարյանը

Հուշագրություն

6 Կյանքիս գրքեն

Հայաստան-արժեքային

13 Պետականության ու անկախության հիմնախնդիրներ ու մարտահրավերներ

Հայաստան-սոցիալ-տնտեսական

18 Հայաստանի սոցիալ-տնտեսական կարգացման պատկերացումները

Ինքնաբանական

22 Ինքնության փոխմածառը

Տարածաշրջան

29 Տավախքը հայ քաղաքական ընկալման մեջ եւ հայ-վրացական հարաբերությունների հեռանկարները

35 Թուրքիան եւ Հայաստանի տարածաշրջանային ժողովրդագրական անվտանգությունը.հնարավոր բեմագրություններ

43 Տարածաշրջանային ծրագրերն ու Հայաստանը

Սպասվորական անկյուն

45 Ծրագիր, պլատֆորմ, մանիֆեստ եւ մի փոքր փակագիծ

Թռթակցություն

49 Հաշմանդամները՝ հասարակության լիարժեք անդամ

Դաշնակցական դեմ

55 Նյութեր պատմության համար
ՀՅԴ Կ.Պոլսի "Ակատամարտ" եւ "Ճակատամարտ" օրաթերթերը

Աշակերտական

59 Մատենադարան

"Դրօշակ" ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցություն:
Հիմնադիր՝ ՀՅԴ
Գլխավոր խմբագիր՝ Ռ.Հովսեփյան
Խմբագիր՝ Կ.Խանլարյան
Համակարգչային շարվածքը՝ Ս.Խաչատրյանի
Ձեւավորումը՝ Մ.Հովսեփյանի
Գրանցման վկայական 897
Երեւան,375010,Մեր Մկրտչյան 12| 1
Հեռ. 521 876
Էլ.փոստ.droshak@ arf.am
Տպագրությունը՝ ՆԱՄԷ տպագրատուն

"Droshak" monthly, ARF dashnaktsoutiun publication
12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@ arf.am
Editor-in-Chef: Rouben Hovsepian

Digitized by ARF PR Office

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎՈՂ «ԴՐՕՇԱԿ »Ը

Զգալի բացակայությունից հետո ահա վերահրատարակվում է «Դրոշակը»՝ նոր խմբագրական կազմով, նոր չեւաչափերով եւ նոր ծավալով:

Յայժմ «Դրոշակը» հրատարակվել է չորս ժամանակահատվածներում. 1891-1914 թթ., 1925-1933 թթ., 1969-1985 թթ. («Ազդակ-Շաբաթօրյակ» անվամբ) եւ 1986-2005 թթ., ժամանակահատվածներ, որ մոտավոր կերպով համապատասխանել են համաշխարհային, ազգային եւ կուսակցական տարաբնույթ վերիվայրումների եւ փոփոխությունների ժամանակաշրջաններին: Ամեն անգամ, բնականաբար, փոխվել են «Դրոշակի» խմբագրակազմը, տեսքը, չեւաչափը, սակայն ոչ երբեք գաղափարականությունը եւ սկզբունքայնության անկոտրում կեցվածքը:

Դեռ 1891 թ. առաջին համարներից մեկում «Դրոշակը» ազդարարել է, որ իր էջերում «***կը պարզաբանուի Դաշնակցութեան*** ծրագիրը»:

1925 թ. վերահրատարակման առիթով հաստատագրվել է, որ «***Դրօշակը իբրեւ Հ.Յ.Դաշնակցութեան պաշտօնական օրգանը, բնականաբար արտայայտիչը պէտք է լինի այն մտքերի եւ գործերի, որոնք բնորոշում են մեր կուսակցութեան ծրագիրը, կազմակերպական կանոնները, տակտիկան եւ ընթացիկ քաղաքականութիւնը*** »:

Սկզբունքայնության բարչունքներից հարցերը դիտարկելու չգտումը հանդես է գալիս 1969 թ. «Ազդակ-Շաբաթօրյակ» անվամբ վերահրատարակության առիթով եւս. «***Օրաթերթերը հարկադրաբար կը խմբագրուին օրը օրին եւ կը սպառնան առօրեայ կեանքի հեւքն ու կշռոյթը,***- գրում էր «Շաբաթօրյակը»:- ***Կը կրեն նաեւ տեղական բնոյթ, գոհացնելու համար տեղւոյն հասարակական նեղ պահանջները: Այս շաբաթաթերթ օրգանը լոյս կը տեսնէ՝ դուրս գալու համար առօրեայ հեւքոտ կեանքի ճնշումներէն, փնտռելու համար աշխարհը ցնցող դէպքերուն եւ իրադարձութեանց մէջ հեգքերը մնայուն եւ տեւական*** արժէքներուն»:

Իսկ 1986 թ. դարձյալ վերահրատարակվող «Դրոշակում» գաղափարականության սկզբունքի կիրառման հավաստիքը հանդես է գալիս այս տողերում. «***Գաղափարական ամբողջ ժառանգութիւն մը վերանորոգելու դաշնակցական յանդգնութիւնը թափ կուտայ մեր աշխատանքին՝ իբրեւ ներշնչման անխառն ու վարար*** աղբիւր»:

Նոր խմբագրակազմիս համար անվիճելի արժեքներ են մնում Քրիստափոր Միքայելյանից, Միքայել Վարանդյանից, Սիմոն Վրացյանից, Սարգիս Ջեյթլյանից, Բաբկեն Փափազյանից ժառանգված եւ Նազարեթ Պերպերյանի խմբագրած «Դրոշակին» փոխանցված **հետեւյալ** անտարակուսելի կեցվածքն ու գաղափարական սկզբունքները.

- «Դրոշակը», ինչպես միշտ, հանդիսանալու է ՀՅԴ հայացքների եւ գաղափարախոսության թարգմանը եւ տարածողը:

- «Դրոշակը», հայ ազգային-պետական, քաղաքատնտեսական եւ սոցիալ-մշակութային բովանդակ շահերի պաշտպանության դիրքերից եւ ՀՅԴ արժեքային համակարգից ելնելով, մեկնաբանելու է համաշխարհային ու տարածաշրջանային անցուդարձերը, հայությանն ու Հայ Դատին վերաբերող խնդիրները, Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի հանրապետություններին եւ մեր կորուսյալ Հայրենիքին առնչվող հիմնահարցերը:

- «Դրոշակը», վերոնշյալ շահերի պաշտպանության դիրքերից մեկնելով, քննարկելու է Հայաստանի ու հայության կյանքի նաեւ հոռի եւ բացասական երեսները՝ ազգային քաղաքական ընթացքները, արտատնտեսական եւ ստվերային աղետաբեր կացութաչեւերը, կոռուպցիան եւ կլանային սանձարձակությունները, ճեղքված եւ բեւեռացած հասարակության սոցիալական հարաբերությունները, անհարիր եւ այլասերիչ մշակութային երեւույթները:

- «Դրոշակը» արծարծելու է այս բոլորը՝ մշտապես ուղենիշ ունենալով ժամանակի ոգին ու առաջխաղացքը, հստակ տարբերելով միջազգային արժեքները կոսմոպոլիտ ըմբռնումներից, համամարդկային նվաճումները՝ գլոբալիզացիայի մակերեսային հրամցումներից:

«Դրոշակը» իր այս էական հավատամքով եւ իր այս նորույթներով է վերահրատարակվում: Եվ այսու կոչ ենք անում մեր գաղափարակից ընթերցողներին՝ համախմբվել «Դրոշակի» շուրջ, պահել «Դրոշակը» փառավոր այն բարձունքի վրա, որտեղից նա մուտք գործեց հայ ժողովրդի մտքի եւ սրտի մեջ...

"Դրօշակ" - ի հարցերին պատասխանում է ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանտ Մարգարյանը



"Դրօշակ". – Բոլոր տեսակի մրցույթներում, իսկ ընտրությունը նույնպես մրցույթ է, մրցանակային, պատվավոր, այսինքն՝ հաղթական տեղ է համարվում նաև երրորդը: ՀՅԴ կուսակցության ձեռք բերածը խորհրդարանական այս ընտրություններում Դուք համարո՞ւմ եք հաղթանակ:

Հր. Մարգարյան. – Խորհրդարանական ընտրություններում մեր ձեռք բերածը գնահատելիս ես պիտի փորձեմ խուսափել հաղթանակ և պարտություն բառերի գործածումից, որովհետև Դաշնակցության դերն ու նշանակությունը հայկական իրականության մեջ պայմանավորված չէ ընտրությունների արդյունքում դրսևորված քվեների չափով: Այսուհանդերձ մենք կարողացանք մեր կազմակերպված քվեների 80 %-ը ապահովել, ինչը, կարծում եմ, լավ ցուցանիշ է: Մենք հաջողեցինք դասական ընտրապայքար մղել և վաստակել արդար ու կայուն 180.000 քվե ու քվեարկող: Եթե Հայաստանի Հանրապետությունում գործող որևէ կազմակերպություն ինքն իրեն խոստովանի, թե ունի 180.000 քվեարկող (խոսքն, անշուշտ, քվեարկողի մասին է և ոչ թե քվեի), ես Դաշնակցությանը պարտված կհամարեմ:

Պետք է նկատի ունենալ, որ, ընտրություններին մասնակցելով, մենք չենք ունեցել ոչ ընդդիմության ազատությունը՝ ամբոխավարական իր կարգախոսներով, և ոչ էլ մեր երկրում առայժմ հաջողությամբ կիրառվող իշխանական լծակներն ու հնարավորությունները: Մենք ընդդեմի հասկացությամբ քվեներ չենք որսացել, մենք չենք սպառնացել ու չենք վախեցրել ոչ մեկին, ընտրական հանձնաժողովներում մենք չենք ունեցել թվական գերակշռություն, հաճախ նույնիսկ միայնակ ենք մնացել 7-ի, 8-ի դեմ: Մենք ատելություն, թշնամանք չենք սերմանել...

Մենք ընտրություններից դուրս ենք եկել ավելի հզորացած: Ամենամեծ ձեռքբերումը ահա այս զգացողությունն է: Եվ տա աստված, որ նման զգացողությամբ համակվեն մեր բոլոր գործընկերները:

"Դրօշակ". - Բացարձակ մեծամասնություն ունեցող ՀՀԿ-ն կարող էր ամբողջովին իր վրա վերցնել կառավարություն ձևավորելու խնդիրը՝ սոսկ համագործակցության ձեռք մեկնելով թե Բարգավաճ Հայաստանին և թե Հայ Յեղափոխական Դաշնակցությանը: Համագործակցության նման հրավերը, բնականաբար, հավասարության նշան չէր դնելու հրավիրողի և հրավիրյալի միջև, և հնարավոր եռանդամ կոալիցիայում Դաշնակցությանը, լավագույն դեպքում, կրտսեր եղբոր կարգավիճակ էր հատկացվելու: Այս հեռանկա՞ր Դաշնակցությանը դրդեց այլ լուծում փնտրել:

Հր. Մարգարյան. – Մեծամասնությունն այնքան մեծ ներկայություն ուներ Ազգային ժողովում՝ 100 պատգամավոր, որ մեր մասնակցությամբ կոալիցիայի հարց պիտի չառաջանար: Քաղաքակիրթ երկրներում, իհարկե, հաղթած ուժը փոքրամասնությանը չի դիտարկում որպես թշ-

նամու և հալածանք չի սկսում նրա դեմ, սակայն պետք չէ մոռանալ, որ ձևավորվող այս կառավարությունը ութ ամսվա կյանք է ունենալու և "բարյացակամության" դրսևորումը մեծամասնության կողմից ապագա նախագահական ընտրություններում հարց լուծելու հետին նպատակ կարող էր հետապնդել: Մենք միշտ պատրաստ ենք, հանուն մեր հայրենիքի ու ժողովրդի, համագործակցել բոլորի հետ, անկախ այն բանից՝ մեծ մեծամասնությո՞ն, թե փոքր փոքրամասնություն են արձանագրել նրանք: Սակայն, էլի հանուն հայրենիքի ու մեր ժողովրդի, մենք պատրաստ չենք և չենք կարող վաճառել մեր ինքնուրույնությունն ու անկախությունը:

Կոալիցիային մաս կազմելու մեզ հրավեր եղավ, բայց մենք, չբացառելով համագործակցությունը, մերժեցինք հրավերը հետևյալ բացատրությամբ՝ մենք այլևս չենք ուզում պատասխանատվություն կրել այն բոլոր հարցերի համար, որոնց մեջ մասնակցություն և դերակատարություն չունենք, իսկ նախագահական ընտրություններին մասնակցելու ենք սեփական թեկնածուով: Այլ խոսքով, չմերժելով համագործակցության առաջարկը, մենք նախընտրեցինք մնալ դրական ընդդիմություն՝ այլընտրանք: Պահպանելով մեր ազատությունն ու ինքնուրույնությունը՝ մենք համագործակցելու ենք իշխանությունների հետ: Մենք նույնիսկ մեր շարքերից նախարարներ տրամադրեցինք կառավարությանը:

Կարծում եմ, ձեռք բերված համաձայնությունից կշահեն թե ժողովուրդը, թե համաձայնության եկած կողմերը, և թե քաղաքական կյանքը վերջապես կսկսի աշխատել, թեև տարբեր մոտեցումների առկայությամբ, սակայն առանց առճակատման ու ճապաղումների:

Եվ եթե ոմանք իրենց համար չեն պարզել, թե որ դաշտում է Դաշնակցությունը, թող իմանան, որ մենք թե իշխանության և թե ընդդիմության այլընտրանք ենք: Մենք նաև իշխանություն ենք այն առումով, որ երկրի զարգացման համար ամբողջական պատասխանատվության գիտակցումն ունենք:

"Դրոշակ" – Ընդդիմությունից իշխանություն անցած կուսակցությունները, սովորաբար, փորձում են իրականացնել իրենց ծրագրերից բխած խոստումները, իսկ ի՞նչ է անելու իշխանությունից ընդդիմություն անցած կուսակցությունը:

Յր. Մարգարյան. – Անշուշտ այս հարցը պետք է ուղղվի ճիշտ հասցեատիրոջը, իսկ ինչ վերաբերում է մեզ, ապա շատ պարզունակ կլինի, եթե Դաշնակցության տեղն ու դերակատարությունը գնահատվի այս ընտրություններով պարզված համեմատությունների մեջ: Առկա է ութ տարիների համագործակցության պատմությունը, և շատ պարզ ու հստակ է մեր դերակատարության արժեքը ուժերի հավասարակշռման, երկրի կայունության պահպանման և Սփյուռք-Հայրենիք փոխհարաբերություններում: Թեև քաղաքականության մեջ հարաբերությունները այլ սկզբունքներով են ճշտվում, սակայն մենք, այսուհանդերձ, կայուն ենք մեր ընկերության մեջ: Թող ինքնագովություն չհամարվի, բայց մեր ընկերությունը քանկ է նաև դիմացինի համար:

"Դրոշակ" – Հայաստանը դեռ երկար ճանապարհ ունի կտրելու, քանի դեռ ընտրությունների արդյունքում չեն արտացոլվում ժողովրդի իրական ցանկություններն ու տրամադրությունները, համակրանքներն ու հակակրանքները: Այսուհանդերձ վերջին ընտրություններում մենք վկան եղանք միջազգային կազմակերպությունների դրական գնահատականին: Որքա՞ն է ճշգրիտ այդ գնահատականը:

Յր. Մարգարյան. – Այդ գնահատականի կարիքն ուներ մեր հանրապետությունը՝ արտաքին ճակատում բաց ճակատով ասպարեզ գալու համար: Ճիշտ այդ պատճառով մեզ շատ բան չմնաց ասելու: Մանավանդ, արդար լինելու դեպքում անհնար է չնկատել, որ ամեն մի նոր ընտրություն ավելի լավ պայմաններում է տեղի ունենում, և, ուրեմն, հուսահատվելը, ընտրություններին չհավատալը ուղղակի մեղք է:

Հարցին պետք է մոտենալ այլ կերպ. եթե ընտրությունները կեղծվում են, նշանակում է մենք վերահսկողություն իրականացնել չենք կարողանում, նշանակում է մենք բոլորս կազմակերպական խնդիր ունենք: Պետք չէ հաշտվել այն մտքի հետ, թե ընտրակաշառքն է որոշիչը: Ի վերջո փաստ է չէ՞, որ մեկ միլիոն քաղաքացի չի մասնակցել ընտրություններին, այսինքն՝ նրանք ընտրակաշառք չեն վերցրել, իրենց չեն ծախել: Մասնակիցների առնվազն կեսն էլ ընտրակաշառքով չի քվեարկել: Ուրեմն մեզ համար գործելու հսկայական դաշտ կա, անտարբերներին ակտիվացնելու, քաղաքականացնելու, կաշառվողներին գիտակցության

բերելու: Կուսակցությունների բանուգործը ժողովրդի հետ ահա այս աշխատանքն է և ոչ թե օտար դեսպանատների առջև քարշ գալը:
Ես համոզված եմ, որ եթե կուսակցությունների ներկայացուցիչները ընտրահանձնաժողովներում իսկապես իրենց կուսակցության ներկայացուցիչները լինեին և հավատարմության ու բանականության պակաս չունենային,մենք ունենալու էինք ավելի լավ ընտրություններ: Այնինչ, ընտրահանձնաժողովներում, հաճախ, որևէ քաղաքական ուժ չներկայացնող մարդկանցից մի այնպիսի խումբ է գոյանում, որից դժվար է արդար արդյունք ակնկալել: Վերջապես, պետք է խոստովանել, որ որքանով կեղծվում են ընտրությունները, այնքանով էլ անզոր են կուսակցությունները: Մենք նույնպես, իբրև կուսակցություն, անզորություն ենք ցուցաբերել: Դաշնակցությունը պետք է համապատասխան որակ և ուժ կուտակի՝ թույլ չտալու համար ընտրակեղծիք ու անարդարություն:
"Դրոշակ" – Այս ընտրությունների արդյունքում, քաղաքական ուժերի նոր վերադասավորումներով, կբարելավվի՞, կկարգավորվի՞ հանրապետության քաղաքական կյանքը:
Հր. Մարգարյան. – Մեր քաղաքական դաշտը առողջ չէ: Իշխանությունների և ընդդիմության հարաբերություններում գոյություն ունեն վարվեցողության նորմեր, որոնք երկուստեք պիտի չխախտվեն: Մեզանում նույնիսկ նույն դաշտում գտնվողներն են միմյանց նկատմամբ տմարդություն դրսևորում: Մենք պետք է դուրս գանք անընդմեջ առճակատման մթնոլորտում լուծումներ փնտրելու շրջապտույտից: Այդ փնտրտուքը մարդկային հսկայական էներգիայի իզուր վատնում է:
Իշխանությունը ընդդիմությանը ոչնչացնելու նպատակ պիտի չհետապնդի, չարհամարհի դիմացինին, առճակատում չփնտրի: Ընդդիմությունը պիտի դիմանալու, կայանալու հնարավորություն ունենա, մասնակից լինի երկրի պետականաշինության գործին, հենց նա պետք է մասնակից լինի վերահսկողական օղակների աշխատանքներին, ուր, հաչս միջազգային հանրության, ազգային միասնական կեցվածքների ձևավորման անհրաժեշտությունը կա, հենց նա պետք է մասնակից լինի Անվտանգության խորհրդում: Իսկ ընդդիմությունը ամեն օր ու ամեն գնով իշխանափոխության պիտի չձգտի, իշխանափոխությունը իրականացնի ընտրությունների միջոցով: Այլ խոսքով՝ իշխանությունը պիտի առիթ ու հնարավորություն տա ընդդիմությանը՝ օրինական և արդյունավետ այլընտրանք դառնալու, իսկ ընդդիմությունը՝ աշխատելով, պայքարելով սպասի հաջորդ ընտրություններին:
Ամեն անգամ, երբ ՀՀ ներքին կացությունն ենք քննարկում և անդրադառնում դառնություններին, սխալներին, տգեղ երևույթներին, թերություններին, դժվարություններին, ակամա մտածում ես՝ ճի՞շտ ենք վարվում արդյոք, հապա մեր հայրենակիցնե՞րը , սփյուռքում ապրողները, մեզ լսելով, հուսախաբ չե՞ն լինի, նրանց մեջ ինչ-որ բան չի՞ կոտրվի: Բայցև միևնույն ժամանակ ծնվող պոռթկումն է արդարացի. Հայրենիքը, ախր, տիկնիկ չէ, որ միշտ գեղեցիկ ու անթերի լինի: Երկիր է, որը եթե շատ հարցեր ունի սրբագրելու, շտկելու, կառուցելու, ապա նաև կարիքն ունի հայրենասերների, նվիրյալների: Մեզանից յուրաքանչյուրի կարիքն ունի: Հայրենասիրությունը նաև քաղաքական երևույթ է և պետք է հիմնված լինի առարկայական տեղեկատվության վրա:
Երկրի թերություններն ինձ չեն մտահոգում, ավելի ճիշտ՝ թերություններն ինձ հուսախաբ չեն անում և ոչ մեկին թող հուսախաբ չանեն: Եթե երկրում ամեն ինչ լավ լիներ, մեր կարիքը չէր զգացվի, և մենք, մի կողմ քաշվելով, մեր բոստանը կմշակեինք, ինչպես ժամանակին երազում էր երջանկահիշատակ Գևորգ Չաուշը:
Մենք մեր երկրում փորձում ենք պայքարով ստեղծել մի երկիր, մի Հայրենիք, որը նախանձելի լինի, որտեղ հայ մարդը կարողանա ապահով զգալ իրեն, որտեղ հայ մարդը չճնշվի, որտեղ հայ մարդը կարողանա իր տունը հիմնել, ստեղծագործել ու զարգանալ:
Մենք միտում ունենք ամենալավ երկիրը ստեղծել և, հավատացեք, որ կկարողանանք, որովհետև ունենք թե ծրագիր, թե հեռանկար, ունենք կազմակերպվելու բավարար ներուժ և քաղաքական անհրաժեշտ կամք:
Եվ այս սուրբ գործին բոլորը պիտի մասնակից լինեն:



ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ծնվել է 1883 թվականին Ջավախքի Ախալքալաք քաղաքում:ՀՅԴ անդամ : Իրավաբան:Հայաստանի առաջին հանրապետության Արդարադատության նախարար:Հեղկոմի օրերին ձերբակալվել է ու բանտարկվել Երևանի Չեկայի բանտում: Շնորհիվ Փետրվարյան ապստամբության ազատվել է բանտից և լքել հայրենիքը:Խմբագրել է "Ազատ Հայաստան" օրաթերթը և "Հայրենիք" ամսագիրը:Մահացել է Բոստոնում, 1968 թվականին:

ԿՅԱՆՔԻՍ ԳՐՔԵՆ

(Հատված հուշերից)

Հիշեցի հանկարծ, որ Մայիս 28-ն էր՝ Հայաստանի անկախության երկրորդ տարեդարձը: Հիշեցի նաեւ, որ տեղի պիտի ունենար մեծ զորահանդես, ինչպես և մաղթանք Կարսի պատմական մայր տաճարին մեջ:

Հազիվ վերջացուցած էինք մեր նախաճաշը, երբ մեզի այցելության եկան խումբ մը ընկերներ: Եկած էին հանդիսություններու ընթացքին ուղեկցելու մեզի:

Ուղղվեցանք դեպի մայր տաճարը: Փողոցներուն մեջ սարքված էին կամարներ՝ զարդարված ծառերով ու ծաղիկներով: Ալեքսանդրյան պողոտային վրա հանդիպեցանք հսկա թափորի մը: Դժբախտաբար, ինչպես իմացանք, մենք ուշացած էինք: Մաղթանքն ու զորահանդեսը վերջացած էին արդեն, և ժողովուրդը, թափոր կազմած, կանցներ քաղաքի գլխավոր փողոցեն:

Զոր. Փիրումյան, որ Կարսի կոմենդանտն էր ու զորքերու հրամանատարը, Կարսի քաղաքագլուխ Հ. Նոհրատյանը և ինձի ուղեկցող ընկերները խնդրեցին, որ կառավարության կողմե ողջույնի խոսք ըսեմ ժողովուրդին:

Երբ թափորը կանգ առավ, բարձրացա աթոռի մը վրա, կառավարության կողմե ողջունեցի Կարսի ժողովուրդը եւ գնահատական խոսքեր ուղղեցի անոր, որովհետեւ քանի մը օր առաջ, հերոսական ճիգով մը ան ճնշած էր բոլշեւիկյան ապստամբությունը, ավելի ճիշտը՝ դավադրությունը: Եվ ըսի իմիջիայլոց.

«Քաղաքական հաստունության եւ անձնվեր հայրենասիրության գերագույն ապացույցը տվավ Կարսի ժողովուրդը իր հերոսական ճիգով եւ այդ կերպով անգնահատելի ծառայություն մատուցեց Հայաստանի Հանրապետության, որի անկախության երկրորդ տարեդարձը տոնում ենք այսօր այսքան հանդիսավորությամբ»:

Երբ խոսքս վերջացուցի, քաղաքագլուխ Հ. Նոհրատյան, մոտենալով ինձի, փսփսաց ականջիս, որ զոր. Փիրումյան ու սպաները դժգոհ էին, որ զորքի մասին ոչինչ էի ասած: Թեեւ այդ ըրած էի գիտակցաբար, որովհետեւ զորքը (խոսքս կանոնավոր զորքի մասին է) ցավալի վարանումներ էր ունեցած ապստամբության օրերուն, բայց, երբ թափորը իր առաջընթացին ատեն կրկին կանգ առավ ռուս-տաճկական պատերազմի հուշարձանին առջեւ, բարձրացա հուշարձանի պատվանդանին վրա եւ խոսքս այս անգամ ուղղեցի զորքին, որուն մեջ էր նաև 300 զինված սասունցիներու ձիավոր խումբը:

«Հայաստանի զորքը, մասնավորապես Կարսի պահակազորքը,- ըսի,- թեեւ փոքրիկ վարանումներ ունեցավ, բայց իր առողջ բնազդով եւ բնածին հայրենասիրությամբ ի վերջո գտավ իր ճանապարհը, որի շնորհիվ նա կարողացավ հավատարիմ մնալ հայ ժողովրդին եւ Հայկական անկախ պետության: Մեր զորքը, բարեբախտաբար, ժողովրդական զորք է, ժողովուրդից կտրված մի առանձնաշնորհյալ դասակարգ չէ,ուստի `չէր կարող չլինել, ի վերջո, մեր ժողովուրդի հետ, հակառակ բոլշեւիկյան բոլոր գրգռություններին: Այդ էր պատճառը, որ մենք գրեթե անարյուն կերպով անցկացրինք վերջին տագնապը, որ սպառնում էր տանել մեզ դեպի կործանում: Այդ էր պատճառը, որ այնքա՛ն դյուրությամբ խորտակվեցին խառնակիչներն ու դավաճանները: Այդ էր, վերջապես, պատճառը, որ այնքան փայլուն կերպով հաղթանակեց մեր ժողովուրդի եւ ժողովրդական բանակի կամքը: Կեցցեն հայ զինվորներն ու սպաները, որոնք, այս տագնապալի օրերին, անձնվիրաբար պաշտպանեցին մեր Հանրապետության սահմանները, ճնշեցին մեր ներքին թշնամիներին եւ այսօր էլ կեցել են իբրեւ արթուն ու քաջ պահակները Հայաստանի ազատության:Կեցցե՛ հայկական բանակը: Կեցցե՛ ազատ,

անկախ եւ միացյալ Հայաստանը, որի մեծ տոնը տոնում ենք այսօր՝ լի հավատքով ու վառ հույսերով՝ դեպի մեր ազգային լավագույն ապագան»:

Պետք է խոստովանիմ, որ այս երկու ճառերուն համար ալ ես բնավ պատրաստված չէի եւ թող զարմանալի չթվի, որ մտքես իսկ չէր անցած, թե այդ օրը պիտի ստիպվեի մեր կառավարության կողմե խոսելու բազմահազար ժողովուրդին եւ զորքին առջեւ: Բարեբախտաբար, հաջող անցավ:

Հանդեսը թափորով վերջ գտավ հունական ազգային խորհուրդի շենքին առջեւ: Այստեղ թե մերոնց եւ թե հույներուն կողմե բարեկամական սրտառուչ ճառեր խոսվեցան: Ասիկա քիչ մը անսպասելի էր, որովհետեւ Կարսի հունական ազգային խորհուրդը, ռուսական եւ թրքական ազգային խորհուրդներուն միացած՝ բավական կասկածելի դիրք էր բռնած բոլշեւիկներու ապստամբության ժամանակ եւ նույնիսկ բավական տգեղ դեր ալ խաղացած էր: Սակայն, մերոնք քաղաքական նկատումներով չափազանց ներողամիտ էին գտնված եւ խնայած էին հույներուն: Մյուս կողմե՝ հույները իրենք եւս, կարծես ըմբռներ էին իրենց սխալը եւ իրենք զիրենք կպահեին այնպես, որ կարծես որեւէ անախորժ կամ անպատեհ բան ըրած չէին:

Թուրքերը եւ ռուսները շատ ավելի անհաշտ ու վնասարար դիրք էին բռնած մեր Հանրապետության հանդեպ: Ուստի անոնց հանդեպ չկար եւ չէր կրնար ըլլալ նույն ներողամիտ վերաբերումը: Ձերբակալված էին թե թուրքերու եւ թե ռուսերու ազգային խորհուրդներուն անդամները եւ պիտի դատվեին շուտով: Սակայն, ռուսներու հանդեպ մերոնք համեմատաբար ավելի մեղմ էին, թեեւ անոնք թշնամական ցույցեր էին ըրած մեր պետության դեմ եւ ամեն կերպ օգնած էին բոլշեւիկ դավաճաններուն:

***

Հաջորդ առտու Մելքումյանի հետ այցելեցի բանտը, ուր մոտ երկու հարյուր բոլշեւիկ բանտարկյալներ կային՝ մեր Հանրապետության դեմ ապստամբած ըլլալու մեղադրանքով:

Բանտապետը ցարական օրերեն մնացած փորձված ռուս պաշտոնյա մըն էր, որ, ըստ երեւույթին, բարեխղճությամբ կկատարեր իր պաշտոնը: Բանտը մաքուր կպահեր, եւ ամեն բան կանոնավոր էր:

Այցելություն մը տվի բանտարկյալներուն: Անոնցմե ոմանք խնդրեցին արագացնել իրենց գործը: Այնպես կխոսեին, որ կարծես թե բանտարկված էին թյուրիմացությամբ եւ ոչ թե ապստամբության մասնակցած ըլլալու ծանր ամբաստանությամբ:

Բանտեն ուղղակի մեկնեցա զոր. Փիրումյանի մոտ: Անոր բնակած տունը կգտնվեր ձորին մեջ՝ պետական խճուղիին մոտ: Կարծես եվրոպական վիլլա մը ըլլար ամառանոցային վայրի մը մեջ:

Զոր. Փիրումյան լավ ընդունելություն մը ըրավ, բայց շատ մը բաներու մասին գանգատեցավ: Ցարական օրերու սպա մըն էր եւ ինքզինք խորթ կզգար Հայաստանի իրականության: Իր հոգիի խորքին մեջ կարծես չէր ալ համակրեր մեր պետական անկախության: Մեկ խոսքով՝ մեր Հանրապետության սրտանց նվիրված զինվորականի մը տպավորությունը չձգեց վրաս: Ըստ երեւույթին, շատ ալ չէր ուզեր, որ ես այցելեի բերդի ամրությունները: Բավական մը զիս իր մոտ պահելե ետք, ըսավ, թե բերդը բարձրանալու համար արդեն ուշ էր:

Որոշեցինք հաջորդ օրը, վաղ առավոտյան, միասին այցելել ամրությունները:

Երբ պիտի բաժանվեի իրմե, ցույց տվավ ինձի հեռագիր մը, զոր ինքը պատրաստած էր՝ Երեւան ղրկելու համար: Հեռագիրը կհաղորդեր.

«Քանի մը օր առաջ թուրք զորքերը, օգտվելով բոլշեւիկյան ապստամբությունեն, հարձակեցան մեր դիրքերուն վրա եւ վտանգեցին Կարսը: Այժմ սակայն մեր զորքերը հետ մղեցին թշնամին եւ հաջողեցան վերականգնել նախկին գոյավիճակը, որով վերացավ Կարսին սպառնացող անմիջական վտանգը»:

- Քանի մը օր առաջ,- ըսի,- իր մեկ ուրիշ հեռագրով Կարսի հրամանատարությունը գրե-

թե խուճապային տրամադրություններ առաջացուց Ալեքսանդրապոլի մեջ, մինչդեռ, երբ նույն օրը Ալեքսանդրապոլեն ես Կարս եկա, որեւէ խուճապի կամ անհանգստության նշույլ իսկ չտեսա:

Եվ երբ իմ զարմանքը հայտնեցի այդ առթիվ ու բացատրություն ուզեցի, զորավարը խորհրդավոր ժպիտով մը պատասխանեց.

- Այո, դրությունը մի քանի օր առաջ լուրջ էր: Բայց այժմ, շնորհիվ մեր քաջարի բանակին, ոչ մի վտանգ չի սպառնում մեզ այլեւս:

- Մի բան, սակայն, տարօրինակ է,- դիտել տվի ես,- երեկ ես առիթ ունեցա խոսելու Սելիմի շրջանի կոմիսարին հետ, որ նոր էր եկել Սելիմից եւ ներկա էր եղել վերջին անցուդարձերին: Նրա պատմելով՝ ոչ մի լուրջ բան չէր եղել հենց սկզբից: Մեր սահմանային զորքի ժամանակավոր նահանջն էլ անհասկանալի է, քանի որ քիչ անց հնարավոր է եղել շատ փոքրիկ ուժերով հետ մղել թշնամուն:

- Կոմիսարը զինվորական մարդ չէ եւ ոչ մի արժեք չունի նրա կարծիքը,- առարկեց զորավարը:

Երբ մեր այս խոսակցությունեն ետք առիթ ունեցա խոսելու այս մասին Կարսի մեր քանի մը ընկերներուն հետ, անոնք ինձի ըսին, թե Կարսի մեր զորավարները երբեմն դիտմամբ կչափազանցնեն ամենաչնչին վտանգն իսկ, որպեսզի ետքը պարծենան իրենց տարած «մեծ» հաղթանակներով:

- Հաստատ իմացեք,- կհավաստիացներ Կարսի մեր կարեւոր ընկերներեն մեկը,- որ Սելիմի ամբողջ միջադեպը սարքովի մի բան է՝ շքանշաններ եւ աստիճաններ ստանալու համար: Մի մոռնաք, որ մեր զորավարները դեռ չեն կարողացած ազատվել ցարական օրերի խաղերից: Երբեք չխաբվեք նրանց զեկուցումներից:

Այս հարցը եւս նշանակեցի ծոցատետրիս մեջ, որպեսզի այդ մասին խոսեի մեր ռազմական նախարարին հետ:

***

Հաջորդ առտու կանուխ կառքով գացի նորեն զոր. Փիրումյանի մոտ՝ միասին այցելելու համար Կարսի բերդը:

Ճանապարհը սքանչելի էր: Գեղեցիկ, հարթ եւ մաքուր պետական խճուղին իր անվերջ զիգզագներով կտաներ մեզ դեպի ամրություններ: Ձորի մեջեն հետզհետե կբարձրանային: Բազմաթիվ գեղեցիկ շենքեր կզարդարեին ձորը, բոլորն ալ շինված ռազմական կարիքներու համար: Այսօր անոնց մեծ մասը հատկացված էր որբանոցներու:

Դեռ չէինք հասած առաջին ամրության, երբ հանկարծ կանգ առավ մեր ինքնաշարժը: Պարզվեցավ, որ ջուրն էր գոլորշիացած եւ մեքենային մեջ ալ բան մըն էր փչացած: Կես ժամ տեւեց, մինչեւ որ ջուր բերվեցավ եւ ինքնաշարժը կրցավ շարժիլ կրկին: Բայց հազիվ քանի մը հարյուր քայլ առաջացած էինք, երբ նորեն կանգ առավ:

Ստիպված էինք վար իջնել եւ հետիոտն երթալ դեպի բերդին առաջին ամրությունը:

Մեզ դիմավորեց ամրության պահակազորի հրամանատարը՝ հայ սպա մը: Ամրության բարձրություններն նայեցանք մեր շուրջը: Ընդարձակ հորիզոն մը բացվեցավ մեր առջեւ: Հստակորեն կերեւեին դեպի Սարիղամիշ տանող պետական խճուղին եւ երկաթուղին: Կերեւեին նաեւ շատ մը գյուղեր, ինչպես եւ Կարսի բերդին մյուս ամրությունները: Ամրությունը, որուն բարձունքեն կդիտեինք շրջակայքը, կիշխեր բոլորին վրա: Անիկա, ինչպես բացատրեց զոր. Փիրումյան, պատմական մեծ դեր էր կատարած թե տաճիկներու եւ թե ռուսերու համար:

Հավատալս չէր գար, որ զինվորական մեր փոքրիկ ուժով պիտի կարենայինք պաշտպանել այդ հսկայական բերդը՝ իր հոյակապ բոլոր ամրություններով...

Ուզեցի տեսնել զինվորները եւ քիչ մը խոսիլ անոնց հետ: Մոտեցանք: Շարքով կեցած էին: Նկատեցի, որ բավական վատառողջներ կային անոնց մեջ: Հայացքները դուր չեկան ինձի: Կարգապահությունն ալ պակաս կթվեր:

Քանի մը հարցումներ ուղղեցի զինվորներուն՝ իրենց կերակուրին, անկողիններուն,


Կարսի կամուրջը

հագուստի մասին, եւ, պատասխանները ստանալե ետք, դուրս եկանք: «*Անկասկած, սրանց մեջ բոլշեւիկներ* կան». մտածեցի:

- Ինչպե՞ս են զինվորների քաղաքական տրամադրությունները,- հարցուցի ամրության հրամանատար սպային, երբ բավական հեռացանք անոնցմե:

- Ինչ-որ հուզում, խլրտում կա նրանց մեջ վերջերս,- պատասխանեց ան,- բայց չեմ կարծում, որ նրանք ուղղակի կապեր ունեն բոլշեւիկ գործակալների հետ: Իսկ եթե ունեն, ես մինչեւ այժմ չկարողացա հաստատել: Կարծում եմ, որ անհրաժեշտ է մասնավոր հոգ տանել մեր զինվորների քաղաքական դաստիարակության:

Դժբախտաբար, բերդի մյուս ամրությունները այցելելու ժամանակ չունեի այլեւս, որովհետեւ նույն օրը, ցերեկվան ժամը մեկին գնացքով անպայման պետք է վերադառնայի Ալեքսանդրապոլ:

Մեր ինքնաշարժը, բարեբախտաբար, սկսած էր կրկին շարժիլ: Նստեցանք եւ հասանք մինչեւ ձորը: Բայց հոն դարձյալ կանգ առավ: Ստիպվեցանք քալելով երթալ զորավարին տունը, ուր ան պատվիրեց լծել իր կառքը, որ զիս, վերջապես, հասցուց կայարան:

***

Չէի կրնար այլեւս մեկնիլ մեր մասնավոր վագոնով, որովհետեւ ուղեկից ընկերներս՝ Հ. Մելիքյանն ու Ավ. Օհանջանյանը, կառավարական գործով շաբաթ մը եւս Կարս պիտի մնային: Զոր. Փիրումյանի կարգադրությամբ ինձի հատուկ բաժին մը հատկացուցին Ալեքսանդրապոլ մեկնող գնացքի առաջին կարգի վագոնին մեջ: Երբ զորավարին հետ կայարան հասանք եւ տեղավորվեցա իմ բաժնին մեջ, գնացքը անմիջապես շարժեցավ:

Ճամփորդներ չափազանց շատ կային, եւ ես թույլ տվի, որ անոնցմե քանի մը հոգի փոխադրվեին իմ կուպեն:

Շուտով իմ պատահական ուղեկիցները սկսան հետաքրքրական խոսակցություն մը: Անոնցմե մեկը ծերունի մըն էր, որ Հայաստան եկած էր առեւտրական գործերով: Կպատմեր, թե փորձեր էր ըրած սկսելու շարք մը առեւտրական ձեռնարկներ, բայց չէր հաջողած: Այժմ եկած էր Կարս ու Կաղզվան՝ քանի մը վագոն աղ առնելու եւ առեւտուր ընելու համար: Բայց դարձյալ չէր հաջողած:

- Զարմանալի չէ,- ըսավ ան,- որ Կարսի նահանգում անգամ, ուր կգտնվին Կաղզվանի նշանավոր աղահանքերը, ժողովուրդը նեղվում է աղի պակասից: Մինչդեռ, եթե աղահանքերը,

փոխանակ պետականացման ենթարկելու, մասնավոր կապիտալիստների ձեռքում լինեին, եւ աղի առեւտուրը միանգամայն ազատ լիներ, աղը ոչ միայն պիտի բավեր մեր ժողովուրդին, այլեւ կարելի պիտի լիներ արտածել այն: Աղի փոխադրության համար պետությունը զանազան սակագներ է նշանակում: Մինչդեռ սակագները, մեր թղթադրամների անընդհատ անկման պատճառով, միանգամայն անընդունելի են փոխադրողների համար: Եվ փոխադրողները փախչում են, որովհետեւ ձեռնտու չէ աղ փոխադրել պետության սակագներով: Թույլ տվեք, պարոններ, որ լինի ազատ առեւտուր: Եվ վստահ եղեք, որ դա միակ խելացի ու նպատակահարմար ելքն է մեր պայմաններում:

- Բայց ինչպե՞ս աժան աղ տանք ժողովրդին,- հարցուցի՝ միջամտելով խոսակցության:

- Ձեր բարի ցանկությունը ես լավ եմ հասկանում: Բայց դուք մոռանում եք, որ ձեր քաղաքականության հետեւանքով մեծապես դժվարանում է թե աղի փոխադրությունը եւ թե վաճառքը: Ավելին. այդ է պատճառ դառնում, որ սպեկուլացիա (չարաշահություն) լինի մեծ չափով:

- Երբ գործը ավելի լավ կազմակերպվի, սպեկուլացիա չի լինի կամ շատ քիչ կլինի,- ասի:

- Նույնը չէ՞նաեւ խոտի առեւտուրը,- շարունակեց ան,- Կարսի նահանգում միլիոնավոր փութերով խոտ կա, խոտը փտում է, փտում է նույնիսկ հավաքած խոտը: Բայց կարելի չէ ազատ առեւտուր անել, արտածել, թեեւ դա կարող է երկրի եկամուտի լավ աղբյուր լինել: Հետո, եթե թույլ եք տալիս Հայաստանից դուրս տանելու որեւէ ապրանք, կաշկանդում եք վաճառականական այնպիսի ձեւականություններով եւ պայմաններով, որ նա երկրորդ անգամ այլեւս փորձ չի անի ապրանք առնելու կամ բերելու: Հայաստան եկել էի առեւտուր անելու, բայց դառն փորձով համոզվեցի, որ չեմ կարող առեւտրով զբաղվել այստեղ: Եվ ես այժմ ստիպված եմ հեռանալ Հայաստանից:

- Ինչ որ ասում եք, ճիշտ է,- դիտել տվավ երիտասարդ մը, որ, ինչպես երեւեցավ շուտով, նույնպես վաճառական էր,- Հայաստանում կամ Հայաստանի հետ առեւտուր անելը շատ դժվար է: Ես, օրինակ, Պոլսից մի քանի վագոն ապրանք՝ մանուֆակտուրա բերել էի Հայաստան: Բայց ապրանքները ծախելու պայմանները այնքա՜ն ծանր են, որ երկրորդ անգամ հազիվ թե ուզեմ ապրանք բերել արտասահմանից: Իսկ Հայաստանից դուրս ապրանք տանելը նույնպես կապված է շատ մեծ դժվարությունների: Օրինակ՝ իմ բերած ապրանքի փոխարեն գնել եմ գորգեր արտածումի համար, իսկ ֆինանսական նախարարությունը պահանջում է, որ այդ բոլոր գորգերը հատուկ քննության ենթարկվեն մի հատուկ հանձնախումբի կողմից, որպեսզի, իրենց ասելով, գեղարվեստական բացառիկ արժեք ունեցող գորգերը երկրից դուրս չտարվեն: Բացի այդ, անբարեխիղճ պաշտոնյաներ էլ կան, որոնք առիթներ են փնտրում գործը դժվարացնելու, ձգձգելու, որպեսզի ստիպեն կաշառք տալ:

- Դուք խոսում եք կաշառակեր պաշտոնյաների մասին,- միջամտեցի ես,- բայց որեւէ փաստ չեք բերում: Ինչո՞ւ կրկնում եք ուրիշների ասածները՝ առանց փաստացի հիմքեր ունենալու: Իսկ եթե դուք անձամբ հանդիպած եք կաշառակեր պաշտոնյաների, ինչո՞ւ նրանց չեք հանձնած արդարադատության: Չէ՞ որ դուք գիտեք, որ կաշառակերությունը արգիլված է օրենքով եւ պատժելի է խստորեն:

Իմ ուղեկիցները խորհրդավոր ժպիտներ փոխանակեցին իրարու հետ, եւ անոնցմե մեկը՝ ծերունին, ասավ.

- Մենք ինչ շահ ունենք մատնելու կաշառակեր պաշտոնյաներին, որոնց միջոցով գործ ենք կարգադրում: Հետո, ձեր տված ռոճիկները բացարձակապես անբավարար են, եւ ձեր պաշտոնյաները, եթե կաշառք չվերցնեն, սովից կմեռնեն:

- Բայց եթե դուք հայ պետության քաղաքացիներ եք, իբրեւ այդպիսիներ, պարտավոր եք օգնել կառավարության, որպեսզի նա կարողանա ավելի լավ վիճակի մեջ դնել պետական պաշտոնեությունը եւ վերջ տալ կաշառակերության:

Հարկավ, այս դիտողությունները կընեի՝ առանց անգիտանալու, որ Հայաստանեն անհամեմատ ավելի հարուստ, կանոնավորված եւ բարգաված արեւմտյան երկրներու մեջ շատ ավելի լավ վարձատրվող պաշտոնյաներն անգամ կզբաղեին կաշառակերությամբ: Մեր մանուկ Հանրապետությունը, որ կատարյալ քաոսե մը կյանքի կոչված էր, չէր կրնար մեկ անգամեն փորձված եւ անկաշառ պաշտոնյաներ ունենալ, մանավանդ, որ մնայուն եկամուտներե տակավին զուրկ ըլլալով, շատ աղքատ էր՝ անոնց գոհացուցիչ ռոճիկներ տալու համար: Եվ, եթե հաստատած էր բամբակի եւ աղի մենաշնորհներ, այդ ալ ըրած էր ժամանակավոր կերպով, որպեսզի այդ ձեւով կրնար գեթ պստիկ եկամուտ մը ունենալ: Մոռնալու չէ, վերջապես, որ մեր պետության այդ սկզբնական շրջանին, երբ երկիրը տնտեսապես քայքայված էր պատերազմի, հեղափոխության եւ ներքին կռիվներու հետեւանքով, անկարելի էր ժողովուրդեն տուրքեր գանձել՝ պետական մեքենան եւ բանակը կարենալ պահելու համար բավարար:

***

«Դրոշակ»-ի խմբագրակազմի սիրելի ընկերներին

Երկար ընդմիջումից հետո, ահա իրականանում է Հայ Հեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ «Դրոշակ»-ի վերահրատարակումը:

Ինչպես միշտ՝ Դաշնակցության համար կյանքն ու գործը -կենսափորձը - թեեւ ընդմիջմամբ, բայց նոր փուլ թեւակոխելու հնարավորություն տվեց եւ ահավասիկ՝ եռամսագրային պարբերականը փոխարինվեց ամսաթերթով, ինչն ավելիով է նպատակահարմար մեր այսօրյա ծրագրային, քաղաքական ու քարոզչական գործունեության համար:

Հրապարակ իջած »Դրոշակ«-ակիրներիդ մաղթում ենք Քրիստափորաշունչ, Զավարյանավայել եւ Ռուստոմադրոշմ ավյուն ու կամք՝ ՀՅԴ գաղափարային պատվանդանը առավել ամուր հիմքերով պահելու-պահպանելու նվիրական գործում:

«Ալիք»-ի խմբագրակազմ, Թեհրան

ԱՂԱՍԻ ԹԱԴԵՈՍՅԱՆ
պատմաբան գիտությունների թեկնածու,
“ ՎԱՐ “մշակութային նախաձեռնությունների կենտրոն

Աղասի Թադեւոսեանը ծնվել է 1966 թվականին Երեւանում: 1991 թ. ավարտել է Երեւանի Պետական համալսարանի Պատմության ֆակուլտետը եւ 1994 թ. սպացել պատմական գիտությունների թեկնածուի կոչում: Ներկայումս Հ.Հ. Գիտությունների Ազգային Ակադեմիայի Հնագիտության եւ Ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող է եւ Ե.Պ.Հ. դասախոս: Դասավանդում է մշակութաբանություն, քաղաքական մշակութաբանություն եւ էթնիկ հոգեբանություն առարկաները: Տարբեր տարիներին աշխատել է Ռազմավարական եւ Ազգային Հետազոտությունների հայկական կենտրոնում, Մարդու Իրավունքների ու ժողովրդավարության ինստիտուտում: Որպես ազգային փորձագետ համագործակցել է մի շարք միջազգային կազմակերպությունների հետ:

2005 թ. համախոհների հետ հիմնադրել է «ՎԱՐ» մշակութային նախաձեռնությունների կենտրոնը եւ իրականացնում է հայկական մշակութային արժեքների քարոզչությանն ու ճանաչողության բարձրացմանն ուղղված հրատարակություններ:

Զբաղվում է մշակոյթի պատմության, ավանդական եւ ժամանակակից մշակութային գործընթացների ուսումնասիրությամբ: Հեղինակ է տասնհինգ հեղինակային եւ համահեղինակային գրքերի ու գրքույկների, մի քանի տասնյակ գիտական եւ ավելի քան հարյուր հրապարակախոսական հոդվածների:

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Հայաստանում ժողովուրդն իրեն բնութագրում է որպես հավատը եւ հույսը կորցրած: Հավատ ասելով՝ ամենեւին էլ նկատի չունենալով դրա կրոնական առումը: Մարդիկ չունեն հավատ ու հույս, որովհետեւ մեր կյանքում նվազել է այնպիսի արժեքների կարեւորումը, որոնք առաջացնում են հոգեւոր պահանջմունքների բավարարման համընդհանուր զգացում: Այնպիսի մի զգացում, ինչը միմյանց անձնապես անծանոթ մարդկանց դարձնում է հոգեհարազատ, միավորում հանրային կյանքի իմաստավորման ընդհանրական նպատակների ու դրանց իրագործման համագործակցության շուրջ:

Վերջին տարիներին մեզանում կարծես չեն գործում այն արժեքները, որոնք ազգը կազմող առանձին անհատների մեջ ձեւավորեն երեւույթները համատեղ իմաստավորելու եւ կյանքի կոչելու վերապրման ընդհանրականությունը: Եվ ընդհանրապես, որքան էլ տարօրինակ թվա, հարյուրամյակներով անկախ պետականություն փափագած եւ ընդամենը տասնհինգ տարի առաջ այն ձեռք բերած ժողովրդի վարքը սեփական պետականության հանդեպ չափազանց անտարբեր է: Հարց է առաջանում. ի՞նչ է պատահել մեզ, ինչո՞ւ այն ժողովուրդը, որն ընդամենը տասնհինգ տարի առաջ հստակ կարո-

գերխնդիր՝ մարդկային ստեղծագործ ներուժի բացահայտման, կարգացման ու իրացման հնարավորությունների ընդլայնման ճանապարհով շարժընթացորեն վերարտադրվելը: Թե մարդկության եւ թե մեր ազգի պատմական փորձը հուշում է, որ, որպես կանոն, նշված գերակայությունը կորցրած ազգերն ու պետությունները, անկախ իրենց ռազմական ուժից ու տնտեսական հզորությունից, զրկվել են ինքնիշխանությունից, հաճախ ընդհանրապես դադարել գոյություն ունենալուց, քանի որ սպառել են ուժն ու հզորությունը պայմանավորող հավաքական կյանքի, այսինքն՝ պետականություն ունենալու եւ որպես ազգ հանդես գալու իմաստը,ինչը Հայաստանի ժողովուրդն անկախության ձեռք բերման նախօրեին՝ 1988-1991 թվականներին հստակ ձեւակերպել էր:

Ձեւավորման այդ փուլում անկախ պետականությունն ուներ իր հստակ արժեւորումը: Այսինքն՝ մարդիկ որոշակիորեն իմաստավորում էին սեփական պետություն ունենալու անհրաժեշտությունը եւ ունեին իրենց գաղափարներն ու պատկերացումներն ազգային պետության վերաբերյալ: Ըստ այդմ՝ պետությունը պետք է ապահովեր.

- հասարակական կյանքում արդարության երաշխավոր սեփական իշխանություն ունենալու խնդիրը,
- Հայաստանի բոլոր բնակիչների համար ստեղծագործ գործունեություն ծավալելու ապատությունը եւ հնարավորությունների հավասարությունը,
- ազգային ունեցվածքի՝ մարդկային, բնական եւ արտադրական պաշարներն ի շահ ազգային եւ պետական կարգացման ու հզորացման ինքնուրույն տնօրինումը,

ղանում էր իմաստավորել անկախ պետականության ձեւավորման անհրաժեշտությունը, այսօր ոչ միայն անտարբեր է դարձել, այլ նույնիսկ քիչ չեն մարդիկ, ովքեր գտնում են, որ մենք մեկ չենք կարողանում կառավարել, մեկ անհրաժեշտ է օտարի ձեռքի տակ ապրել: Ինչո՞ւ մենք չենք սիրում մեր իշխանություններին, ինչո՞ւ նվիրված չենք մեր պետությանը եւ ինչո՞ւ մեր երկրում մարդիկ կորցրել են համատեղ կյանքի իմաստը:

Սրանք հարցեր են, որոնք խիստ արդիական են մեկ համար, սակայն դուրս են մնացել պետականաշինության առաջնահերթություններից՝ վիջելով տեղը տնտեսական ու ընկերային բնույթի գերակայություններին: Դրանք ոչ միայն առաջնահերթությունների թվում չեն, այլ ընդհանրապես չեն շոշափվում եւ չեն համարվում պետական եւ ազգային քաղաքականության խնդիրներ: Եթե փորձենք ընդհանրացված ձեւակերպել բարձրացվող հիմնախնդիրը, կարելի է ասել, որ Հայաստանի հասարակությունը եւ պետությունը հստակ չեն ուրվագծել այն գերակայությունները, որոնք ուղղված կլինեն ոչ միայն գոյատեւմանը, ժողովրդական արտահայտությամբ՝ «յոլա գնալուն», այլ մարդավայել ապրելուն ու կարգանալուն:

Ազգերն ու պետություններն ունեն մեկ հիմնական

- սեփական ուղին ճշտորոշելու վերաբերյալ որոշումների կայացման ինքնուրույնությունը,
- որպես ազգ, կյանքի ու վերարտադրության սեփական կենսական ու մշակութային տարածքի պաշտպանությունը[1]:

Այս արժեքները՝ որպես անկախության հաստատման գերակայություններ, ճշտորոշվեցին 1988-1991 թվականներին, լայնամասշտաբ հանրահավաքային ու հասարակական քննարկումների եւ մասնակցության պայմաններում: Սա մեկ համար այնպիսի մի ինքնատիպ նախադեպ էր, երբ ազգային շարժումը համաժողովրդական համաձայնության կայացման գործընթացում վերածվում էր քաղաքացիականի: Կարելի է ասել, որ անկախ պետության կայացման արժեքների ու գերակայությունների շուրջ ձեւավորվել էր համընդհանուր համաձայնության մթնոլորտ, եւ նորընտիր իշխանություններին ոչինչ չէր մնում անելու, քան կառուցել եւ իրականացնել պետության շինարարության քաղաքականությունը ազգային համաձայնության հրամայականների հիմքի վրա: Սակայն, ցավոք, այս նախադեպը չունեցավ իր տրամաբանական կարգացումը պետականաշինության փուլում, քանի որ նորանկախ Հայաստանում իշխանությունները հրաժարվեցին հասարակության հետ համագործակցության շարունակությունից եւ հանրապետության բնակչությանը օտարեցին պետական կառավարմանը մասնակցելու գործից: Սա հանգեցրեց կառավարող վերնախավի ու հասարակության միջեւ անջրպետի առաջացմանը, ինչն էլ թույլ տվեց հետագա տարիներին իրականացվող քաղաքականությունը կառուցել իշխանական վերնախավի ու հասարակական լայն խավերի շահերի հակասության մթնոլորտում: Հետեւանքն այն էր, որ արդեն առաջին տարիներին հասարակության մեջ կասկածներ առաջացան անկախության հռչակած արժեքների ու գերակայությունների նկատմամբ իշխանությունների հավատարմության առնչությամբ: Ժողովուրդն սկսեց մեղադրել իշխանություններին ի վնաս ազգայինի, անձնապաշտական ու հատվածական շահերին տուրք տալու մեջ: Սակայն ամենացավալին անկախության արժեքների նկատմամբ նախկին նվիրվածության թուլացումն էր, որը, ի վերջո, հանգեցրեց դրանցից հրաժարմանը: Մարդիկ հասկանում էին, որ անկախության շարժման առաջնորդները հրաժարվել են անկախ պետություն կերտելու արժեքային գերակայություններից, եւ պարզապես համակերպվելով իրավիճակին, նույնպես հրաժարվեցին այդ արժեքներից: Հավատի հիմքերը հասարակությունում երերացին, երբ իշխանական վերնախավի վարքում ազգային ու պետական շահի նկատմամբ խմբակային ու անձնական շահի գերադասության դրսեւորումները ակնառու դարձան: Դա հանգեցրեց այն բանին, որ անկախության դեռեւս առաջին տարիներին կառավարող վերնախավը կորցրեց հայերի համար իշխանության ընկալման առանցքային երկու հատկանիշները՝ օրինակելիությունն ու վստահելիությունը: Եթե իշխանությունը հասարակական կարծիքում կորցնում է այդ երկու հատկանիշները, այն այլեւս իշխանություն չէ, այլ հարստահարիչների մի խումբ, որոնց մարդիկ կարող են հանդուրժել բացառապես ուժային եւ ֆինանսական ճնշման մեխանիզմների գործարկման *հաշվին*: Ցավոք, ստեղծված իրավիճակում ժողովուրդը նույնպես հետամուտ չեղավ պետականության կերտման արժեքներին ու չմտավ դրանց պատասխանատվության ստանձնման տակ, այլ հայտնվելով անորոշության մեջ, հետեւեց «եղունգ ունես, գլուխդ քորի» ասույթին: Հետամուտ լինելով ֆիզիկական գոյատեւման ու կենսապահովման նվազագույն պահանջմունքների բավարարման խնդիրներին՝ ժողովուրդն աստիճանաբար ընդունեց նյութական արժեքների գերակայության օրըստօրե ճնշող ու ագրեսիկ

> Մարդու ու ազգայինի արժեվորման բացառիկ անտարբերության պայմաններում, երբ այս երկուսն էլ կարեվորվում են բացառապես որպես շուկայական ապրանքներ, տեղի է ունենում Հայաստանից ստեղծագործ մարդկային ներուժի աշխոյժ արտահոսք: Արտագաղթում է հատկապես այն ներուժը, որը չի կարողանում համակերպվել Հայաստանում տիրապետող արժեքային վերոնշյալ տհաս իրողություններին, ում համար մարդավայել կյանքը հանգում է ոչ միայն նյութական բարեկեցությանը, այլեւ հարգալից ու պատվարժան մարդկային փոխհարաբերությունների միջավայրում ապրելուն:

[1] .Այս ընդհանրացումը կատարվել է հեղինակի կողմից ըստ 1988-1991 թթ. հանրահավաքների ու դաշտային ազգագրական հետազոտությունների նյութերի:

դարձող սկզբունքը: Փաստորեն ստացվեց այնպես, որ, հայտնվելով գոյատեւման խնդիրների լուծման հրամայականի առջեւ, մարդիկ ընտրեցին դրանց լուծման հատվածական ճանապարհը: Ամեն ընտանիք իր խնդիրները լուծում էր ինքնուրույն, հաճախ այլոց հետ հարձակողական (ագրեսիվ) մրցակցության պայմաններում: Պատահական չէ, որ այդ տարիներին Հայաստանում տարածում ստացավ «Տեսնենք՝ այսօր ո՞ւմ տունն ենք քանդում, որ մերը սարքենք» տխուր ասույթը: Ընդամենը մեկ-երկու տարի առաջ փոխօգնության եւ համերաշխության սկզբունքներին գերադասություն տվող ժողովուրդը հայտնվեց «մարդը մարդուն գայլ» իրավիճակում:

Ըստ էության, հասարակությունում ձեւավորված կարծիքի համաձայն, անկախ Հայաստանի իշխանությունները հրաժարվեցին այն գերակայությունների իրագործումից, որոնք փոխհամաձայնության մթնոլորտում արժեւորվել էին որպես ազգային պետության գերակայություններ: Եվ, վերջին հաշվով, իշխանության հանդեպ վստահության կորուստը հասարակական գիտակցությունում ու վարքում հանգեցրեց պետության ու պետականության գաղափարի արժեզրկման: Դա տարածվեց նաեւ այն բոլոր պետական հաստատությունների ու խորհրդանիշների վրա, որոնք իշխանության նկատմամբ վստահության փուլում ունեին ազգային գերագույն արժեքների համարում: Հատկանշական է, որ անկախության ձեռք բերման սկզբնական շրջանում, երբ իշխանությունը դեռ չէր հասցրել օտարվել հասարակությունից, պետական հաստատությունները եւ խորհրդանիշները՝ ՀՀ եռագույն դրոշը, ՀՀ պետական զինանշանը, ՀՀ պետական հիմնը, ՀՀ նախագահի ինստիտուտը, ՀՀ խորհրդարանը Հայաստանի բնակչության մեծամասնության համար սրբազանացված արժեքներ էին: Մի բան, որ, ցավոք, բնութագրական չէ այսօրվա իրավիճակին:

Մեր կողմից բնակչության պահուստային մակարդակում գտնվող իդեալականացված արժեքների ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ իշխանության օրինակելիության ու վստահելիության պատշաճ վերականգնումը շատ կարճ ժամանակում կարող է հանգեցնել պետության, պետական խորհրդանիշների եւ հաստատությունների արժեքային կարգավիճակի վերելքի:

Այսինքն՝ այսօր Հայաստանի Հանրապետության համար հիմնարար նշանակություն ունի իշխանության բարեփոխման այնպիսի սկզբունքների որդեգրումն ու իրագործումը, որը կհանգեցնի հասարակական կյանքում համագործակցություն ձեւավորող արժեքային ընդհանրականության ու որակների ձեւավորմանը: Ավելի պարզ ասած՝ հասարակության համար իրագործելի պետք է դարձնել այնպիսի պետության ստեղծման հեռանկարները, որոնք մարդիկ երազել են ունենալ, որի գաղափարի շուրջ կարող են միավորվել այսօր փողի եւ ուժի դիրքերից միմյանց հակադրված հասարակական խմբերն ու հատվածականացած հանրությունը:

Մարդու ու ազգայինի արժեւորման բացառիկ անտարբերության պայմաններում, երբ այս երկուսն էլ կարեւորվում են բացառապես որպես շուկայական ապրանքներ, տեղի է ունենում Հայաստանից ստեղծագործ մարդկային ներուժի աշխույժ արտահոսք: Արտագաղթում է հատկապես այն ներուժը, որը չի կարողանում համակերպվել Հայաստանում տիրապետող արժեքային վերոնշյալ իրողություններին, ում համար մարդավայել կյանքը հանգում է ոչ միայն նյութական բարեկեցությանը, այլեւ հարգալից ու պատվարժան մարդկային փոխհարաբերությունների միջավայրում ապրելուն:

Այսօր Հայաստանի համար գերխնդիր է ոչ միայն տնտեսական վարգացումն ու աճը, այլ առավելապես մարդկանց համախմբող արժեքների վրա հենված հասարակական մթնոլորտի ձեւավորումը, ինչը կհանգեցնի պետականաշինության գործընթացին ազգային մասնակցության եւ փոխադարձ հավատի ու սիրո վրա հենված հասարակության ձեւավորմանը: Մարդը պետք է սիրի իր երկիրը: Սա այն է, ինչը մեկ ամենից շատ է պակասում:

Անշուշտ, հասկանալի է, որ վերը նշված գերխնդիրը ազգային հռչակելն ու հատկապես իրագործելը հակասում է դրամագլխի նախնական կուտակումը վայրենի ձեւով իրականացնող սակավապետական (օլիգարխիկ) խմբերի շահերին, որոնց կողմից թելադրվող արժեքային մթ-

նոլորտի պայմաններում համարյա անիրականանալի իդեալիզմ է թվում ցանկացած առողջ ու կառուցողական միտք կամ ծրագիր: Կարող ենք նորից կրկնել ծեծված այն միտքը, որ դրամագլխի կուտակման վայրի ճանապարհն անցել է նաեւ քաղաքակիրթ աշխարհը, ու մենք էլ պետք է անցնենք, եւ որ հատկապես առողջ գաղափարների իրագործումը դեռ երկար ժամանակ Հայաստանում կմնա որպես բարի ցանկություն:

Գիտակցել է պետք, որ ազգային մշակույթի ու արժեքների շուկայականացումը, ազգային պետականության գաղափարի ու արժեքի ածանցումը հատվածական խմբերի ու առանձին անձանց հարստության ու նյութական բարեկեցության շահերին ազգային առումով հեռանկարային չէ:

Իհարկե, դժվար է սահմանափակ ծավալներով մեկ հոդվածի շրջանակներում ելքեր ու լուծումներ առաջադրել, սակայն պետական քաղաքականության սկզբունքային մոտեցումները կարելի է ներկայացնել:

Առաջին հերթին մեզ անհրաժեշտ է ձեւավորել այնպիսի կառավարող ընտրախավ, որը պետական ու ազգային կարգացման գործում գիտակցում ու կարեւորում է հասարակության համակեցության ու կարգացման արժեքային հիմքերի ձեւավորման խնդիրը: Հատվածական շահերի ու գերակայությունների մեջ խճճված ազգը չի կարող կարգացում ունենալ:

Երկրորդ գերխնդիրը ազգային առողջ, ստեղծագործական ներուժով օժտված անհատների, հատկապես երիտասարդության արտահոսքի կանխումն է: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է Հայաստանում ձեւավորել մարդու գործունեության համար հավասար հնարավորություններ ու պայմաններ: Այս առումով առաջնային կարեւորություն ունի փողի եւ իշխանության հովանավորչության վրա հենված արտոնյալության հասարակական ախտի դեմ անողոք պայքարի ծավալումը:

ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրոշակ»-ի խմբագրության

Դաշնակցական ընտանիքը մեծ գոհունակությամբ կը դիմավորե իր մամլո առաջատար ներկայացուցիչ ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրոշակ» -ի վերիրատարակումը, որ նոր դիմագիծով դարձյալ կը ներկայանա հանրության:

»Դրոշակ«-ի երկար երթը, միաձուլված ՀՅԴաշնակցության պատմության ժամանակաշրջաններու մարտահրավերներուն, հաջողություններուն, մտահոգություններուն՝ մեր բոլորին մոտ եւ վստահ բոլորի վկայությամբ՝ յուրահատուկ եղած է իր քննական-վերլուծական ու տեսական մոտեցումներու ընդմեջեն:

Տասնամյակներու ընթացքին «Դրոշակ»-ի ամեն մեկ համարի խորագիրը, -այդ միակ նախադասությունը, որ կ'արձանագրվի կողքին վրա - արդեն շոշափելի ձեւով, պարզ ու հասկնալի՝ բնութագրումը կը կատարե հայ իրականության առջեւ պարզվող հառաջիկա մեր անմիջական տեսադաշտին: Այսպես եղած է միշտ, այսպես պիտի շարունակե ըլլալ. գաղափարական մեր դաշտը մշակելու, ազգային-քաղաքական հարցերը քննարկելու, մեր դեմ ցցվող խոչընդոտները հաղթահարելու, ինքնակազմակերպվելու, մարտահրավերները պայքարի նոր հորիզոններու վրա տեսնելու այս նոր ժամանակաշրջանը, ամենեն վճռականը կը հանդիսանա դաշնակցական առողջ մտածողության առջեւ հրամցվող իրավիճակներուն համար:

Հաջողության մաղթանքներով

«Ազատ օր» օրաթերթ, Հունաստան

ՀՅԴ ՕՐ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

Հայաստանի սոցիալ-տնտեսական

զարգացման պերսպեկտիվները

ԱՐԱ ՆՈՒՄՅԱՆ

Հայ Յեղափոխական Դաշնակցության գաղափարախոսության հիմքում ընկած հիմնական սկզբունքներն են ազգայինը եւ ընկերայինը: Կուսակցության դեռեւս առաջին ծրագիրը 1892 թ. ներկայացրեց Դաշնակցության ընկալումներն ու ըմբռնումները ազգային եւ ընկերային ազատագրության խնդիրների վերաբերյալ:

Դաշնակցությունը ներկայացրեց արդյունաբերության եւ գյուղատնտեսության ոլորտներում անհրաժեշտ քաղաքականության իր պատկերացումները, ինչպես նաեւ առաջ քաշեց հայ աշխատավորության շահերի պաշտպանության խնդիրը ընկերվարության համամարդկային շարժման շրջանակում:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունն իր գաղափարախոսությանը համահունչ տնտեսական ծրագրեր իրականացրեց Առաջին Հանրապետության տարիներին՝ 1918-1920 թթ. անկախության ժամանակաշրջանում: Ընդ որում՝ այդ տարիներին օրենքի ուժ ստացան ընկերային արդար համակարգի ձգտող այն սկզբունքները, որոնց իրականացմանը պետք է լծվեին միաժամանակ եւ պետությունը, եւ հասարակությունը: Սակայն այն բոլոր դժվարությունները, որոնք առկա էին մեր ժողովրդի եւ Առաջին անկախ Հանրապետության առջեւ, ինչպես նաեւ անկախության կարճ ժամանակաշրջանն ինքնին, թույլ չտվեցին իրականացնել լայնածավալ երկարաժամկետ տնտեսական նախագծեր, Հայաստանի Հանրապետությունում իսկապես ձեւավորել Դաշնակցության ծրագրային դրույթներին համապատասխան արդար հասարակարգ, որտեղ քաղաքացին կունենար աշխատելու, անկաշկանդ ստեղծագործելու եւ զարգանալու հնարավորություն:

Հետագա տարիներին Դաշնակցության տնտեսական միտքը, համաքայլ շարժվելով աշխարհում տիրապետող առաջադեմ գաղափարների եւ հայացքների հետ, նույնպես ենթարկվում էր մշտական բարեփոխման եւ զարգացման: Սակայն Դաշնակցությունը, ի տարբերություն այլ երկրների ընկերվարական կուսակցությունների, զրկված էր իր ծրագրերը անկախ պետության պայմաններում ներկայացնելու եւ իրականացնելու հնարավորությունից:

Հայաստանի Հանրապետության անկախության ձեռք բերումից հետո ողջ հայ ժողովուրդը եւ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը մտահոգվեցին երկրի եւ ժողովրդի անվտանգության խնդիրներով, Ղարաբաղյան ազատագրական շարժման ճակատագրով եւ հարկադրված էին ամբողջ ներուժն ուղղել երկրի անկախության ամրապնդմանն ու հզորացմանը: Ու թեեւ դեռեւս 1990 թվականին Դաշնակցությունը ներկայացրեց իր տնտեսական պլատֆորմը, առկա քաղաքական իրավիճակը չնպաստեց դրա իրագործմանը:

Այդ տարիներին երկրի տնտեսությունն անցավ մի շարք դժվարությունների միջով: Անկախության առաջին տարիները բնորոշվեցին Հայաստանի արտաքին եւ ներքին տնտեսական կապերի խզմամբ, էներգետիկ եւ տրանս-

պորտային ճգնաժամով, մասնավորեցման խայտառակ գործընթացով եւ տնտեսության բոլոր ենթակառուցվածքների կազմալուծմամբ ու քայքայմամբ: Այն պահին, երբ Արցախում ազգային ազատագրական պայքար էր մղվում, նորանկախ Հայաստանը թեւակոխում էր մի նոր փուլ, ձեւավորվեց շուկայական համակարգը եւ նրա արդյունքը հանդիսացող հասարակական կառույցը: Առաջինը՝ որպես հետեւանք համապատասխան քաղաքական «պատվերի», դրամագլխի նախնական կուտակման տրամաբանության եւ տնտեսական գործառույթները վերահսկող օրինական դաշտի բացակայության, հանգեցրեց մենաշնորհների առաջացման եւ դեպի տնտեսություն ու քաղաքականություն հանցագործ տարրերի ներթափանցման եւ համապատասխան համակարգի ձեւավորման: Ինչ վերաբերում է հասարակական կառույցին, այն նույնպես, այսպես կոչված, անցումային փուլի տրամաբանությամբ հատկանշվեց ընկերային սուր բեւեռացմամբ, ցածր եւ անկայուն աշխատավարձերով, ինչպես նաեւ հասարակության պառակտմամբ: 1990-ական թվականների երկրորդ կեսից սկսվեց Հայաստանի տնտեսության ենթակառուցվածքների վերականգնման շրջանը, որն արձանագրեց ինչպես նվաճումներ (օրինակ՝ տրանսպորտի, կապի, էներգետիկայի եւ այլ ոլորտներում խնդիրների մասնակի լուծմամբ), այնպես էլ տնտեսական քաղաքականության լուրջ բացթողումներ:

Անկախության ձեռք բերումից հետո երկրի տնտեսությունում տեղի ունեցան այնպիսի անընդունելի երեւույթներ, ինչպիսիք են ազգային հարստության փոշիացումը, մի խումբ մարդկանց ձեռքում երկրի տնտեսական հզորությունների կենտրոնացումը, անարդար եւ ոչ-թափանցիկ մասնավորեցումը, երկրի տնտեսական անվտանգությանն առնչվող բնագավառների նկատմամբ պետական վերահսկողության թուլացումը, ռազմավարական նշանակության ոլորտների կազմալուծումը, անպատժելիության մթնոլորտի ձեւավորումը, կոռուպցիայի եւ աղքատության աճը:

Տնտեսական նոր հարաբերությունների ձեւավորումն ուղեկցվեց երկրում բարոյական արժեքների, ընկերային արդարության եւ հավասարության նկատմամբ աշխատավորի հավատի կորստով եւ բոլոր տիպի հարաբերությունների արժեզրկմամբ՝ դրանք դրամական փոխհարաբերությունների ոլորտ փոխանցելով:

Ամենացավալին, սակայն, Հայաստանի բնակչության արտագաղթն էր. հազարավոր



մարդիկ լքեցին հայրենիքը ընկերային ծանր պայմանների պատճառով:

Այսօր Հայաստանի տնտեսությունը կանգնած է նոր մարտահրավերի առջեւ. մտնել տնտեսության զարգացման երրորդ փուլ՝ ենթակառուցվածքների կայացումից հետո անցում կատարել դեպի տնտեսության իրական հատվածի զարգացում: Հայաստանի Հանրապետությունը կխուսափի առկա պաշարների սպառումից հետո հնարավոր ճգնաժամից, եթե կարողանա առաջիկա մի քանի տարիների ըն-

թացքում ձեւավորել ժամանակակից արդյունավետ գործող տնտեսական համակարգ: Հնարավոր կլինի եթե ոչ կասեցնել, ապա նվազեցնել արտագաղթը, երկիրը զերծ պահել հասարակական ցնցումներից եւ զարգացնել ընկերային զորաշարժ, որը կապահովի հասարակության աշխույժ մասնակցությունը երկրի զարգացման գործընթացին:

Հետեւաբար, Դաշնակցության կողմից առաջնային խնդիր է դիտվում Հայաստանի Հանրապետության նոր տնտեսական քաղաքականության՝ երկրի զարգացման նոր հայեցակարգի մշակումը: Այն պետք է արտահայտի երկրի տնտեսական զարգացման նոր գաղափարախոսությունը՝ ունենալով հստակ ընկերային ուղղվածություն, սահմանի եւ երաշխավորի բիզնեսի հասարակական պատասխանատվությունը, ինչպես նաեւ կարեւորի ոչ միայն հարստության ստեղծումը ազատ շուկայական համակարգի պայմաններում, այլեւ հարստության վերաբաշխումը՝ ի խնդիր ընկերային արդարության: Այդ իսկ հեռանկարով երկրի զարգացման նոր գաղափարախոսությունը պետք է ներառի տնտեսության մեջ պետության կարգավորիչ դերի վերաիմաստավորումը, տնտեսության կառավարման կառուցվածքային փոփոխությունների իրականացումը, տնտեսության ոլորտում կատարվող գործընթացների, ճյուղերի զարգացման եւ քաղաքացիների բարեկեցության մակարդակի համար պետության պատասխանատվության բարձրացումն ու աշխույժ տնտեսական քաղաքականության իրականացումը:

Այս գաղափարախոսությունից բխող տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները պետք է լինեն զարգացմանը խոչընդոտող տնտեսական առասպելներից ձերբազատումը եւ նոր սկզբունքներով տնտեսության կառավարումը:

1. Նոր արդյունաբերական քաղաքականություն: Տնտեսական գործիքները եւ մակրոտնտեսական ցուցանիշների ապահովումը դարձել են ինքնանպատակ, իսկ տնտեսական քաղաքականություն իրականացնողները կորցրել են դրանց բուն իմաստն ու էությունը: Տնտեսական գործիքները պետք է ծառայեն իրական զարգացմանը, պետության հարստացմանը, բնակչության կենսամակարդակի աճին, այլ ոչ թե զսպեն երկրի տնտեսական զարգացումը հանուն ցուցանիշների «հաղթանակի»: Ներկա պայմաններում Հայաստանի համար կարեւորագույն խնդիր է տնտեսության իրական հատվածի գործունեությունը, հայրենական ապրանքների արտադրության խրախուսումը, դրանց արտահանմանն աջակցումը, հայկական ապրանքների մրցունակությանը նպաստող միջոցառումների իրականացումը, գիտության ոլորտի բարեփոխումն ու զարգացումը, գիտական արդյունքների աշխույժ գործադրումը եւ այլն: Նման քայլերի ամբողջական համալիրը կյանքի կոչած երկրներում (օրինակ՝ Հար. Կորեա, Թա-

իլանդ, Մալայզիա) արձանագրվեց արդյունաբերական ապրանքների արտադրության աճ, մեծ արտահանում, միջազգային ճանաչում եւ երկրի հեղինակության բարձրացում:

2. Իրական ընկերային ուղղվածություն: Հայաստանի պետական բյուջեի միայն հասարակական բաղադրիչի տեսակարար կշռի մեծ չափը դեռ չի նշանակում ունենալ ընկերային

ուղղվածությամբ բյուջե (առավել եւս՝ ստվերի ներկա մակարդակի եւ հարկահավաքման ցածր ցուցանիշի պայմաններում): Ավելին, Հայաստանի ընկերային քաղաքականությունը չպետք է ուղղվի դեպի նպաստների համատարած տրամադրում: Մեր ընկերվարական մոտեցումների համաձայն՝ ընկերային քաղաքականությունը ոչ թե բոլոր աղքատներին նպաստներով (հաճախ՝ ստորացուցիչ չափերի) ապահովելն է, այլ քաղաքացու ինքնադրսեւորման եւ զբաղվածության ապահովման համար իրական պայմանների ստեղծումը: Հայ աշխատավորը պետք է ունենա աշխատանք, եւ միայն նրանք, ովքեր չեն կարող աշխատել եւ իսկապես կարիք ունեն նպաստների, պետք է պետության կողմից ստանան արժանավայել ապրելու համար բավարար գումար:

Պետության քաղաքականության ընկերային ուղղվածության կարեւորագույն ապացույցներից կլինի պետության մտահոգությունը քաղաքացիների իրավունքների ապահովման եւ սահմանադրական չափանիշների (նորմերի) կիրառման խնդրով: Բնակչության բնակարանային խնդիրների լուծման համալիր ծրագրի գործադրումը, մշակութային, առողջապահական, կրթական ոլորտների մատչելիությունը եւ բարձր մակարդակը շոշափելի դրական արդյունք եւ նոր որակ կտան Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու կյանքին:

3. Ստվերային տնտեսության ծավալների կրճատում: Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ ստվերային ծավալները տարբեր գնահատականներով կազմում են 40-70 տոկոս: Փորձագիտական եզրակացությունների, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների եւ պաշտոնատար անձանց հայտարարությունների համաձայն՝ Հայաստանում ստվերային տնտեսության ծավալները կազմում են ոչ պակաս, քան 50 տոկոս: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները հիմնականում համընկնում են վերը նշված գնահատականների հետ:

Ստվերային տնտեսության ծավալների կրճատումը ոչ միայն երկրի տնտեսական խնդիրների լուծման գրավական է, այլեւ պետության տնտեսական անվտանգության ապահովման կարեւորագույն նախապայմանը:

Ստվերի դեմ պայքարը թույլ կտա ոչ միայն էապես բարելավել Հայաստանի տնտեսության մակրոտնտեսական ցուցանիշները, այլեւ մի քանի անգամ ավելացնել պետական բյուջեի եկամուտները՝ տալով դրան իրական ընկերային ուղղվածություն, քանի որ, ինչպես արդեն նշվեց, փոքր բյուջեն ընկերային չի կարող դառնալ միայն կառուցվածքի տեսակարար կշռի փոփոխության հաշվին: Միաժամանակ, բյուջեի եկամուտների ծավալների էական ավելացման պայմաններում կունենանք ոչ միայն պետական բյուջեի հաշվին տրվող վարձատրությունների, ինչպես նաեւ կենսաթոշակների աճ, այլեւ լուրջ ներդրումային (ինովացիոն) եւ արդյունաբերական քաղաքականության իրականացման հնարավորություն:

Մեր վերլուծությունները ցույց են տալիս, որ համապատասխան գործիքակազմի կիրառման (տնտեսության, գործարարության ապաքրեականացում եւ դրա առանձնացում քաղաքական ընտրախավից եւ պետական-կառավարչական դիվանակալությունից (բյուրոկրատիայից), տնտեսությունում իրական մրցակցային դաշտի ապահովում) եւ անհրաժեշտ քաղաքական կամքի առկայության դեպքում հնարավոր է 4-5 տարվա ընթացքում ապահովել հարկահավաքման մակարդակ ՀՆԱ-ի 24-25 տոկոսի չափով:

Համոզված ենք, որ Հայաստանի Հանրապետությունը իր ազգային անվտանգության եւ պաշտպանության, ընկերային-տնտեսական ոլորտի եւ բնակչության կենսամակարդակին առնչվող կարեւորագույն խնդիրները կարող է եւ պետք է լուծի ոչ թե ներբյուջետային կառուցվածքային ձեւավորումներով, այլ իրական-մեծ բյուջե ունենալով, որը որակական նոր մակարդակ կապահովի պետության ընկերային, տնտեսական, ներդրումային, ինչպես նաեւ արտաքին քաղաքականության համար:

Այսօր նոր տնտեսական քաղաքականության իրականացման միջոցով տեսնում ենք երկրի տնտեսության թռիչքայինանպատակային զարգացման, ընկերային արդարության եւ համերաշխության, ՀՀ օրենքի առջեւ բոլոր քաղաքացիների հավասարության եւ ազատ տնտեսավարման սկզբունքների հիման վրա հասարակարգի ձեւավորման, Հայաստանի քաղաքացիների համար արժանավայել կենսամակարդակի ապահովման, Հայաստանի Հանրապետությունում հայահավաքման գործընթացի սկիզբը դնելու իրական հնարավորություն:



ԼՅՈՒԴՎԻԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1948 թվականին, Կոտայքի Բալահովիտ գյուղում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը: Դասավանդել է պետական համալսարանում և Պոլիտեխնիկական ինստիտուտում: 1990-95 թթ.եղել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:1991-94 թթ.աշխատել է ՀՀ Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի պաշտոնում:

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՏՈՀՄԱԾԱՌԸ

Ազգային գաղափարախոսության անհրաժեշտության մասին վերջին տարիներին մեզանում պարբերաբար ծագող եւ շրջանառվող քննարկումները ցույց են տալիս կարեւորագույն խնդրի գոյությունը: Այլ բան է, որ նման քննարկումները չեն բերում էական, գործնական եզրահանգումների: Արդյունքում հայտնվում ենք մի հակասական իրավիճակում, երբ համարյա բոլորը իրավացիորեն զգում են ազգային-պետական կեցության գաղափարական հենքի պակասը, բայց մյուս կողմից՝ ոչ մի կերպ չի հաջողվում լուրջ խոսակցություն բացել այդ խնդրի շուրջ: Նման պարագայում բնական հարց է ծագում՝ ինչո՞ւ: Առանց այս հարցին պատասխանելու, մեր խարխափումները կարող են երկար շարունակվել:

Մեր համոզմամբ՝ նման անորոշության գլխավոր պատճառներից մեկն այն է, որ ճշգրտված չէ, թե ինչի՞ մասին է խոսքը, ո՞ր երեւույթը նկատի ունեն, երբ խոսում են ազգային գաղափարախոսության մասին: Մի դեպքում դա դիտարկվում է որպես հազարամյակների ընթացքում ձեւավորված մի արտանյութական, տեսական դրույթների համակարգ, մյուսում էլ՝ որպես առօրյա խնդիրների լուծմանն ուղղված գործնական հրահանգների յուրահատուկ տեղեկատու: Սա ցույց է տալիս, որ անհրաժեշտություն կա առանձնահատուկ ուշադրություն դարձնել քննության առարկա երեւույթի ճշգրիտ սահմանումներին ու ձեւակերպումներին:

Ստորեւ ներկայացնում ենք տվյալ երեւույթը բնութագրող հասկացությունների բովանդակության եւ նրանց փոխադարձ կապի մեր ընկալումները: Անհրաժեշտ է նշել, որ ներկայացվող հասկացություններն ու դատողությունները կիրառելի են ցանկացած քիչ թե շատ կայացած ազգի համար: Դա բխում է այն ընդհանրություններից, որոնք բոլոր ազգերին՝ ողջ բազմազանությամբ հանդերձ, միավորում են մի համամարդկային ընտանիքի մեջ:

Մենք համարում ենք, որ ազգային առանձնահատկությունները չեն կարող գնահատականների կամ ենթադրյալ առավելությունների թվարկման հիմք հանդիսանալ: Եվ եթե ինչ-ինչ պարագաներում, այնուհանդերձ, համեմատությունների անհրաժեշտություն է առաջանում, ապա ազգի առանձնահատկությունները եւ ոչ թե ընդհանրությունները պիտի նկատի ունենալ: Ազգերը հետաքրքիր են ոչ թե նմանություններով, այլ՝ տարբերություններով:

Այսպիսով, վերադառնալով «ազգային գաղափարախոսություն» եզրին, նշենք, որ դրան զուգահեռ, հաճախ որպես հոմանիշ, օգտագործվում են «ազգային գաղափար», «ազգային ծրագիր», «ազգային առաքելություն» եզրերը: Այժմ անդրադառնանք այս հասկացություններին՝ ճշտելով յուրաքանչյուրի բովանդակությունն ու նրանց փոխադարձ կապը:

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐ

Յուրաքանչյուր ազգի համար սա աստվածային նախախնամությամբ սահմանված կոչում եւ գոյական ուղի է, ներդրված նրա ծագման եւ գոյության իմաստի մեջ: Ազգային գաղափարը վերժամանակային առաջադրություն է, որը ձեւակերպում է ազգի ամենահիմնարար առանձնահատկությունները, բացահայտում գոյության նախաստեղծ իմաստը եւ չի կարող փոխվել մարդկանց խմբերի եւ, նույնիսկ, ողջ ազգի կամայական որոշումով: [10]

Եթե ազգը կարողանում է ճշտորեն ընկալել ազգային գաղափարի ողջ էությունն ու խորհուրդը եւ իր պատմական ընթացքի մեջ հավատարիմ մնալ դրան, ապա գործ ունենք իր մեջ ներդրված ողջ կենսական ներուժը հետեւողականորեն եւ արդյունավետ դրսեւորման ձգտող հավաքականության հետ: Հակառակ պարագայում անխուսափելի են պատմական զանազան վայրիվերումներն ու կորուստները: Կարելի է ասել, որ ազգային գաղափարը առավել հակիրճ պատասխանում է հայտնի բանաձեւի առաջին՝ «ովքե՞ր ենք մենք» հարցին, ձեւակերպելով ամենագլխավոր եւ առանձնահատուկ հատկանիշը: Այս համատեքստով բավականին դիպուկ եւ տարողունակ է ռուս մտածող Վ. Սոլովյովի հետեւյալ ձեւակերպումը. «Ազգային գաղափարը ոչ թե այն է, թե ինչ է մտածում ազգն իր մասին ժամանակի մեջ, այլ՝ թե ինչ է մտածում նրա մասին Աստված՝ հավերժության մեջ»: Եվ եթե ազգն իր ընթացքի մեջ հավատարիմ եւ նախանձախնդիր է իր ծագման եւ գոյության խորհրդին, նա պետք է ստանձնի եւ կրի այդ խորհրդից բխող որոշակի պարտավորություններ, որոնց ձեւակերպումը մեզ հասցնում է «ազգային առաքելություն» հասկացությանը:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Ազգի ծագման խորհուրդը՝ նախաստեղծ նպատակային առաջադրությունը բացահայտելիս ի հայտ է գալիս համամարդկային այն ֆունկցիան, որը բխում է ազգային գաղափարի անխաթար ընկալումից: Եթե ազգը համակված է այդ ֆունկցիան առավելագույնս անխաթար, աներեր եւ հետեւողականորեն իրագործելու գիտակցությամբ եւ կամքով, ապա գործ ունենք մի երեւույթի հետ, որը մենք կանվանենք ազգային առաքելություն: Ինչպես ցանկացած առաքելություն, սա նույնպես իր էությամբ նշանակում է իրագործման հանձնառություն եւ պարտականություն:

Ազգային առաքելություն հասկացությունը նույնպես պատասխանում է «ովքե՞ր ենք մենք...», նաեւ՝ «որտեղի՞ց ենք գալիս» հարցին՝ «ինչո՞ւ» ենթատեքստով: Ու թեեւ անփոփոխ է վերջնական միտվածության առումով, սակայն կախված է համամարդկային պատմական ընթացքի ճշգրիտ ընկալումից եւ այդ ընթացքի մեջ ազգի պարտավորություններից ու պարտականություններից: Քանի որ մարդկային գոյության պատմական ընթացքն իր մարտահրավերներն է նետում բոլորին, համաշխարհային այդ գործընթացների մեջ ազգին առաջադրվող խնդիրներն առավելագույնս արդյունավետ լուծելու համար անհրաժեշտ է, որ ազգային հավաքականության բոլոր բաղադրիչները գիտակցեն լուծման համար անհրաժեշտ, նախնական պարտավորություններից բխող հատկանիշների համակարգի էությունը: Այդ բանն ապահովում է «ազգային գաղափարախոսություն» հասկացությունը:

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Այս հասկացությունը պատասխանում է «...ո՞ւր ենք գնում» հարցին՝ նկատի ունենալով հարափոփոխ աշխարհում ազգի պատմական ընթացքի միտվածությունը, ինչպես նաեւ այդ ընթացքի հավատարմությունը «ազգային գաղափար» եւ «ազգային առաքելություն» հասկացություններին:

Ակնհայտ է, որ պարտականությունների լիարժեք կատարումը, բացի նպատակային միտվածությունից, պահանջում է նաեւ տվյալ պատմական պահի առանձնահատկություններին համապատասխան գերակա հատկանիշների համախումբ: Ազգային գաղափարախոսությունը ընդգրկում է հենց այդ գերադասելի հիմնական հատկանիշներն ու պահվածքը՝ որպես նպատակային համալիր կենսակերպ: Այսպիսով, ազգային գաղափարախոսությունը տվյալ ազգի եւ նրան պատկանող անհատների բարոյական եւ ֆիզիկական կենսակերպի վարքականոնների մի գաղափարական, արժեքային համակարգ է՝ ուղղված արտաքին եւ ներքին հարափոփոխ պայմաններում ազգային գաղափարից եւ առաքելությունից բխող սեփական իդեալներն ու առանձնահատկությունները պահպանելուն, զարգացնելուն եւ ազգային տեսակի պահպանմանը: Իհարկե, այսպիսի ձեւակերպումը ենթադրում է, որ տվյալ ազգը եւ նրա անհատները տեղյակ են եւ ձգտում են հավատարիմ մնալ «ազ-

գային գաղափար» եւ «ազգային առաքելություն» հասկացություններին եւ լրջորեն տոգորված են ազգի՝ որպես հոգեւոր ու կենսաբանական տեսակի, պահպանմամբ եւ զարգացմամբ՝ չանտեսելով նախնյաց ժառանգությունն ու համամարդկային կենսափորձը: Ազգային գաղափարախոսությունը տվյալ պատմական շրջանի համար ուղենիշային արժեքային համակարգ է՝ ռազմավարական ուղղվածությունը պահպանելու, մարտավարական խնդիրները վերլուծելու եւ, դրա հանգույն, ընթացիկ գործունեությունը իրականացնելու համար:

Երբ այս հարցերում պարզություն է մտցված, տրված են «ո՞ւր ենք գնում» հարցի պատասխանները, առաջ է գալիս մի այլ հարց՝ ինչպե՞ս: Դրա պատասխանն է, որ մեզ բերում է հաջորդ՝ «ազգային ծրագիր» հասկացությանը:

ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ընթացիկ կյանքի առաջադրած բոլոր տեսակի խնդիրները, ինչպես յուրաքանչյուր անհատին, այնպես էլ բոլոր ազգերին, կանգնեցնում են դրանց համարժեք եւ արդյունավետ արձագանքելու պարտադրանքի առջեւ: Ինչպես որեւէ անձ է առօրյա կյանքում, ելնելով իր կենսափորձից, ձգտումներից, նախասիրություններից, ապագայի սեփական պատկերացումներից, պլանավորում իր գործունեությունը, այնպես էլ ազգերն են որոշում իրենց անելիքները մարդկության համաշխարհային ընթացքի մեջ եւ ջանում կենսագործել դրանք: Ուղղակի այս պարագայում պլանավորման, որոշումներ կայացնելու եւ դրանք իրագործելու մեխանիզմներն անհամեմատ բարդ են եւ ենթադրում են կազմակերպվածության շատ բարձր մակարդակ: Նման կազմակերպվածության առայժմ հայտնի ամենագործուն ձեւը ազգային պետականությունն է: Պետականությունը եւ ազգային ծրագիրը սերտորեն փոխկապակցված են եւ իդեալում ենթադրում են պետական կառույցի եւ հասարակության առավելագույն փոխըմբռնում եւ փոխադարձ վստահության մեծ պաշար: Միայն այսպիսի պայմաններում է հնարավոր լուրջ ազգային ծրագրի մշակումը եւ կենսագործումը: Ակնհայտ է նաեւ, որ պետականությունն ինքը պետք է ամբողջովին ներծծված լինի ազգային գաղափարի, առաքելության եւ գաղափարախոսության սկզբունքներով:

Նույնիսկ պետականության առկայության դեպքում, ազգային ծրագրի իրագործումը անհնարին է առանց հոգեւոր եւ բարոյական համապատասխան միջավայրի: Պետականությունը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է մեծ խնդիրներ առաջադրելու եւ լուծելու համար: Այսպիսով, ազգային ծրագիր իրագործելու համար անհրաժեշտ են նպաստավոր միջավայր եւ առավելագույն կազմակերպվածություն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այժմ տեսնենք, թե ինչ որոշակիություն կստանան վերը բերված ընդհանուր դատողություններն ու ձեւակերպումները հայոց պատմական իրողությունների պարագայում: Այստեղ մեր ջանքերի արդյունավետությունը էապես կախված է մեր դատողությունների հիմքում դրված պատմագիտական հայեցակարգից, ավելի ստույգ՝ հայ ժողովրդի պատմության ներկայացման մի շատ վճռորոշ հարցից՝ հայերը բնի՞կ են, թե եկվոր: Մինչեւ XIX դարի կեսերը այսպիսի հարցադրում ընդհանրապես չկար, քանի որ ե՛ւ հայերի, ե՛ւ եվրոպական հասարակական գիտակցության մեջ ամրագրված էր դարերից եւ հազարամյակներից եկող մի անառարկելի համոզմունք. հայերն արարչական օրերից են ապրում Հայկական լեռնաշխարհում եւ նրանց երկիրը մարդկության ծննդի եւ փրկության վայրն է:

Սակայն, XIX դարի 2-րդ կեսին անտարակուսելի համարվող այս հայեցակարգը սկսեց կտրուկ վերաքննության ենթարկվել, եւ դա իր համառ ու հետեւողական շարունակությունն ունեցավ ողջ XX դարի ընթացքում: Այս երեւույթի հիմնական պատճառները մի քանիսն էին, եւ դրանց մի մասը դեռ շարունակում են վճռորոշ ազդեցություն ունենալ արդի համաշխարհային պատմագիտության վրա:

Ինչպես կտեսնենք, դրանք մեծ անդրադարձ ունեցան, եւ ունեն, հայկականության երեւույթի եւ հայ ազգի ճակատագրի համար:

Այսպես կոչված եվրոպական լուսավորչական

շարժման «հաղթական» ալիքի վրա եւ լիբերալ-աթեիստական մտայնության հետեւանքով, XIX դարում գիտությունից, մասնավորապես պատմագիտությունից արդեն արտաքսվել էր գոյակարգի աստվածային մանրակերտը: Այդ մտայնությունը պատմագիտությունը դարձրեց աշխարհիկ, հիմնականում քաղաքական եւ, որոշ չափով, սոցիալական: Հնագույն ժամանակներից հասած դիցաբանական, բանահյուսական, էպիկական, ավանդույթային եւ դավանական նյութերը լավագույն դեպքում սկսեցին դիտարկվել որպես զուտ մշակութային շերտ եւ կասկածելի աղբյուր՝ հավաստիության առումով: Այսպես անտեսվում էր վիթխարի եւ բազմաշերտ այն ինֆորմացիան, որ պարունակվում է նման նյութի մեջ, եւ ինչպես պարզվում է, իր հավաստիությամբ առնվազն չի զիջում նյութական, հնագիտական աղբյուրներին:

XIX դարում հնագիտական հայտնագործությունների կտրուկ աճը, նորահայտ հնագիտական նյութերի առատությունը եւ դրանց կամայական մշակումը նպաստում էին հապճեպ կառուցվող մակերեսային պատմական մոդելների արագ տարածմանը՝ ի հաշիվ հասարակական մեծ հետաքրքրության: Հնագիտական նոր նյութի ավելացող ծավալի և եվրոպական պատմաբաններին միակ հասանելի եւ ընկալելի հունահռոմեական եւ, որոշ չափով, աստվածաշնչյան աղբյուրների ընդգրկման ակնհայտ անհամաչափելիությունը բնավ չէին նպաստում առարկայական պատմական մոդելի ձեւավորմանը: Եվրոսնապարծության եւ շտապողականության մթնոլորտում ստեղծված նորաթուխ վարկածները հետեւողականորեն ներդրվեցին եվրոպական կրթական եւ գիտական համակարգի հիմքում՝ վերածվելով պատմագիտական դոգմատիկ մոդելների: Եվ այսօր առկա է արդեն կարծրացած գիտակրթական մի համակարգ, որը թշնամաբար եւ արհամարհանքով է վերաբերվում ինչպես ավանդական պատմագիտական մոդելի վրա խարսխված ցանկացած մտածողության, այնպես էլ գիտական այլախոհության որեւէ դրսեւորմանը: Դրությունը չեն փոխում նաեւ հետագա բազմաթիվ արժեքավոր հնագիտական եւ այլ հայտնագործությունները, որոնք, կասկածելի համառությամբ, փորձում են տեղավորել արդեն իսկ քարացած շրջանակներում, անտեսելով օրեցօր բազմացող հակասությունները:

Էական դեր են խաղում նաեւ որոշակի քաղաքական շահագրգռություններ, ինչն ավելի է խճճում այս մոդելով ներկայացվող հնագույն աշխարհի՝ առանց այդ էլ խիստ աղճատված պատկերը: Կարծես թե ամեն ինչ արվում է, որ մարդկային քաղաքակրթության օրրանը չունենա կենդանի ժառանգորդ: Հին աշխարհի խառնաշփոթի մատնված այդ պատկերի մեջ բացակայում են հայերն ու հայկական պետականությունը, եւ, ըստ այդ վարկածի, հայերը պատմական թատերաբեմում հանկարծակի հայտնվում են Ք.ա. VI դարում՝ անհայտ տեղից եւ անհասկանալի ձեւով: Այս վարկածը ոչ միայն ամբողջովին հակասում է ողջ հայ պատմագրությանը, ավանդությանը եւ օտար բազմաթիվ աղբյուրների տվյալներին, այլեւ անլուծելի հակասությունների գիրկն է նետում ողջ հայեցակարգը՝ մեծ խառնաշփոթ առաջացնելով նաեւ համեմատական լեզվաբանության, լեզվի պատմության, հնագիտության, պատմական աշխարհագրության, դիցաբանական եւ մշակութաբանական ուսումնասիրությունների եւ այլ ոլորտներում: Արդյունքում, այս մոդելով հայությունը արտաքսվեց իր բնօրրանից եւ սեփական պատմությունից: Ըստ էության, սա քաղաքակրթական եղեռն էր հայության եւ հայկականության հանդեպ, եւ հետագայում իրագործված ֆիզիկական եղեռնի գաղափարական նախապատրաստումը:

Ցավոք, հետագայում արատավոր այդ նորամուծության ներդրումը ավանդական պատմագրությամբ ձեւավորված հայ ազգային գիտակցության մեջ կատարվեց նաեւ եվրոպական եւ սովետական կրթություն ստացած որոշ հայ գիտնականների ջանքերով, կայուն տեղ գրավեց նաեւ հայ կրթական եւ գիտական համակարգում, ստեղծվեց «պաշտոնական» կարգավիճակով պատմագրական մի դպրոց, որի հետեւորդների համար այժմ հոգեբանական, մտածողական, բյուրոկրատական եւ գիտական առաջխաղացման հետ կապված ահռելի դժվարություններ կան՝ վերադառնալու ազգային գիտական ավանդույթի շրջանակները: Այդ է պատճառը, որ այդ շերտը, ունենալով զգալի վարչական ներուժ, բավականին ագրեսիվ է հակազդում նույնիսկ օտար գիտնականների այն աշխատանքներին, որոնք բացահայ-

տում են «պաշտոնական» տեսության աղաղակող հակասությունները, հաստատելով ավանդական պատմագիտության անբասիր հավաստիությունը: Այս հարցում ոչ երկրորդական դեր են խաղում նաեւ որոշակի օտար, նաեւ քաղաքական շրջանակների կողմից ցուցաբերվող աջակցության այլազան մեթոդները՝ ուղղված «պաշտոնական» դիրքորոշում ունեցող գիտնականների նյութական եւ վարչական դիրքերի ամրապնդմանը ժամանակակից հայագիտության մեջ:

Այս խիստ անհրաժեշտ միջարկումից հետո անցնենք բուն նյութին. ի՞նչ են նշանակում հայ ժողովրդի համար ազգային գաղափար, առաքելություն, գաղափարախոսություն եւ ծրագիր հասկացությունները: Մեր հետագա դատողությունների հիմքում դրված են գոյակարգի աստվածային մոդելին համապատասխանող ավանդական պատմագիտությունը և մարդկության պատմության հնագույն շրջանին վերաբերող նորահայտ նյութերի և հետազոտությունների արդյունքները*:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Ազգային գաղափարը աստվածային, ազգային տեսակը տարբերակող առանձնահատուկ շնորհ (կամ շնորհների համակարգ) է, աստվածային ծրագիր:

Երբ ծանոթանում ենք մեզ հասած պատմական աղբյուրներում առկա հայկական ներկայության ծավալներին, ակնհայտ է դառնում այն մեծ դերակատարությունը, որ հնագույն ժամանակներից ունեցել են հայերն ու Հայքը: Ասելով հայեր եւ Հայաստան՝ մենք հաշվի ենք առնում նաեւ այն, հաճախ արհեստածին, բարդությունները, որ կապված են այդ հեռավոր ժամանակների դերակատար ազգերի ու պետությունների նույնադրման (իդենտիֆիկացիա) հետ: Դիտարկելով միայն այն հիշատակումները, որ ընդունվում են անգամ «պաշտոնական» պատմագիտության կողմից, ակնհայտ է դառնում հայկականության վիթխարի դերը հնագույն աշխարհում, մանավանդ նոր հայտնագործությունների եւ հետազոտությունների լույսի ներքո: Ինչ արժեն թեկուզ այն նշանակությունն ու որակումները, որ տրված են հայերին եւ Հայկական լեռնաշխարհին հարեւանների կողմից. **դրախտի երկիր, արեւելքի ազգ, արարչության վայր, սուրբ օրենքների եւ սուրբ ծեսերի պահապան երկիր ու ժողովուրդ, աստվածների ժողովի վայր, մարդկության փրկության երկիր, անմահության երկիր** եւ այլն: Համաձայնենք, որ միայն համատարած եւ անառարկելի իրողությունը կարող էր ստիպել այդ հարեւաններին՝ մարդկության համար այդ կարեւորագույն եւ պատվաբեր արժեքներն ու հատկությունները վերագրել ոչ թե իրենց, այլ մի ուրիշ ժողովրդի ու երկրի, այն էլ այդպես միաձայն եւ անվերապահ: Ի տարբերություն հայտնի մի քանի ազգերի, որոնք իրենք են իրենց համարում ընտրյալ ազգ, իսկ իրենց երկիրը՝ սրբազան հող, մեր դեպքում սա պնդում են հաճախ ոչ բարեկամաբար տրամադրված օտարները: Եվ սա շատ կարեւոր առանձնահատկություն է:

Հատկանշական է, որ համաշխարհային քրիստոնեությունը եւս նույնությամբ պահպանեց մեր երկրի աստվածային եւ համամարդկային նշանակության ընդգծումը՝ մարդկության գոյության երկու սկզբնավորումն էլ (դրախտ եւ Նոյան տապան) կապելով հայկական տարածքի հետ: Իսկ Հայ Առաքելական Սուրբ Եկե-



ղեցին՝ սկսած սբ. Եղիշեից մինչեւ սբ. Գրիգոր Տաթեւացի, եւ մինչեւ օրս, հպարտությամբ եւ արժանապատվությամբ է մատնանշում մեզ բաժին հասած այդ աստվածային շնորհը: Եվ ընդհանրապես, հայ նախաքրիստոնեական եւ քրիստոնեական մշակույթն ու քաղաքակրթությունը ծայրից ծայր ներծծված է հայկականության արարչական եւ համամարդկային դերի սթափ, պատասխանատու, արժանապատիվ զգացողությամբ, գիտակցությամբ եւ ոգով:

Այսպիսով, ազգային գաղափարի մեր սահմանման համաձայն, որպես պատասխան «ովքե՞ր ենք մենք...» հարցի, կարող ենք ասել հետեւյալը. **հայերը՝ որպես բնիկներ, վաղնջական ժամանակներից, հազարամյակներ շարունակ ապրել են Հայկական լեռնաշխարհի կոչվող տարածքում, որտեղ, ըստ հնագույն աղբյուրների եւ ավանդությունների, Աստված արարել եւ բնակեցրել է մարդուն՝ որպես նրա բնօրրան, որտեղից էլ սկիզբ է առել մարդկության պատմությունը: Այդ տարածքը Աստված տվել է հայերին ի պահպանություն՝ որպես Հայրենիք: Այստեղ են պահ տրվել նաեւ սուրբ օրենքներն ու սուրբ ծեսերը, այստեղից է ծագել աստվածային Լույսը (Արեւելք), այստեղ է պահվել իմաստության եւ անմահության գաղտնիքը, այստեղ է իր փրկությունը գտել մարդկությունը՝ ի դեմս Նոյի, այստեղ է Աստծո եւ մարդու միջեւ հաստատվել հավերժական Ուխտը:**

Ահա սա է, որ աստվածային նախախնամությամբ տրվել է հայությանը ի պահպանություն, եւ սա է այն գլխավոր հատկանիշը, որ տարբերում է հայերին ու Հայքը մյուս հին ու նոր ազգերից ու պետություններից: Սա հայության գոյության հիմքում դրված, առավելագույնս պարտավորեցնող գլխավոր առանձնահատկությունն է: Ինչպես տեսնում ենք, այս իրողությունները կախված չեն մեր կամքից ու ժամանակից եւ որեւէ կերպ հնարավոր չէ դրանց ձեւափոխումը կամ հրաժարումը դրանցից: Սա մեր ազգային գաղափարն է:

Հետեւաբար, երբ XIX դարում շրջանառության մեջ դրվեց հայերի եկվորության վարկածը, ապա փաստորեն փորձ արվեց հայությանը զրկել ազգային գաղափարից: Եվ այժմ ցանկացած ջանք, գործադրված որեւէ հայ կամ օտար անձի կամ խմբի կողմից՝ տարածելու այդ արատավոր վարկածը, պետք է դիտարկել որպես հայության իր գոյության նախահիմքից՝ ազգային գաղափարից զրկելու փորձ:

Ցանկացած արժեքավոր, մանավանդ հոգեւոր լիցք կրող գաղափար, ժամանակի ընթացքում ձեռք է բերում իր խորհրդանիշը: Համարյա բոլոր ժողովուրդներն էլ ունեն իրենց ինքնության խորհրդանիշները: Մեր պարագայում առկա են կարեւոր առանձնահատկություններ: Հետեւաբար, անդրադարձ կատարենք մեր ազգային գաղափարի երեք մեծագույն խորհրդանիշներին՝ Մասիս լեռանը, խաչին, լեզվին ու այբուբենին եւ նրանց առանձնահատուկ բնույթին:

ՄԱՍԻՍ ԼԵՌԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ԲՆՈՒՅԹԸ



Հայոց պարագայում այս խորհրդանիշը այնքան անառարկելի է, այնքան հզոր ոգեղեն ու անվրեպ ազդեցություն ունի յուրաքանչյուր հայորդու եւ, նույնիսկ, ոչ հայի վրա, այնքան հնուց է գործում այդ ֆունկցիան, որ դժվար է նման երկրորդ երեւույթ գտնել: Մասիսը աստվածային, հավերժական ու շարունակական ուղերձ է հայերին ու ողջ մարդկությանը՝ փրկության ու հավերժական ճշմարտությունների մասին: Սա այն անանախադեպ իրողությունն է, երբ ազգային սրբազան խորհրդանիշը այդպիսին է նաեւ համայն մարդկության համար: Այսպիսի համամարդկային մի ուրիշ խորհրդանիշ իրոք չկա: Իր տեսքով ու դիրքով Մասիսը կարծես կոչված է անընդհատ հիշեցնելու հայերին ու մարդկությանը, թե ովքեր ենք մենք եւ որն է մեր ազգային գաղափարը: Նաեւ խորհրդանշական է, որ մեր ճշմարիտ պատմության առեւանգման փորձի հետ միաժամանակ

կատարվեց մեր ազգային գաղափարի այդ խորհրդանիշի ֆիզիկական գերեվարումը: Եվ մենք կվերադարձնենք մեր սրբազան լեռը, երբ լիովին տեր կկանգնենք մեր սկզբնական պատմությանը եւ աստվածատուր ազգային գաղափարին:

ԽԱՉԸ

Մեր առանձնահատկությունն այն է, որ ունենք ազգային գաղափարի եւս մեկ համարժեք խորհրդանիշ՝ Աստծո եւ աստվածային լույսի նշան խաչը:

Խաչի համաքրիստոնեական խորհրդանշան դառնալու փաստը չպետք է մեզ խանգարի նշելու կարեւոր այն իրողությունը, որ Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքը ծայրից ծայր լեցուն է վաղնջական սրբազան նշանի՝ խաչի պատկերներով՝ դեռ քրիստոնեական դարձից շատ ավելի առաջ: Եվ եթե մյուս քրիստոնյաների համար խաչը Հիսուս Քրիստոսի երկրային մահվան գործիքի սրբագործված նշանն է միայն, ապա խաչապաշտ հայոց համար այն ի սկզբանե եղել է Աստծո եւ նրա ճշմարտության լույսի խորհրդանիշը: Սա երկրորդ ազգային խորհրդանիշն է, որ լինելով մեր ազգային գաղափարի խորհրդանիշը, դարձել է նաեւ համամարդկային: Նկատի ունենալով ամենահնագույն ժայռապատկերներից մինչեւ մեր



օրերը ստեղծված խաչի պատկերների առկայության ծավալները մեր պատմական տարածքում, հարկ է փաստել, որ աշխարհի մնացած ողջ տարածքում չկա խաչի այնքան պատկեր, որքան միայն Հայկական լեռնաշխարհում:



Ազգային գաղափարի երրորդ խորհրդանիշը հայոց լեզուն եւ աստվածապարգեւ, մաշտոցյան կատարյալ այբուբենն է:

Եվ հայը գոյություն ունի այնքան ժամանակ, քանի դեռ տոգորված է ազգային գաղափարով եւ իր սրտում կրում է խաչը, մտքում՝ Մասիսը եւ շուրթերին՝ մեսրոպատառ խոսքը:

Այսքանը հայոց ազգային գաղափարի մասին:

Այժմ պարզենք, թե ինչ է նշանակում մեզ տրված աստվածային առանձնահատուկ շնորհը: Ամենից առաջ դա պարտականություն է եւ պարտավորություն: Հետեւաբար, առանձնաշնորհի արժանանալը ենթադրում է որոշակի նպատակների, ուղղվածության եւ կենսակերպի հետեւողական, աննահանջ իրագործում: Ուրեմն պարզենք, թե ի՞նչ համամարդկային ֆունկցիա կատարելու, ի՞նչ առաքելության է կոչված մեր ազգն ու երկիրը, արժանանալով նման շնորհը կրելու պատվին:

(շարունակելի)

Սերգեյ Մինասյան

Գլխավորում է ՀԼՄ-ների Կովկասյան Հեղափոխությունների բաժինը: Պատմական գիտությունների թեկնածու է, քաղաքագետ, հեղինակ է տարածաշրջանային անվտանգության եւ Հարավային Կովկասի հակամարտությունների տարբեր կողմերին նվիրված բազմաթիվ գիտահետազոտական եւ վերլուծական աշխատությունների:



Ղավախքը եւ հայ քաղաքական ընկալման մեջ հայ-վրացական հարաբերությունների հեռանկարները

Նախաբան

Ղավախքը շարունակում է մնալ այն կարեւորագույն քաղաքական հիմնախնդիրներից մեկը, որոնք ծառացած են հայոց պետականության եւ հասարակայնության առջեւ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Սփյուռքում: Միաժամանակ, հայ քաղաքական ընտրանու եւ նույնիսկ Հայաստանի փորձագիտական-վերլուծական հանրության ընկալման մեջ հիմնախնդիրը տուժում է վառ արտահայտված ստերեոտիպության երանգից եւ հստակ «կենցաղային գործնականության» առկայությունից1:

Համապատասխանաբար, հիմնախնդրի լուրջ հասարակական քննարկման բացակայության, նշանակալիության եւ Հայաստանի քաղաքական դաշտի ներկայացուցիչների մեծ մասի գիտակցության մեջ արմատացած առասպելների անբավարար վերլուծության պայմաններում ամեն ինչ հանգում է միայն հարցի մակերեսային պատկերացմանը, իսկ Ղավախքին առնչվող քաղաքական որոշումներն ընդունվում են պաշտոնական Երեւանի (եւ/կամ առաջատար հայկական քաղաքական ուժերի) կողմից՝ հաճախ պարզապես չխորանալով հիմնախնդրի բուն էության մեջ:

Ակնհայտ է նաեւ, որ Ղավախքի հարցն ամենակարեւորն է հայ-վրացական միջպետական հարաբերությունների շարքում եւ որպես հիմնախնդիր, որը կարող է մթագնել դրանց հետագա զարգացումը, բայց եւ (լուծման միասնական մոտեցումների հայտնաբերման դեպքում) իբրեւ Հայաստանի եւ Վրաստանի համագործակցության հաջողված արդյունք:

Ղավախքը որպես քաղաքական հիմնախնդիր. հայ քաղաքական ընտրանու ստերեոտիպերն ու առասպելները

Ղավախքի ենթակայական ընկալումն ավելի լավ հասկանալու համար կարելի է նույնիսկ յուրօրինակ զուգահեռներ անցկացնել Ղարաբաղյան կարգավորման հեռանկարների մակերեսային ընկալման հետ, որոնք գոյություն ունեն Հայաստանի քաղաքական ընտրանու ներկայացուցիչների մեծ մասի մեջ[2]: Հայաստանի փորձագետները եւ գործող քաղաքական գործիչները, ովքեր այս կամ այն չափով լրջորեն զբաղվում են Ղարաբաղյան խնդրադրությամբ, քաջածանոթ են նմանօրինակ հայտարարություններին ու պատկերացումներին, որոնք արվում են մակերեսորեն՝ չխորանալով բուն խնդրի մեջ:

Փաստորեն, նույնպիսի իրավիճակ է ստեղծվում նաեւ Ղավախքի հիմնախնդրի շուրջ. ելնելով իրենց ստերեոտիպներից եւ ավելի քան հարյուր հազար բնակիչ ունեցող շրջանի մասին իրական տեղեկատվության բացակայությունից՝ հայ քաղաքական ընտրանու բազմաթիվ ներկայացուցիչներ սկսում են անմիջապես եզրակացություններ անել եւ

որոշումներ ընդունել՝ ելնելով սովորական «կենցաղային գործնականությունից»՝ հիմնախնդիրն ինքնաբերաբար հանգեցնելով միայն Հայաստանի՝ Վրաստանի տարածքով տրանսպորտային հաղորդակցությունների հարցերին, Ախալքալաքում ռուսական ռազմահանգրվանի առկայությանը (եւ համապատասխանաբար՝ «Մոսկվայի ձեռքին» տվյալ շրջանում իրավիճակի սրման հարցում) կամ «որոշակի ազգայնական ուժերի մեքենայություններին»: Շատ տարածված են նույնացումները «երկրորդ Ղարաբաղի» հետ. համարվում է, թե Երեւանի ցանկացած աշխուժացումն այդ հարցում անմիջապես կհանգեցնի բացահայտ հակամարտության կամ նույնիսկ գրեթե պատերազմի Վրաստանի հետ:

Վերջին երկու-երեք տարում Ջավախքի հարցում ի հայտ են եկել նաեւ նոր ստերեոտիպներ. պայմանավորված Հայաստանի եվրոպական եւ եվրոատլանտական համարկման գործընթացների աշխուժացմամբ, Երեւանի եւ ԱՄՆ-ի ու եվրոպական երկրների հետ լուրջ շփումների հաստատմամբ՝ հայկական քաղաքական ընտրախավի շրջանում սկսել են եզրակացնել, որ եթե Վրաստանը օգտվում է Վաշինգտոնի եւ Բրյուսելի «բարեհաճությունից», ապա Վրաստանի քաղաքականության ցանկացած քննադատություն՝ կապված Ջավախքի հիմնախնդիրների հետ, կարող է Հայաստանի համար խնդիրներ առաջացնել ԱՄՆ-ի, ԵՄ-ի կամ ՆԱՏՕ-ի հետ փոխհարաբերություններում: Նման տրամադրությունները հատուկ են հատկապես Հայաստանի ներկայիս ազատական ընդդիմադիր ուժերին:

Սակայն բնական է, որ, ինչպես ցանկացած քաղաքական խնդրում (իսկ Ջավախքի հիմնախնդիրն առաջին հերթին հենց քաղաքական է), իրավիճակը շատ ավելի բարդ է, պատճառները շատ ավելի խորն են եւ ավելի լուրջ լուծումներ են պահանջում: Այդ պատճառով Հայաստանի քաղաքական ղեկավարության եւ քաղաքական ընտրանու դիրքորոշումներն ու գործողությունները Ջավախքի հարցում պետք է առավել կշռադատված լինեն, տեղ-տեղ՝ նույնիսկ ավելի սկզբունքային: Հիմնախնդիրը համապատասխանորեն ընկալելու համար անհրաժեշտ է ոչ թե մակերեսորեն նայել դրան, այլ ելնել իրավիճակի եւ հայոց պետականության զարգացման երկարաժամկետ հեռանկարների խոր *վերլուծությունից*:

Ջավախքը հայոց պետականության երկարաժամկետ շահերի համատեքստում. իրողություններ եւ հիմնախնդիրներ

Ջավախքի ընկերային-տնտեսական, մշակութային եւ քաղաքական հիմնախնդիրների լուծման գործում Հայաստանի առավել աշխույժ ներգրավումը զուտ հայ-վրացական հարաբերությունների եւ հաղորդակցությունների համատեքստում ճիշտ չէ: Առավել եւս, երբ Հայաստանի՝ Ջավախքի հիմնախնդիրներին առնչվող բոլոր նախաձեռնությունները տրամաբանորեն եւ քաղաքական ու իրավական տեսանկյունից ամբողջովին տեղավորվում են Վրաստանի տվյալ շրջանում մարդու եւ էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության բավական ուղղամիտ (կոռեկտ) չափանիշներում:

Մյուս կողմից՝ Հայաստանի համար Վրաստանի տարածքով անցնող հաղորդակցությունների կարեւորության մասին տարածված ու ակնհայտ թեզը կարիք ունի զգալի ճշտումների: Նախ՝ թեեւ Հայաստանն իրոք զգալի չափով կախում ունի Վրաստանով անցնող հաղորդակցություններից, սակայն պետք է նկատի ունենալ, որ Թբիլիսին էլ իր հերթին զգում է դրանց կայուն գործարկման կարիքը՝ ելնելով ինչպես իր տնտեսական, այնպես էլ քաղաքական նկատառումներից: Տարանցումից ստացվող գումարը կազմում է Վրաստանի եկամտի զգալի մասը, իսկ Հայաստանի հաղորդակցությունների գործարկման սպառնալիքների դեպքում Վրաստանի գլխին կախվող քաղաքական սպառնալիքները վրացական ղեկավարությունը պիտի գիտակցի. Հայաստանի ներկայիս կիսաշրջափակման պայմաններում Վրաստանի այդօրինակ գործողությունները հայկական կողմին կստիպեն ապաշրջափակման նպատակով դիմել համապարփակ հակագործողությունների՝ անկախ դրանց հետեւանքներից Հարավային Կովկասի համար: Այս օրինակը բերում ենք միմիայն տեսական հակափաստարկի նպատակով. պարզ է, որ Հայաստանը չի պատրաստվում Ջավախքի հարցում տարածքային պահանջ-

ներ ներկայացնել Վրաստանին, իսկ ցանկացած գործողություն Վրաստանում ապրող հայ էթնիկ փոքրամասնության իրավունքների պաշտպանության ուղղությամբ չի կարող այդ երկրի կողմից Հայաստանի հաղորդակցությունները շրջափակելու օրինական պատճառ լինել: Եվ, վերջապես, չպետք է մոռանալ, որ ինչպես բոլոր այն երկրների դեպքում, որոնց տարածքով անցնում են մեծ նշանակության խողովակաշարեր կամ հաղորդակցություններ, Վրաստանն ինքն է դառնում իր սահմաններով անցնող հաղորդակցությունների անվտանգության պատանդը: Խողովակաշարերի պարագայում կարելի է ասել, թե Վրաստանը եւ նրա բազմաթիվ ազգային շահեր վաղուց արդեն վերածվել են երկրի տարածքով անցնող քարյուղի եւ գազի հոսքերի պատանդի:

Բացի այդ, ինչպես ցանկացած մեկ այլ երկիր, Վրաստանն ունի իր երկարաժամկետ քաղաքական զարգացման կարեւորագույն ռազմավարական առաջնահերթությունները՝ մուտքը ՆԱՏՕ, իսկ հետագայում՝ ԵՄ: Իր երկու նախկին ինքնավարությունների (Աբխազիայի եւ Հարավային Օսիայի) հետ շարունակվող հակամարտության, երկրում գոյություն ունեցող լուրջ կրոնական եւ էթնիկ ատելության, տնտեսության ոլորտում անբարենպաստ իրավիճակի պայմաններում Վրաստանի կողմից հրահրված ցանկացած նոր հակամարտություն, որը կսպառնա ոչ միայն Հայաստանի, այլեւ ամբողջ Հարավային Կովկասի տարածաշրջանային հաղորդակցությունների անվտանգությանը, խաչ կքաշի վրացական պետականության նշված առաջնահերթությունների վրա: Այդ իսկ պատճառով վրացական ղեկավարության համար գոյություն ունեն շատ լուրջ առարկայական եւ ենթակայական սահմանափակումներ Հայաստանի՝ իր տարածքով անցնող հաղորդակցությունների համար որեւէ սպառնալիք ստեղծելու դեպքում:

Թեեւ Վրաստանը շատ առումներով օգտվում է արեւմտյան երկրների ու կազմակերպությունների աջակցությունից, հաճախ դա արդյունք է միայն Ռուսաստանի հետ ունեցած նրա սուր դիմակայության: Հակառուսական ճարտասանությունն ու քաղաքականությունը զգալի պաշարներ են, որոնց հմուտ օգտագործումը որոշակի առավելություններ է տալիս Թբիլիսիին: Մինչեւ վերջերս Հայաստանը Ջավախքի հիմնախնդիրներից հեռու պահելը Վրաստանին թույլ էր տալիս Ջավախքի իրավիճակը ներկայացնել իբրեւ Ռուսաստանի սադրանքների հետեւանք: Վրացական կողմը 1990-ականների կեսերից սկսած եւ այսօր էլ կարողանում է առավելագույնս օգտագործել այն քաղաքական պաշարը, որը եվրոպացիների ու ամերիկացիների աչքում նրան տալիս է ռուսական ռազմահանգրվանի առկայությունը Ախալքալաքում՝ շահարկելով ռազմակայանի տնտեսական ու քաղաքական նշանակության գործոնը տեղի բնակչության հանապազօրյա խնդիրների լուծման գործում, սեզոնային աշխատանքների նպատակով շրջանի բազմաթիվ բնակիչների պարտադրված արտագաղթը Ռուսաստան եւ Ջավախքի հայերի կապերը Ռուսաստանի Դաշնության հետ: Կարելի է նույնիսկ ասել, թե դեռ 1990-ական թվականներին վրացական իշխանությունները եւ փորձագետները ԱՄՆ-ին ու Եվրոպային որոշակիորեն «ենթադրություն» էին ենթարկում Ջավախքում առկա «ռուսական գործոնով», ինչն էլ բացատրում է այն փաստը, թե ինչու այդ ամբողջ ժամանակաշրջանում պաշտոնական Թբիլիսին որեւէ քայլ չի արել այդ շրջանում ընկերային-տնտեսական եւ քաղաքական իրավիճակը բարելավելու ուղղությամբ:

Սակայն ներկայումս ռուսական գործոնը, փաստորեն, կորցրել է իր նշանակությունը Ջավախքում (իսկ 62-րդ ռուսական ռազմահանգրվանի դուրս բերումից հետո կարող է ուշադրության չարժանանալ), եւ քաղաքական հիմնախնդիրն այդ շրջանում արդեն բերվում է իբրեւ հայ-վրացական ձեւաչափ: Այդ պատճառով Հայաստանի խելամիտ գործողությունները (գոյություն ունեցող քաղաքական-իրավական չափանիշներին եւ էթնիկ փոքրամասնությունների պաշտպանության հարցում Վրաստանի ստանձնած պարտավորություններին համապատասխան լինելու պարագայում) Ջավախքի բնակչության իրավունքների պաշտպանության հարցում չեն առաջացնի եվրոպական երկրների հակագործողությունները: Վերջին շրջանում բազմաթիվ արեւմտյան հետազոտական կենտրոններ Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների պաշտպանության հետ կապված իրավիճակի մասին իրենց վերլուծություններում ու խորհրդատվություններ-

ռում խստորեն քննադատում են այն եւ վրացական կառավարությանը առաջարկում են արմատական քայլեր ձեռնարկել փոքրամասնությունների հանդեպ իրենց քաղաքականությունը մեղմացնելու ուղղությամբ[3]: Չպետք է մոռանալ, որ վերջին ամիսներին ռուս-վրացական հարաբերությունների ծայրահեղ սրումից հետո (որը, ինչպես շատերն են համարում Արեւմուտքում, հետեւանք է ներկայիս վրացական ղեկավարության անհամապատասխան վարքագծի) ընդհանուր առմամբ բավականաչափ աճել է եվրոպական կառույցների եւ նույնիսկ ԱՄՆ-ի քննադատական վերաբերմունքը Վրաստանի նկատմամբ: Նման պայմաններում Հայաստանի անգործությունը տվյալ հարցում միայն հնարավորություն է ընձեռում արտաքին ուժերին օգտվելու հայ քաղաքական ընտրանու շրջանում առկա ստերեոտիպներից եւ սպառնալու այդ տարածաշրջանի զանազան հիմնախնդիրները բուն Հայաստանի դեմ օգտագործելու հնարավորությամբ:

Վերջապես չպետք է մոռանալ հայկական Ջավախքի հետագա թուլացման (որի գործընթացը կուժեղացնի կամ կդառնա առարկայական իրողություն, եթե չլինի Հայաստանի եւ Սփյուռքի աջակցությունը) կարեւորագույն աշխարհաքաղաքական հետեւանքների մասին, որի վտանգավորությունը հայոց պետականության երկարաժամկետ շահերի տեսանկյունից ակնառու է եւ անվիճելի: Գործընթացների զարգացումը Կարս-Ախալքալաք երկաթուղագծի հնարավոր շինարարության շուրջ բավական լավ է ցուցադրում այդ *փաստը*:

Օրինակ Հայաստանի եւ Վրաստանի գործընկերային հարաբերությունների խորացման համար

Վերջին շրջանում ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի քաղաքական բանավեճերում հրատապ է դառնում երկկողմ միջպետական հարաբերությունների հիմնախնդիրը: Երկու երկրներում անցկացված զանազան սոցիոլոգիական հարցումների տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի եւ Վրաստանի հասարակայնությունը տարբեր կերպ է ընկալում երկու երկրների քաղաքական փոխգործակցության հեռանկարները: Ընդ որում՝ շատերը դրանք բավականաչափ բացասաբար են գնահատում, եւ եթե հայ հասարակության համար հիմնական բացասական բաղադրիչը վրաց-թուրքական, ինչպես նաեւ Թբիլիսիի եւ Բաքվի փոխհարաբերությունների խորացման վտանգն է, ապա վրացական քաղաքական ընտրանու եւ հասարակության համար գլխավոր նյարդայնացնող հանգամանքը հայ-ռուսական ռազմավարական գործընկերությունն է:

Բնական է, որ Վրաստանի եւ Հայաստանի փոխհարաբերությունները վերլուծելիս կարեւորագույն գործոն է Ջավախքի հիմնախնդիրը, ինչպես նաեւ Վրաստանի այլ շրջաններում, հատկապես Թբիլիսիում ապրող հայ բնակչությանն առնչվող բազմաթիվ հարցեր: Եվ եթե Թբիլիսիի համար տվյալ հարցերը հիմնականում դիտարկվում են Ջավախքի հայերի «անջատողական·ու ծայրահեղական» տրամադրությունների, հայերի կողմից Վրաստանում հայկական եկեղեցիների ու մշակութային հաստատությունների նկատմամբ հավակնությունների լույսի ներքո, ապա Հայաստանում շատերի համար բոլոր այդ հիմնախնդիրները առավելաբար սահմանափակվում են Ջավախքի հայ էթնիկ տարրի պահպանման, անհրաժեշտ ընկերային-տնտեսական պայմանների, ինչպես նաեւ

Վրաստանում հայերի քաղաքական, լեզվական ու կրոնական իրավունքների նվազագույն ապահովման հարցերով:

Միաժամանակ, Ջավախքի հարցում երկու երկրների իշխանությունները ջանում են հնարավորինս համաձայնեցնել իրենց դիրքորոշումները: Օրինակ, 2006 թ. հոկտեմբերին Վրաստանի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների շուրջ տեղի ունեցած վերջին զարգացումները

ցույց տվեցին Հայաստանի եւ Վրաստանի համապատասխան մարմինների ու ծառայությունների գործողությունների համակարգվածությունը:

Պետք է նաեւ հաշվի առնել, որ վերջին տարիներին հստակորեն դրսեւորվում է երկու երկրների քաղաքական մոտեցումների ընդհանրությունը եվրոպական ու եվրատլանտական համարկման հարցերում, որոնք կարող են մեծ խթան հանդիսանալ գործընկերությունը եւ բարիդրացիությունը Հայաստանի եւ Վրաստանի միջեւ խորացնելու համար: Սերտ հայ-վրացական համագործակցությունը արտաքին քաղաքականության եւ անվտանգության ոլորտում ունի հետագա մեծ հնարավորություններ, ինչը կհանգեցնի նոր իրավիճակի Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության համակարգում: Սակայն անվտանգության ոլորտում Հայաստանի կարծիքը հաշվի առնելը Թբիլիսիի կողմից պետք է անպայման ուղեկցվի Ջավախքի հայ բնակչության եւ վերջինիս քաղաքական ու ընկերային-տնտեսական հիմնախնդիրների լուծման նկատմամբ Վրաստանի մոտեցումների լուրջ սրբագրմամբ, ինչպես նաեւ ռուսական զորքերը Վրաստանի տարածքից դուրս բերելուց հետո պետք է փնտրվեն նոր մեխանիզմներ նրա ֆիզիկական անվտանգությունը ապահովելու համար: Տվյալ խնդիրը լուծելիս Թբիլիսին եւ Երեւանը պետք է փնտրեն նոր գործընկերներ, որոնք կարող են հանդես գալ երկու երկրների քաղաքական հարաբերությունների՝ իբրեւ տարածաշրջանային կայունության եւ ամբողջ Հարավային Կովկասի անվտանգության տարրի զարգացման երաշխավորներ: Հայաստանը կենսականորեն շահագրգիռ է Վրաստանի, հատկապես՝ ջավախահայ բոլոր քաղաքացիների անձնական, քաղաքական, ընկերային-տնտեսական, կրոնական, կրթամշակութային եւ լեզվական իրավունքների երաշխիքներով՝ հաշվի առնելով գոյություն ունեցող միջազգային եւ եվրոպական չափանիշներն ու չափորոշիչները, ինչպես նաեւ Վրաստանի ստանձնած (մի շարք միջազգային կազմակերպություններ մուտք գործելիս) պարտավորությունները ազգային ու կրոնական փոքրամասնությունների պաշտպանության հարցում[4]: Հայաստանը համակողմանի աջակցություն է ցույց տվել եւ այսուհետեւ էլ ցույց կտա Ջավախքում ընկերային-տնտեսական ու մշակութային-կրթական ծրագրեր իրականացնելիս: Սակայն Վրաստանի իշխանությունները եւս պետք է նույնպիսի պատրաստակամություն հանդես բերեն այդ խնդիրների լուծման գործում:

Ցավոք, պաշտոնական Թբիլիսիի կողմից դա հաճախ հանգեցվում է զուտ հռչակագրային ու ձեւական միջոցառումների: Պաշտոնական Թբիլիսիի հղումները Սամցխե-Ջավախքի առօրյա հոգսերը լուծելու նպատակով շրջանում մի շարք նախագծեր ամերիկյան «Հազարամյակի մարտահրավերները» ծրագրի շրջանակներում շուտափույթ իրականացնելու մասին արդեն համոզիչ չեն թվում ո՛չ հայկական իշխանություններին, ո՛չ Ջավախքի բնակչությանը: Նախ՝ նշված ամերիկյան ծրագիրը (որի մասնակի իրականացումը շատ առումներով հնարավոր դարձավ ԱՄՆ-ի հայկական համայնքի ճնշման ներքո) Ջավախքում կսկսի իրականանալ միայն 2007 թ., եւ երկրորդ՝ նպատակ ունենալով շրջանը Թբիլիսիի հետ կապող ավտոմայրուղու վերականգնումը՝ այդ ծրագիրը չի նախատեսում այլ մասշտաբային նախագծեր Ջավախքում, որոնք արագ արդյունք կտային եւ կնպաստեին տեղի բնակչության վիճակի բարելավմանը կարճաժամկետ հեռանկարում:

Երկու երկրների հետագա կայուն փոխգործակցության համար ստեղծված աշխարհաքաղաքական ու տնտեսական պայմաններում անհրաժեշտ է գտնել հարաբերությունների նոր ձեւաչափ, որը պետք է սրբագրի երկու երկրների՝ որոշ առումներով այնքան էլ չհամապատասխանող մոտեցումները: Հետագայում Հայաստանի եւ Վրաստանի երկկողմ համագործակցության կարեւոր կայունացնող տարրեր կարող են լինել այդ երկրների եվրոպական համարկման գործընթացները, հատկապես՝ ԵՄ-ի «Եվրոպական հարեւանության քաղաքականություն» նոր ծրագրի շրջանակներում, եւ համագործակցությունը Եվրոպայի խորհրդի ձեւաչափում:

Սակայն երկկողմ համագործակցության հեռանկարների առումով իրական կայունացնող գործոն կարող է լինել միայն լուծումների առավել առարկայական ու մանրազնին հայտնա-

բերումը Հայաստանի եւ Վրաստանի հարաբերություններում առկա ամենասուր հիմնախնդրի՝ Ջավախքում իրավիճակի բարելավման եւ Վրաստանի հայ բնակչության իրավունքների պաշտպանության *գործում*:

Եզրակացություն եւ հետեւություններ

Ջավախքի հարցում հաշվի առնելով նույնիսկ արդեն բաց թողնված ներուժը՝ հայկական կողմի համար առաջվա պես պահպանվում են լուրջ հնարավորություններ Հայաստանի եւ Ջավախքի բնակչության համար շահավետ քաղաքական նախաձեռնություններ իրականացնելու առումով: Մասնավորապես, դրա համար անհրաժեշտ է կարճաժամկետ հեռանկարում Հայաստանի ներքաղաքական դաշտում խթանել հասարակական հետաքրքրությունը Ջավախքի հիմնախնդրի առարկայական քննարկման նկատմամբ: Հայաստանի շահերը պահանջում են, որ Ջավախքում չոտնահարվեն հայ բնակչության իրավունքները, չփոխվի ժողովրդագրական պատկերը, եւ տեղի բնակչությունն ի վիճակի լինի պահպանելու իր մշակույթը, լեզուն, կրթությունը եւ տիրապետի որոշակի քաղաքական իրավունքների եւ ինքնակառավարման համապատասխան մակարդակի: Հակառակ դեպքում ամենամոտ ժամանակներում ի հայտ կգան լուրջ հիմնախնդիրներ հայկական պետականության անվտանգության եւ զարգացման համար, վտանգավոր նախադրյալներ, որոնք առարկայորեն կնպաստեն ադրբեջանական-թուրքական ազդեցության տարածմանը Վրաստանում, ինչպես նաեւ Հայաստանի աշխարհագրական եւ հաղորդակցային մեկուսացմանը Կարս-Ախալքալաք երկաթուղագծի իրականացման դեպքում եւ ադրբեջանական էքնիկ տարրի տարածմանը Հայաստանի հյուսիսային սահմանների երկայնքով:

Ելնելով դրանից՝ կենսականորեն կարեւոր է, որպեսզի փոխվի Ջավախքի հիմնախնդրի ստերեոտիպային ընկալումը հայ քաղաքական ընտրանու կողմից, ինչի համար հարկավոր է տվյալ հարցի առարկայական եւ սկզբունքային քննարկման խթանումը երկրում եւ Հայաստանի պետական քաղաքականության աշխուժացումը՝ կապված այդ շրջանի ճակատագրի հետ: Այժմ արդեն որոշ փորձագետներ եւ հայ հասարակական-քաղաքական շարժումների ներկայացուցիչներ մտահոգություն են հայտնում, թե հարաբերական կայունացումը եւ հակամարտային ներուժի նվազումը Ջավախքում արդյունք են միայն վրացական ղեկավարության կողմից ժամանակ շահելու եւ ընդհուպ մինչեւ 2007 թվականի ավարտը՝ Ախալքալաքից 62-րդ ռուսական ռազմակայանի ամբողջական դուրս բերումը, իրադարձություններ չսադրելու ցանկությամբ: Դրանից հետո, նրանց կարծիքով, վրացական իշխանությունների կողմից կարելի է սպասել ճնշման նոր փուլի եւ քաղաքական գործընթացների աշխուժացման: Այդպիսով Ջավախքում կարելի է սպասել քաղաքական գործընթացների աշխուժացման, որոնք կարող են լրջորեն անդրադառնալ հայ-վրացական հարաբերությունների հետագա զարգացման ու տարածաշրջանային անվտանգության վրա:

[1] Սույն հոդվածի խնդիրը չէ քննարկել Ջավախքի ընկերային-տնտեսական եւ քաղաքական իրավիճակը, որի մանրագնին լուսաբանմանը նվիրված են մեր նախորդ աշխատանքները: Մանրամասն տե՛ս Ս. Մինասյան, Իրավիճակը Ջավախքում ռուսական ռազմահանգրվանները Վրաստանից դուրս բերելու համատեքստում, 21-րդ դար, թիվ 1, Երեւան, 2005 (ռուսալեզու պարբերական); Minasian S., Samtskhe-Javakhetia: What Will Happen after Russia Withdraws Its Military Bases from Georgia// Central Asia and Caucasus, N1, 2006.

[2] Մասնավորապես՝ բազմաթիվ քաղաքական գործիչներ եւ փորձագետներ Հայաստանում պնդում են, թե իբր հնարավոր է Ղարաբաղյան հիմնախնդրի «կարգավորումը», օրինակ, ԼՂՀ-ի որոշ տարածքներ, իբրեւ «արդարացի փոխզիջման» նախապայման, Ադրբեջանին հանձնելու ճանապարհով, ինչը կդառնա խաղաղության ձեռք բերման, հաղորդակցությունների ապաշրջափակման գրավական եւ այլն: Բնական է, որ բոլոր այդ մոտեցումները որեւէ ընդհանուր բան չունեն Ղարաբաղյան կարգավորման շուրջ ստեղծված քաղաքական իրողության հետ, բայց բավական տարածված են հայկական քաղաքական շրջանակում:

[3] Մանրամասն տե՛ս Georgia's Armenian and Azeri Minorities// International Crisis Group, Europe Report N178, 22 November 2006.

[4] Մանրամասն տե՛ս Վրաստանում էքնիկ կրոնական, լեզվական եւ այլ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրների մասին. Ս. Մինասյան, էքնիկ փոքրամասնությունները Վրաստանում. համարկման ներուժը երկրի հայ բնակչության օրինակով: Երեւան, CMI, 2006 (ռուսերեն եւ հայերեն):

ԹՈՒՐՔԻԱՆ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հնարավոր բեմագրություններ



Կարեն Վերանյան

Ավարտել է Երեւանի Պետական Համալսարանի Արեւելագիտության ֆակուլտետը: Լեզվի կատարելագործման ու մասնագիտական վերապատրաստման նպատակով մեկնել է Եգիպտոս, որտեղ ուսումը շարունակել է Կահիրեի Պետական Համալսարանի բանասիրության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնում, ինչպես նաեւ Կահիրե քաղաքում «Արաբերեն լեզվի ուսուցման կենտրոն»-ում: Աշխատանքային փորձառություն է ձեռք բերել նաեւ Եգիպտոսում ՀՀ դեսպանատանը:

2004 թվականից սկսած մինչ օրս աշխատում է «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում որպես Հարավային Կովկասի գծով քաղաքական փորձագետ: 40-ից ավելի քաղաքական-քաղաքագիտական հրատարակված հոդվածների հեղինակ է:

Հարավկովկասյան տարածաշրջանային բազմակողմանի զարգացումներին, ի թիվս այլ արտաքին դերակատարների, վերջին տասնամյակում աշխուժորեն ներգրավվել է հարեւան Թուրքիան: Այդ տերությունն այսօր լուրջ մարտահրավեր է նետել տարածաշրջանում ԱՄՆ-ի, Ռուսաստանի կամ եվրոպական առաջատար տերությունների դիրքերին՝ կարողական (պոտենցիալ) հայտ ներկայացնելով վերածվելու *տարածաշրջանային* գերտերության:

Այսօր պաշտոնական Անկարան տիրապետում է կարողական հնարավորությունների՝ ընդլայնելու իր ռազմաքաղաքական, տնտեսական-մշակութային ազդեցությունը թե՛ Հարավային Կովկասում եւ թե՛ մերձ-տարածաշրջաններում: Ի հավելումն վերը հիշատակված ոլորտների, վերջին տասնամյակում թուրքական պետությունը անհամեմատ բարձր ցուցանիշներ է արձանագրում մասնավորապես ժողովրդագրական ոլորտում, ինչը վերջին տարիներին հայաստանյան մամուլում ու վերլուծաբանական հանրությունում չի արժանացել անհրաժեշտ ուշադրության: Մինչդեռ երկրագնդի բնակչության ժողովրդագրական աճի ներկայիս միտումը 21-րդ դարի լրջագույն հիմնախնդիրներից մեկն է: Հարցի կարեւորությունն առավել շեշտադրված է հատկապես անհամեմատ արագ կշռույթներով (տեմպերով) բազմացող իսլամադավան բնակչության պարագայում: Սակայն ի տարբերություն այլ մուսուլմանական երկրների, որտեղ բնակչության աճի բարձր ցուցանիշների առկայությունը պայմանավորված է գերազանցապես տվյալ հասարակության ազգային (էթնո)-կրոնական, կենցաղային-բարոյահոգեբանական գործոններով, Թուրքիայի դեպքում, ի հավելումն վերջիններիս, առանձնացվում է նաեւ բնակչության աճի ապահովման գործում պետական ռազմավարությունը[1] :

Ժողովրդագրական աճի կշռույթներով Թուրքիան լուրջ մարտահրավեր է նետել թե՛ հարավկովկասյան տարածաշրջանին եւ թե՛ այնպիսի տերությունների, ինչպիսիք են Ռուսաստանն ու Իրանը: Վերլուծաբանների զգալի մասը կիսում է այն տեսակետը, ըստ որի՝ Թուրքիայի ժողովրդագրական աճի նման ցուցանիշներն առաջիկա երկու տասնամյակում լուրջ մարտահրավեր կարող են նետել ողջ Հարավային Կովկասի ժողովրդագրական, ազգային-կրոնական ներկայիս նկարագրին՝ ընդհուպ մինչեւ տարածաշրջանի համապատասխան ցուցանիշների արմատական վերափոխումները: Հաշվի առնելով Թուրքիայի՝ գերազանցապես իսլամադավան բնակչության ժողովրդագրական աճի կշռույթները, կարելի է ակնկալել, որ առաջիկա հինգ տասնամյակում երկիրը կարող է կանգնել բնակչության խտության՝ կենսականորեն անհրաժեշտ պայմանների ապահովման լրջագույն հիմնախնդրի առջեւ:

Թուրքիայի բնակչության ժողովրդագրական աճման միտումը էական նշանակություն ունի մասնավորապես Հայաստանի սահմանային ու ժողովրդագրական անվտանգության առումով: Հայաստանյան այսօրվա իրականու-

թյունում ժողովրդագրության ասպարեզում գոյություն ունեցող հիմնախնդիրները (բնակչության արտագաղթ, ծնելիության եւ բնական աճի ոչ այնքան բարձր ցուցանիշներ եւ այլն) էապես կարեւորում են հարեւան Թուրքիայի ժողովրդագրական ընդհանուր նկարագրի ու առաջիկա տասնամյակներում դրա հնարավոր զարգացումների ուսումնասիրության հարցը՝ Հայաստանի ժողովրդագրական անվտանգության ապահովման համատեքստում:

1. Թուրքիան եւ տարածաշրջանային ժողովրդագրական վիճակագրությունը

Թուրքիայի պետական վիճակագրական հաստատության (ինստիտուտի) տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ, ի տարբերություն 20-րդ դարի առաջին կեսի, երբ երկրի բնակչության բնական աճը տատանվում էր միջինը 1,5-2 միլիոն բնակչի սահմաններում, ապա նախորդ դարի երկրորդ կեսերից Թուրքիայի բնակչությունն արձանագրեց վերջինիս համեմատ 3-4 անգամ ավելի բարձր ցուցանիշներ [1]: Այսպես, 1927 թվականից ի վեր Թուրքիայի բնակչությունն աճել է շուրջ 54 միլիոնով՝ հաշվվելով գրեթե 68 մլն. (Տե՛ս Աղյուսակ 1): Պաշտոնական աղբյուրների համաձայն, 2005 թ. երկրի բնակչության թվաքանակն արդեն կազմում էր շուրջ 72,65 մլն.: Փորձագետների ուսումնասիրությունները հաստատում են, որ 2050 թ. Թուրքիայի բնակչությունը կազմելու է ավելի քան 100 մլն:

Աղյուսակ 1. Թուրքիայի բնակչությունը 1927-2000 թթ., մլն. մարդ



Աղյուսակը կազմվել է Թուրքիայի պետական վիճակագրական հաստատության տվյալների հիման վրա [1]

Հարավային Կովկասի եւ մերձ-տարածաշրջանային ժողովրդագրական ընդհանուր պատկերի ու դրա հետագա հնարավոր զարգացումների լուսաբանման տեսանկյունից բավական ուշագրավ է Թուրքիայի բնակչության բնական աճի ցուցանիշների վերլուծումն ու համադրումը տարածաշրջանի այլ երկրների հետ: Այսպես, բնակչության թվաքանակով Թուրքիան ավելի քան գերազանցում է Կենտրոնական Ասիայի 5 հանրապետությունների համապատասխան թվաքանակների հանրագումարը: 2005 թ. վիճակագրությամբ, Կենտրոնական Ասիայի 5 հանրապետությունների ընդհանուր բնակչությունը մոտավոր հաշվարկով կազմում է շուրջ 60 մլն., ինչը ոչ պակաս, քան 10 մլն.-ով զիջում է Թուրքիայի համապատասխան թվաքանակին: Ավելին, վիճակագրական տվյալների վերլուծությունից պարզվում է, որ 2005 թվականին Թուրքիայի բնակչության թվաքանակը, գրեթե համադրելի է միջինասիական եւ հարավկովկասյան 8 հանրապետությունների համապատասխան թվաքանակներին՝ միասին վերցրած [2]:

2005 թ. դրությամբ ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության (այսուհետ՝ ԱՄՆ ԿՀՎ) պատրաստած տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Թուրքիան բնակչության բնական աճի կշռույթներով գերազանցում է ճնշող մեծամասնությամբ իսլամադավան բնակչություն ունեցող տարածաշրջանային այնպիսի տերության, ինչպիսին է Իրանի Իսլամական Հանրապետությունը. 2005 թ. վիճակագրությամբ՝ վերջինիս բնակչության բնական աճը կազմում էր 0,86%, այն դեպքում, երբ Թուրքիայի համապատասխան ցուցանիշը՝ 1,09% [3]:

Օգտակար է նաեւ համադրել Թուրքիայի ու Ռուսաստանի բնակչության բնական աճի վիճակագրական վերլուծությունը. այսպես, 1935-2005 թթ. կտրվածքով Թուրքիայի բնակչության բնական աճի կշռույթները միանշանակորեն արձանագրել են դրական արդյունքներ, այն դեպքում, երբ վերջին 15 տարիներին Ռուսաստանի բնակչության բնական աճի ցուցանիշներն առանձնացել են միանշանակ բացասական արդյունքներով: Այսպես, եթե 1992 թ. երկրի բնակչության բնական աճը կազմում էր շուրջ -220 հազ. մարդ, 2001 թ. այն արդեն հաշվվում էր -958,5 հազ. մարդ [4]: Ընդ որում՝ 1935-2005 թթ. Թուրքիայի համապատասխան ցուցանիշնե-

ը, որպես կանոն, գերազանցել են 15% սահմանագիծը (բացառություն է կազմում 1945 թ. ցուցանիշը, երբ գրանցվեց շուրջ 10,5% աճ [5] (Տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Թուրքիայի բնակչության աճը 1935-2000 թթ., (տոկոսներով)



Աղյուսակը կազմվել է Թուրքիայի պետական վիճակագրական հաստատության տվյալների հիման վրա [5]

Թուրքիայի ժողովրդագրական վիճակագրությունից կարեւորվում է նաեւ երկրի բնակչության խտության արձանագրած ցուցանիշների ուսումնասիրումը: 2004 թ. տարեվերջին Թուրքիայի բնակչության միջին խտությունը, երկրի պաշտոնական աղբյուրների համաձայն, տատանվում է 75-80 բնակչի սահմաններում, ինչը քանակային առումով բավական ազդեցիկ ցուցանիշ պետք է համարել Թուրքիայի համար, որի ընդհանուր տարածքը կազմում է 780.580 հազ. քառ.կմ: Համեմատության համար նշենք, որ, ի տարբերություն Թուրքիայի բնակչության միջին խտության ցուցանիշի, բավական ցածր է Իրանի համապատասխան վիճակագրությունը: Ընդ որում՝ Իրանի տարածքը, որտեղ բնակչության ընդհանուր թվաքանակը 2005 թ. դրությամբ զիջում էր Թուրքիայի համապատասխան թվաքանակին ընդամենը 1,5 մլն.-ով, ավելի քան երկու անգամ գերազանցում է Թուրքիայի ընդհանուր տարածքը՝ հաշվվելով 1.648 մլն. քառ.կմ [6]: Նույն ընդհանրացված տրամաբանությունն է գործում նաեւ Ռուսաստանի հետ Թուրքիայի համապատասխան տվյալների համադրության դեպքում:

2. Հայաստանի ժողովրդագրական անվտանգությունը. սիսկային գործոններ

Թուրքիայի ժողովրդագրության վերլուծությունն առանցքային նշանակություն ունի առաջին հերթին Հայաստանի ժողովրդագրական անվտանգության հիմնահարցերի համալիր ուսումնասիրման տեսանկյունից, իսկ վերջինիս արձանագրած տվյալների համադրումը Հայաստանի համապատասխան վիճակագրության հետ է՛լ ավելի է հստակեցնում ոլորտում հայաստանյան իրականությունում առկա պաշարների ու հիմնախնդիրների շուրջ ընդհանրացված ու մասնակի պատկերացումները:

Այսպես, ի տարբերություն Թուրքիայի, Հայաստանի բնակչությունը, որն իր թվաքանակով զիջում է Թուրքիայի համապատասխան թվաքանակին գրեթե 23 անգամ (ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2004 թ. տարեվերջին Հայաստանի բնակչությունը հաշվվում էր 3,216 մլն.), 1995-2005 թթ. կտրվածքով նվազման միտում է արձանագրել: Եթե 1995 թ. Հայաստանի բնակչության ընդհանուր թվաքանակը կազմում էր 3,767 մլն., 2004 թ. տարեվերջին՝ ընդամենը 3,216 մլն. [7]: Ավելին, Թուրքիայի խոշոր քաղաքներից միայն մեկի՝ Ստամբուլի բնակչության թվաքանակը (երկրի պաշտոնական աղբյուրների համաձայն՝ 2005 թ. այն հաշվվում էր շուրջ 11,5 մլն.) ավելի քան եռակի գերազանցում է ողջ Հայաստանի համապատասխան թվաքանակը: ԱՄՆ ԿՀՎ հաղորդած տվյալների համաձայն, 2005 թ. վիճակագրությամբ, ի տարբերություն Թուրքիայի, Հայաստանի բնակչության բնական աճն առանձնացել է բացասական միտումով՝ հաշվվելով շուրջ -0,25% (Տե՛ս աղյուսակ 3) [8]:

Աղյուսակ 3. Թուրքիայի եւ Հայաստանի բնակչության աճը (տոկոսներով), 2005 թ.



Աղյուսակը կազմվել է ԱՄՆ ԿՀՎ տվյալների վերլուծության հիման վրա [8]

Պետք է նշել, որ Հայաստանի բնակչության բնական շարժի նման կշռույթները գերազանցապես պայմանավորված են երկրի ընկերային-տնտեսական ոչ բարենպաստ պայմաններով, ինչը, իհարկե, ուղղակիորեն իր ազդեցությունն է թողնում, առաջին հերթին, մարզերի ու շրջանների ժողովրդագրական նկարագրի վրա[2]: Մարզերում տիրող ընկերային ծանր պայմանների արդյունքում երկրում տեղի են ունենում բնակչության վերաբաշխման եւ ժողովրդագրական վերափոխակերպումների աշխույժ գործընթացներ, որոնք կարելի է դասել Հայաստանի ժողովրդագրական անվտանգությանը սպառնացող կարողական (պոտենցիալ) ռիսկային գործոնների շարքը: Երկրի մարզերի ու շրջանների բնակչության մի զգալի հատվածը ընկերային ու կենցաղային պայմանների բարելավման ակնկալիքով գերադասում է մեկնել արտերկիր կամ տեղափոխվել մայրաքաղաք Երեւան, ինչի արդյունքում երկրում արձանագրվում է հանրապետության սահմանամերձ շրջանների բնակչության նոսրացում [3] :

Այսպես, Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տրամադրած տվյալների վերլուծությունից պարզվում է, որ 1997-2004 թթ. կտրվածքով հանրապետության բոլոր մարզերի բնակչության ծնելիության ցուցանիշները միջին հաշվարկով 2,5-3 անգամ զիջել են մայրաքաղաք Երեւանում արձանագրված համապատասխան արդյունքներին: 2004 թ. դրությամբ Երեւանում ծնվածների ընդհանուր թվաքանակը հաշվվում էր 12 հազ., այն դեպքում, երբ հանրապետության մարզերից եւ ոչ մեկը չհաղթահարեց 3,5 հազ. ծնվածների սահմանագիծը [9] (Տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Հայաստանի բնակչության բնական շարժը, ծնվածներ, հազ. մարդ - 2004 թ.



Աղյուսակը կազմվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծության հիման վրա [9]

Ավելին, երկրի բնակչության ծնելիության ցուցանիշները, ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների, թեեւ 2001 թ. ի վեր նախորդ տարիների համեմատ առանձնացել են որոշակի աճման միտումով, այնուհանդերձ, դրական տեղաշարժը, որպես կանոն, գրանցվել է գերազանցապես ի հաշիվ մայրաքաղաքի:

Վերջին տասնամյակում երկրում արձանագրված սահմանամերձ մարզերի ու շրջանների բնակչության նոսրացման միտումը, հարեւան Թուրքիայի ժողովրդագրական բավական տպավորիչ նկարագրի առկայության պայմաններում, էապես կարեւորում է հեռանկարում Հայաստանի ժողովրդագրական անվտանգության ապահովման հիմնախնդիրները. սակայն ոչ միայն, նման վիճակագրական պայմանների առկայության պարագայում հարցի ուսումնասիրման լրջագույն հետեւողականություն են պահանջում նաեւ երկրի սահմանային պաշտպանվածությունն ու անվտանգության ապահովումը: Նկատենք, որ Հայաստանի հետ սահմանակից երկրներից ունեցած սահմանի երկարության ցուցանիշով Թուրքիան Ադրբեջանից հետո զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը (հայ-ադրբեջանական սահմանի երկարությունը՝ ներառյալ Նախիջեւանի հատվածը, կազմում է 787 կմ, իսկ հայ-թուրքական սահմանը՝ 268կմ)[4] : Հայաստանի սահմանային անվտանգության հիմնախնդիրների հետ է ուղղակիորեն կապակցված դրկից Թուրքիայի բնակչության միջին խտության վիճակագրության ուսումնասիրումը՝ ըստ վարչա-տարածքային բաշխվածության հաշվառման: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Թուրքիայի տարածքում բնակչության տեղաբաշխումն ընթացել է բավական անհամաչափորեն. 1990-2005 թթ., ի տարբերություն Թուրքիայի կենտրոնական ու արեւմտյան տարածքների, որտեղ բնակչությունը անհամեմատ խիտ է բնակեցված, բնակչության համալրման տեսանկյունից լուրջ խնդիրներ են գոյացել հե՛նց երկրի արեւելյան շրջաններում եւ հատկապես Հարավային Կովկասին սահմանակցող տեղանքներում (Տե՛ս Աղյուսակ 5եւ 6)[5]:

Այսպես, 2000 թ. դրությամբ, եթե երկրի ամենախիտ բնակեցված շրջանների բնակչությունը տատանվում էր 6-10 մլն. բնակչի սահմաններում, ապա բնակչության ամենացածր խտությամբ շրջաններում համապատասխան ցուցանիշները չեն գերազանցում 4 մլն. բնակչի սահմանագիծը

Իսկ Թուրքիայի ժողովրդագրական աճող կշռույթների ընդհանուր տրամաբանությունը, ինչպես վիճակագրագետների զգալի մասն է կանխատեսում, ենթադրում է երկրի բնակչության հնարավորինս հավասարապես տեղաբաշխման ապահովում ի հաշիվ Թուրքիայի արեւելյան շրջանների:

Աղյուսակ 5. Թուրքիայի բնակչության տեղաբաշխումն ըստ շրջանների, մլն. բնակիչ, 2000 թ.

Աղյուսակ 6. Թուրքիայի բնակչության միջին խտությունը ըստ շրջանների, մարդ (առանց Ստամբուլի հաշվառման), 2000 թ.





Աղյուսակները կազմվել են Թուրքիայի պետական վիճակագրական հաստատության տվյալների հիման վրա [10]

3. Թուրքիայի ժողովրդագրությունը եւ ազգային խմբերի հիմնախնդիրը. հնարավոր զարգացում

Թուրքիայի ժողովրդագրության ներկայիս բարձր ցուցանիշների առկայությունը, երկրի համար դրական կողմերից զատ, կարող է լրջագույն բացասական հետեւանքներ ունենալ ինչպես Թուրքիայի, այնպես էլ մերձտարածաշրջանի կայունության պահպանման վրա: Խնդիրն այն է, որ Թուրքիայի բնակչության ժողովրդագրական արագ աճման պայմաններում առաջիկա տասնամյակում երկիրը, ինչպես տարբեր վերլուծաբանական հանրությունների մի զգալի հատվածն է հակված ենթադրել, կանգնելու է առաջին հերթին պետություն-փոքրամասնություններ (ազգային եւ էթնոկրոնական խմբեր) լրջագույն հիմնախնդրի կարգավորման առջեւ՝ իր այս կամ այն հնարավոր զարգացումներով հանդերձ: Ավելին, որոշ փորձագիտական հետազոտություններից ստացված արդյունքները կանխատեսում են, որ ոչ հեռու ժամանակներում Թուրքիայի բազմազգ բնակչության աճն ի վերջո հանգեցնելու է երկրի մասնատմանը:

Հարցի կարեւորությունը առավելագույն ուշադրությամբ է ընկալվում առաջին հերթին Անկարայի իշխանությունների կողմից: Թուրքական կառավարությունը լրջագույնս մտահոգված է Թուրքիայի փոքրամասնությունների հիմնախնդրով, պետության համար դրա հնարավոր եւ գրեթե անկանխատեսելի զարգացումներով ու հետեւանքներով: Հարցի նկատմամբ Թուրքիայի իշխանությունների զգուշավորության դրսեւորումները պետության կազմավորումից ի վեր արտահայտվում են երկրի թե՛ քաղաքական եւ թե՛ օրենսդրական դիմագծում: Մասնավորապես, պետության կազմավորումից եւ հատկապես 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած թուրքական կառավարության կողմից հստակ մշակված ազգային քաղաքականության հետեւանքով երկրում բնակվող այլազգիները ենթարկվել են քաղաքական հետապնդումների ու ճնշումների, էապես սահմանափակվել են նրանց հիմնական իրավունքներն ու ազատությունները[6]? Մի հանգամանք, որն իր հերթին նպաստել է Թուրքիայի այլատարր խմբերի ազգային եւ էթնոկրոնական ինքնագիտակցության պահպանմանն ու ամրապնդմանը եւ հասարակությունից նրա օտարմանը: Երկրի գլխավոր օրենքի 66-րդ հոդվածում նշված է, որ «թուրքական պետության հետ քաղաքացիության կապեր ունեցող յուրաքանչյուր ոք թուրք է» [11]: Սահմանադրության մեկ այլ 42-րդ հոդվածում ասվում է, թե «ոչ մի լեզու, բացի թուրքերենից, չի կարող ուսումնասիրվել ու դասավանդվել ուսումնական հաստատություններում որպես մայրենի լեզու»[12][7]:

Վերջին տարիներին պաշտոնական Անկարան որոշակիորեն մեղմացրել է վերաբերմունքը երկրում բնակվող այլազգի ներկայացուցիչների հանդեպ, սակայն դա միանշանակորեն պայմանավորված է ԵՄ-ին Թուրքիայի ան-

դամակցության գործընթացով: Ասել է թե՝ Թուրքիայի ազգային փոքրամասնությունների ու ազգային խմբերի նկատմամբ Անկարայի պետական դիրքորոշման «որոշակի մեղմացումը», իրենից ներկայացնելով զուտ քաղաքական խնդիր, հեռանկարային առումով այլազգիների իրավունքների պաշտպանության հարցում, ըստ էության, դրական սպասելիքներ չի ենթադրում:

Ինչեւէ, նշենք, որ Թուրքիայում բնակվող ազգային կազմի վերաբերյալ տեղեկություններն ու տվյալները բավական տարբեր են եւ հաճախ էլ հակասական: Որոշ ոչ պաշտոնական հաշվարկներով, Թուրքիայում թուրքերը կազմում են ողջ բնակչության շուրջ 50-60%-ը: Այսօր Թուրքիայում պետություն-այլազգիներ հարաբերություններում առավել ուշ է դրված հատկապես քրդերի հարցը: Որոշ ոչ պաշտոնական աղբյուրների համաձայն, Թուրքիայում քրդերը հաշվվում են

շուրջ 18-20 մլն., որը կազմում է երկրի ընդհանուր բնակչության 28-30%-ը կամ 1/3-ը: Թուրքիայում քրդերը հիմնականում բնակվում են երկրի հարավարեւելյան շրջաններում, որտեղ, ի տարբերություն պետության այլ շրջանների, բնակչության ընկերային-տնտեսական իրադրությունը անհամեմատ թույլ է զարգացած: Վերջին հանգամանքը, սակայն, խոչընդոտ չի հանդիսանում քրդերի աճի ապահովման համար: Վերջիններս, ինչպես վերլուծաբաններից ոմանք են հաստատում, իրենց ժողովրդագրական աճման կշռույթով նույնիսկ գերազանցում են տեղի ազգությամբ թուրքերին:

Հարցը Թուրքիայի ներքաղաքական հիմնախնդիրների հարթությունում դիտարկելուց բացի անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ մերձավորարեւելյան աշխարհաքաղաքական-ռազմավարական գործընթացներում ունեցած նրա միջազգային նշանակությունը, ինչը Անկարայի ղեկավարության համար էլ ավելի է բարդացնում դրա կարգավորման գործընթացը: Հաշվի առնելով Մերձավոր Արեւելքում ընթացող քաղաքական ներկայիս զարգացումները (այդ թվում եւ իրաքյան ռազմարշավը, իրանա-ամերիկյան հարաբերությունների սրացումը եւ այլն), կարելի է ենթադրել միայն, որ քրդական հարցը կարող է լրջագույն ռազմավարական խաղաթուղթ դառնալ տարածաշրջանում արտաքին դերակատարների շահերի բեւեռացման պարագայում: Մի հանգամանք, որն այսօր իսկ բխում է մերձավորարեւելյան ներկայիս զարգացումների ընդհանուր տրամաբանությունից: Քրդական հիմնախնդրի հանգուցալուծման հստակեցման գործընթացին թերեւս էապես կնպաստի նաեւ ԵՄ-Թուրքիա հետագա հարաբերությունների զարգացումը:

Մերձավորարեւելյան եւ տվյալ պարագայում՝ Թուրքիայի քրդերի հիմնախնդիրը, իր կարգավորման այս կամ այն հնարավոր հետեւանքներով հանդերձ, օրեցօր էլ ավելի էական նշանակություն ունի այդ թվում եւ Հայաստանի տարածաշրջանային ու ազգային ռազմավարության համատեքստում. իսկ այն, որ խնդրի կարեւորությունն օրեցօր մեծանում է, թերեւս դժվար է չհամաձայնել:

Վերլուծաբանների մի ստվար հատվածը հանգել է այն հետեւություններին, թե Թուրքիայի բնակչության բարձր աճման միտումը առաջիկա երկու տասնամյակի կտրվածքով հանգեցնելու է Թուրքիայից քրդական համայնքի անջատմանը եւ Հայաստանի արեւմտյան շրջաններին սահմանակցող քրդական պետության ստեղծմանը: Ի դեպ, չպետք է մոռանալ, որ քրդական շարժման ղեկավարների մի մասը Իրանից, Իրաքից, Թուրքիայից կամ Սիրիայից բացի, լուրջ տարածքային պահանջներ ունի նաեւ Հայաստանի նկատմամբ: Ավելին, հրապարակվում են բազում պատմագիտական հետազոտություններ ու աշխատանքներ, որոնք խեղաթյուրում են ասիական ժողովուրդների պատմական իրողությունները: Այսպես, որոշ ուսումնասիրությունների համաձայն, քրդերը ուրարտական պետականության ու քաղաքակրթության ուղղակի հետնորդներն են [13]:

Վերջին տասնամյակների կտրվածքով, հաշվի առնելով հարցի կարգավորման հրատապությունը, Անկարայի իշխանությունները անհամեմատ աշխույժ քաղաքականու-

թյուն են վարում Թուրքիայի քրդերի համախմբվածության պառակտման ուղղությամբ՝ մասնավորապես առանձնահատուկ ուշադրություն դարձնելով նրանց ազգային (էթնիկական) կազմի հարցերին: Խնդիրն այն է, որ Թուրքիայի քրդական համայնքն իր հերթին բաղկացած է տարբեր ներէթնիկական խմբերից (դա վերաբերում է նաեւ Իրանի, Իրաքի ու Սիրիայի քրդերին), որոնք ներկայիս Թուրքիայի տարածքում քրդական պետության առաջացման հնարավորության դեպքում կարող են պահանջել իրենց ազգային ինքնորոշման իրավունքները, ինչը կարող է վկայել առաջիկա տասնամյակներում Հարավային Կովկասի ու մերձակա տարածաշրջանների ժողովրդագրական լուրջ փոփոխությունների իրականացման հավանականության մասին: Ավելին, թուրքական կառավարությունը բավական հետեւողական քաղաքականություն է վարում երկրի արեւելյան շրջաններում թուրք մեսխեթիների վերաբնակեցման հարցում: 1992 թ. Թուրքիայում ընդունվեց «Թուրքիայում թուրք մեսխեթիների ընդունման ու վերաբնակեցման մասին» օրենքը [14]: Սակայն պաշտոնական Անկարան չի սահմանափակվում Թուրքիայում վերջիններիս վերաբնակեցման հարցով՝ պատրաստակամություն հայտնելով նաեւ Թուրքիայի քաղաքացիություն տալ այն մեսխեթիներին, որոնք շարունակելու են բնակվել ետխորհրդային երկրներում[8]:

Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնությունների շարքում, ի թիվս քրդերի, կարելի է առանձնացնել նաեւ համշենահայությանը: Հստակ վիճակագրական տվյալներ գոյություն չունեն Թուրքիայի համշենահայերի վերաբերյալ. որոշ տեղեկությունների համաձայն, երկրում բնակվող համշենահայության թվաքանակը, որի ճնշող մեծամասնությունը իսլամադավան է, տատանվում է 1,5-2,5 մլն. բնակչի սահմաններում[9]: Հայտնի է, որ Թուրքիայում եւ նրա սահմաններից դուրս թուրքական կառավարության անմիջական քաղաքական, ֆինանսական հովանավորչության ներքո իրականացվում են բազում գիտահետազոտական աշխատանքներ եւ ուսումնասիրություններ, որոնք ուղղված են համշենահայության պատմական, լեզվական եւ ազգագրական խեղաթյուրմանը՝ վերջիններիս ներկայացնելով որպես ազգությամբ թուրքեր, «չայելիներ» կամ լազեր:

Բավական խնդրահարույց է նաեւ Թուրքիայում բնակվող հունական համայնքի իրադրությունը: 20-րդ դարի կեսերից Կիպրոսի հիմնախնդրի արդիականացումը հանգեցրեց Թուրքիա-Հունաստան հարաբերությունների սրացմանը, ինչի արդյունքում զգալի ճնշումների եւ հետապնդումների ենթարկվեցին նաեւ Թուրքիայում բնակվող գերազանցապես իսլամադավան հույները, որոնք տարբեր հաշվարկներով կազմում են շուրջ 1-1,5 մլն. (այլ տվյալներով՝ 2 մլն.) եւ համախմբված կերպով պահպանում են իրենց ազգային ինքնագիտակցությունը, կենցաղային ավանդույթներն ու սովորությունները:

Հավելված

Հարավային Կովկասի ու մերձ-տարածաշրջանի երկրների բնակչության աճը 2005 թ., %-ով



(Աղյուսակը կազմվել է ԱՄՆ ԿՀՎ տվյալների վերլուծության հիման վրա)

Եզրահանգումներ

Հոդվածում նպատակ չի դրվել համեմատել Թուրքիայի բնակչության ժողովրդագրական շարժի (դինամիկա) ցուցանիշները Հայաստանի համապատասխան ցուցանիշների հետ, որոնք իրենց զարգացման կշռույթներով ու վիճակագրությամբ, ըստ էության, անհամադրելի են եւ գտնվում են ուսումնասիրության տարբեր հարթություններում: Աշխատությունում խնդիր է դրված ներկայացնել Թուրքիայի բնակչության ժողովրդագրական ընդհանուր շարժը եւ դրա վերափոխակերպումների բեմագրությունները՝ Հայաստանի եւ մեծ հաշվով Հարավային Կովկասի ու մերձ-տարածաշրջանի ժողովրդագրական ներկայիս քարտեզի վրա դրա հնարավոր հետեւանքների հարցի կարեւորությունը շեշտադրելու համատեքստում? Իսկ Հայաստանի բնակչության ժողովրդագրական ոչ այնքան խոստումնալից պատկերն ու ընթացիկ միտումները, հարեւան Թուրքիայի եւ մասնավորապես երկրի հարավարեւելյան շրջանների ժողովրդագրական ներկայիս շարժի համատեքստում, մեծացնում են ժողովրդագրական հնարավոր փոփոխությունների մարտահրավերի առջեւ տարածաշրջանի եւ առաջին հերթին Հայաստանի ժողովրդագրական անվտանգության ապահովման խոցելիությունը:

[1] Կարելի է նշել, որ այդ քաղաքականությունը կազմում է պանթյուրքիզմի (պանթուրանիզմ) գաղափարախոսության կարեւորագույն նախադրյալներից մեկը:

[2] Այստեղից ամենեւին էլ օր հետեւում այն տրամաբանությունը, թե Թուրքիայում հասարակության ընդհանուր ընկերային-տնտեսական իրավիճակը բարվոք է: Խնդիրը նախ եւ առաջ վերաբերում է բնակչության սնը խթանող գործոններին: Թուրքիայի, ինչպես եւ իսլամադավան բնակչությամբ բոլոր երկրների պարագայում գործում է կրոնական խթանիչը: Այս տեսանկյունից լուրջ մտորումների տեղիք է տալիս նաեւ Հայաստանի բնակչության սնը խթանող ռազմավարական ծրագրի մշակման հիմնահարցը:

[3] Հարկ է նշել, որ Հայաստանի սահմանամերձ շրջանների բնակչության նոսրացման միտումն անհրաժեշտ է դիտարկել ինչպես թուրքական գործոնի, այնպես էլ հայ-սոցբեջանական եւ հայ-վրացական հարաբերությունների հարթություններում:

[4] Այս առումով անհրաժեշտ է առանձնահատուկ նշել ՀՀ մայրաքաղաք Երեւանի՝ Հայաստանի հետ Թուրքիայի սահմանին բավական մոտ գտնվելու հանգամանքը, ինչը կարելի է դիտել որպես Հայաստանի աշգային անվտանգության տեսանկյունից:

[5] Սահմանային անվտանգության խնդիրների նկատմամբ, Հայաստանից զատ, բավական հետեւողական են նաեւ Վրաստանի ու Ադրբեջանի իշխանությունները: Թուրքական սահմանակցում է հարեւան Վրաստանին (թուրք-վրացական սահմանի երկարությունը 252 կմ է) հյուսիս-արեւելքից երկու՝ Սաձխե-Ջավախքի եւ Աջարիայի Ինքնավար Հանրապետության երկրամասերով, որոնք ռազմավարական նշանակություն ունեն Թուրքիայի համար: Պաշտոնական Թբիլիսին այսօր էապես անհանգստացած է Աջարիայում թուրքական քաղաքական-տնտեսական ու մշակութային ազդեցության տարածման հեռանկարներով: Մյուս կողմից՝ պաշտոնական Անկարան մեծապես շահագրգռված է դեպի Սաձխե-Ջավախք մեսխեթի թուրքերի վերադարձի խնդրով, ինչը էապես կարող է վերափոխել շրջանի նեերկայիս ժողովրդագրական, ազգային-կրոնական նկարագիրը՝ հօգուտ Թուրքիայի: Ադրբեջանի պարագայում երկրի իշխանություններին մեծապես մտահոգում է Նախիջեւանի ինքնավարության հետ Ադրբեջանի սահմանային բաժանման հանգամանքը: Իսկ այն, որ հետագայում Թուրքիայի արեւելյան շրջանների բնակչության հնարավոր աստիճանումը ռուսական գործոն կարող է ներկայանալ նաեւ այս ուղղությամբ, բավականին տրամաբանված թեմագրություն պետք է համարել (Նախիջեւանի հետ Թուրքիայի սահմանային երկարությունը կազմում է 9 կմ):

[6] Հարկ է նշել, որ մանավանդ քրդական շարժման զարգացման ու ճնշման հարցում Թուրքիայի իշխանությունների հետ համագործակցել են նաեւ Իրանի, Իրաքի եւ Սիրիայի ղեկավարները:

[7] Թուրքիայի պետական փաստաթղթերում եւ այլ վիճակագրական ծառայություններում տվյալներ չեն պարունակվում երկրում բնակվող այլազգի ներկայացուցիչների վերաբերյալ:

[8] Նկատենք, որ բնչի քրդերից, պաշտոնական Անկարան նույն քաղաքականությունն ուղղում է նաեւ Թուրքիայի արեւելյան շրջաններում բնակվող համշենահայության նկատմամբ:

[9] Համշենահայերի զգալի մասը կենտրոնացած է Սամսուն, Ռիզե, Տրապիզոն եւ Արդվին նահանգներում:

Մեծագույն ուրախությամբ ընդունեցինք լուրն այն մասին, որ «Դրօշակ»-ի հրատարակությունը վերսկսված է: Դաշնակցական մամուլի ընտանիքում «Դրօշակ»-ը առանձնահատուկ տեղ ու դեր ունի: Իր ստեղծման օրվանից այն դարձել է Դաշնակցության դրոշակակիրը: Իսկ հայոց պատմության նոր ժամանակաշրջանում այն ազգային-ազատագրական պայքարի գաղափարակիրն է: Դաշնակցական մյուս թերթերի համար այն համարվել է «մայր թերթ», եղել ստնտու եւ խորհրդատու:
«Դրօշակ»ը պատվով է դուրս եկել «հային հայ պահելու» դժվարին փորձությունից:
Վերածնված հայրենիքում «Դրօշակ»ին մաղթում ենք արգասաբեր գործունեություն եւ անխափան հրատարակություն:

Ընկերական բարեւներով,
Ապառաժ շաբաթաթերթի խմբագիր
Ռ.Մնացականյան

Ապառաժ

Տարածաշրջանային ծրագրեր ու հեղինակներ

Արմեն Ամիրյան

Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթուղագծի նախագիծը այլեւս իրականություն է: Թբիլիսիում նախագծի երեք կողմերի մասնակցությամբ կնքված պայմանագիրը վերացնում է այն կասկածները, որոնք կարող են լինել այս ընդհանուր տնտեսական շահ հետապնդող նախագծի նկատմամբ:

Կարս-Ախալքալաք 98 կմ երկարությամբ երկաթգծի շինարարության ընդհանուր արժեքը 422 միլիոն ԱՄՆ դոլար է, որից 202 մլն.-ը նախատեսված է գծի 30 կիլոմետրանոց վրացական հատվածի շինարարության համար՝ ներառելով նաեւ Ախալքալաք-Թբիլիսի 192 կիլոմետրանոց հատվածի վերանորոգման աշխատանքները: Ըստ որոշ վերլուծությունների՝ նախագծի շինարարական աշխատանքները, հարակից ենթակառուցվածքների հետ, կարժենան 600 մլն. ԱՄՆ դոլար: Միայն 220 միլիոն դոլար պահանջվում է վրացական հատվածում աշխատանքներ իրականացնելու համար: Այսօր արդեն հայտնի է, որ Ադրբեջանը Վրաստանին շուրջ 150 միլիոն դոլար կտրամադրի Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթուղու վրացական հատվածի շինարարության համար, իսկ ֆինանսավորման մնացած մասը Վրաստանին կհատկացնի Թուրքիան: Վրաստանը Ադրբեջանի պարտքը կմարի բեռների տարանցումից ստանալիք եկամտից: Եվ այսպես, այս եւ նմանօրինակ այլ նախագծերում ընդհանուր տնտեսական շահի գաղափարն առավել տեսանելի է դառնում, միաժամանակ, անկախ Արեւմուտքից հնչող բացասական ազդակների, տեսանելի են դառնում հարեւանների կողմից հարեւաններին մեկուսացնելու քաղաքականության առաջին եւ հստակ նախագծերը: ԱՄՆ Կոնգրեսն ու Եվրամիությունն արդեն որոշում են ընդունել Կարս-Ախալքալաքի դեմ. այս կառույցներից չի լինի ո՛չ ֆինանսական եւ ո՛չ էլ քաղաքական աջակցություն: Ըստ էության, գերիկորներից նախագծի հեղինակները չստացան անհրաժեշտ հովանավորչություն, բայց փաստը մնում է փաստ, որ նախագիծը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Իսկ թե նրանցից ում շահերը կբախվեն, ով կշահի եւ ով կտուժի հարցերը գերազանցում են պատասխանները: Չնայած Հայաստանի իշխանությունների կողմից մինչ այս արված առաջարկներին, մեր հարեւանները գերադասեցին շրջանցել Կարս-Գյումրի երկաթգիծը՝ այդպիսով Հայաստանի շրջափակումը դարձնելով կատարյալ: Ադրբեջանի, Վրաստանի եւ Թուրքիայի երկաթուղագծերն իրար կապելու մա-

սին քննարկում առաջին անգամ տեղի ունեցավ դեռ 1993 թ. հուլիսին՝ Ընդհանուր տրանսպորտային հանձնաժողովի շրջանակներում: Սա մի նախագիծ է, որով Թուրքիան կդառնա հիմնական կապող դարպաս Եվրոպայի եւ Ասիայի տրանսպորտային փոխադրումներում՝ այսպիսով մեծացնելով իր դերն ու նշանակությունը արտաքին աշխարհի համար: Ի տարբերություն ավտոմոբիլային եւ ծովային փոխադրամիջոցների, Թուրքիայում այսօր առավել թերի է զարգացած երկաթուղային տրանսպորտը, որն իր ստեղծման օրից, այսինքն՝ Երկրորդ աշխարհամարտից ի վեր պահպանվել է նույն տեսքով եւ ներկայումս չի համապատասխանում եվրոպական չափանիշներին: Նշենք, որ Թուրքիայում երկաթուղագծերի երկարությունը ավելի քան 10 հազար կմ է: Տարածաշրջանի երկրների հետ կապող՝ Թուրքիան ունի երկու երկաթուղային ելք, որոնցից մեկն անմիջապես կապված է Հայաստանի հետ, իսկ մյուսն անցնում է Իրանով: Հայաստանի հետ հարաբերություններ, ըստ էության, չկան, իսկ Իրանի պարագան թուրքերի համար դարձյալ բարենպաստ չէ: Հետեւաբար Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթուղին առանձնակի կարեւորություն է ստանում:

Թուրքիայի փոխադրամիջոցների ռազմավարության զարգացման առջեւ այսօր ծառացած են մի քանի հիմնական սպառնալիքներ, որոնցից առաջինը, ըստ փորձագետների, ՏՐԱՍԵԿԱ-ի ընդլայնումն է մինչեւ Բալկաններ, Սեւ ծովի վրացական նավահանգիստներ, որոնց զարգացման դեպքում Թուրքիայի տարածքով բեռնափոխադրումների ծավալները կարող են զգալիորեն կրճատվել՝ նվազեցնելով նաեւ թուրքական նավահանգիստների նշանակությունը: Մինչ օրս Թուրքիայի բեռնաշրջանառության հիմնական մասն ապահովում է ավտոմոբիլային, իսկ արտաքին առեւտրի բեռնափոխադրումներն իրականացնում է ծովային տրանսպորտը:

Այսպիսով, Թուրքիան, ըստ էության, առաջարկում է ՏՐԱՍԵԿԱ-ի սեփական տարբերակը՝ աշխարհի համար մեծացնելով իր նշանակությունն ու ընձեռած հնարավորությունները: Կառուցումից հետո երկաթգիծը թույլ կտա տարեկան մոտ 40 մլն. տոննա բեռնափոխադրումներ կատարել՝ դառնալով Եվրոպա-Թուրքիա-Միջին Ասիա-Չինաստան կամ Արեւմուտք-Արեւելք՝ միմյանց կապող փոխադրամիջոցային հաղորդակցությունն ապահովող միակ ճանապարհը: Այս նախագիծը չի մեկուսացնի Հայաստանին եւ տնտեսական առումով որեւէ վնաս չի կարող տալ. սա պաշտոնական Երեւանի արձագանքն է: Ինչը, եկեք ընդունենք, փոքր-ինչ տարօրինակ է հատկապես այն խորապատկերին, երբ ամիսներ շարունակ հայրենի իշխանությունները դեմ էին արտահայտվում այս նախագծին՝ առաջարկելով դրա փոխարեն մեր տարբերակը: Այդ դեպքում հարց է ծագում. ո՞րն է անհանգստանալու պատճառը, եթե այս նախագծից վնասներ չենք ակնկալում: Եթե, միեւնույն է, մեկուսացումը՝ տնտեսական շրջափակումը, ոչ մի դեպքում չէր կարող խոչընդոտել մեր առաջընթացին:

«Այդ երկաթգծի կառուցումը, կամ առնվազն՝ պայմանագրի ստորագրումը, հնարավոր կլիներ կանխել, եթե մենք գնայինք ԼՂ հարցում մեզ համար անընդունելի զիջումների»,- նշեց արտգործնախարարը: Հայկական կողմը թե՛ անցյալում եւ թե՛ այսօր մերժում է Լեռնային Ղարաբաղի դիմաց որեւէ տնտեսական խնդրի լուծումը: Ղարաբաղը առեւտրի առարկա չէ ո՛չ գազի եւ ո՛չ էլ քարյուղի դիմաց, դրանք իրարից միանգամայն տարբեր խնդիրներ են, ընդգծում է արտաքին գործերի նախարարը:

Այնուհանդերձ, խաղի կանոնները նույնն են, հարեւանների տրամաբանությունը՝ նույնպես, գերիշխողների շահերն ու հետաքրքրությունները, ըստ էության, փոփոխությունների չեն ենթարկվել: Եվրոպան ողջունում է այլընտրանքային ճանապարհների ստեղծումը, Ամերիկային հետաքրքրում է էներգակիրների անվտանգ տեղափոխումը, իսկ Հայաստանին մնում է ոչ այլ ինչ, քան հպարտանալ սեփական երկնիշ տնտեսական աճով, ծիրանի առատ բերքատվությամբ ու մշակել սեփական ծրագրերը՝ չսպասելով այս կամ այն ծրագրի ունեցած ազդեցությանը:

Ծրագիր, պլատֆորմ եւ մանիֆեստ եզրերը (տերմինները) հաճախ են օգտագործվում քաղաքական գրականության կամ զրույցների մեջ, սակայն թվում է, թե առանց դրանց բուն իմաստի մեկնաբանության՝ հարցը մնում է անորոշ: Փորձենք այս իմաստով որոշ լուսաբանություններ տալ:





Ծրագիր Պլատֆորմ Մանիֆեստ

եւ մի փոքր փակագիծ

Կարեն Խանլարյան

«Որեւէ քաղաքական պարտիայի, հասարակական կազմակերպության կամ առանձին պետական կամ հասարակական գործիչի *գործունեության հիմնական* նպատակների ամփոփում»,- այսպես է բացատրում Ստեփան Մալխասյանը՝ ծրագիր հասկացությունը: Իսկ պլատֆորմի համար տալիս է հետեւյալ բացատրությունը. «*Գործունեության* ծրագիր քաղաքական որեւէ խմբակի, կուսակցության կամ անհատի (ընդգծումները մերն են - Կ. Խ.)»[1]: Մալխասյանի սույն բացատրությունների հիման վրա եզրակացվում է, որ ծրագրում արծարծվում են *գործունեության հիմնական* նպատակները, սակայն պլատֆորմում բնորոշվում են բուն նպատակների ուղղությամբ գործունեության մանրամասները, եղանակները, սկզբունքները, կերպը եւ այլն:

Այս հասկացությունները այնքան մոտ են, որ շատ հեշտ կարելի է շփոթել: Որոշ աղբյուրներում էլ այդ երկուսը ներկայացվում են որպես հոմանիշ բառեր: Այսպես՝ Farlex էլեկտրոնային հանրագիտարան-բառարանում ե՛ւ *քաղաքական* ծրագիրը, ե՛ւ *քաղաքական* պլատֆորմը մեկնաբանվում են հետեւյալ բացատրությամբ. «փաստաթուղթ, ուր հստակագրված են քաղաքական կուսակցության նպատակները եւ սկզբունքները (ընդգծումները մերն են - Կ.Խ.)»[2]: Նույն բառարանում հանդիպում ենք նաեւ առավել որոշակիացած մեկնաբանության լոկ պլատֆորմի համար. «սկզբունքների ֆորմալ հայտարարություն, որը հանրությանն է փոխանցում խումբը կամ քաղաքական կուսակցությունը (ընդգծումը մերն է - Կ. Խ.)»[3]:

Այս հստակեցմամբ կարելի է ասել, որ ծրագրում ամփոփվում են վախճանական նպատակները, իսկ պլատֆորմում գլխավորաբար ուրվագծվում են սկզբունքները:

Ծրագիր եւ պլատֆորմ հասկացությունների փոխ-

կապակցվածության իմաստով ուշագրավ մեկնաբանության ենք հանդիպում Վերնոն Բոգդանորի խմբագրած «Քաղաքական գիտության հանրագիտարանում», ուր պլատֆորմ եզրույթի գլխի տակ ասվում է, որ մի խմբի կամ քաղաքական կուսակցության կողմից ներկայացված ծրագրի կամ առաջադրանքների ամբողջությունը առավել ընդհանրական իմաստով հաստատագրելու համար վերլուծաբանական բացատրություններ են տրվում պլատֆորմը եւ այլն[4]: Այսքանով կարելի է դառնում եզրակացնել, որ պլատֆորմը ոչ միայն ծրագրային սկզբունքներ է պարունակում, այլեւ վերլուծության կարգով ընդհանրացնում ու ամրագրում է ծրագրային ըմբռնումները:

Հարց է առաջանում, թե ծրագրային եւպլատֆորմային հասկացությունները կարելի՞ է տարանջատել նրանց մաքսիմալ կամ մինիմալ բնույթի հիման վրա: Դժվար է այս հարցին միանշանակ պատասխան գտնել, քանզի երկուսն էլ անխուսափելիորեն առնչվում են ե՛ւ մաքսիմալ, ե՛ւ մինիմալ կատեգորիաներին: Սիմոն Զավարյանը ՀՅԴ չորրորդ Ընդ. ժողովում (1907 թ.) ծրագրի քննարկման ժամանակ էական մատնանշում է կատարում՝ ասելով, որ «Ծրագրի մեջ չպետք է լինեն մանր կետեր, ինչպես է ձրի բժշկություն եւ այլն (ընդգծումը մերն է - Կ. Խ.)»[5]: Այդուհանդերձ, «...բոլոր մանր պահանջները,- անմիջապես շարունակում է Զավարյանը,- հարկավոր է ամփոփել մեկ կամ երկու կետի մեջ»: Այլ խոսքով՝ նա ծրագիրը պատկերացնում էր երկու տեսակի պահանջներով, սակայն փորձում էր ամփոփել մինիմալ տեսակը: Կարելի է այսքանով ընդգծել, որ Ծրագրում տեղ գտած կատեգորիաների հիմնական կշիռը մաքսիմալ պիտի լինի:

Ի՞նչ է մանիֆեստը: Սա ավելի պարզունակ իմաստ է պարունակում: Մանիֆեստ՝ նշանակում է «...որեւէ կուսակցության հրապարակված հայտագիրը (prospectus),- բացատրվում է Farlex էլեկտրոնային հանրագիտարան-բառարանում,- ուր ճշտորոշվում են այն քաղաքականությունները, որոնց հետամուտ է լինելու կուսակցությունը՝ կառավարության գլուխ անցնելու դեպքում»[6]: Այս մեկնաբանությամբ անմիջապես պարզվում է, որ մանիֆեստը սերտորեն առնչվում է քաղաքական ուժի, կուսակցության նախընտրական միտումներին: Նման մի բացատրության ենք հանդիպում մեկ այլ էլեկտրոնային հանրագիտարան-բառարանում, ուր մանիֆեստը մեկնաբանվում է՝ «հատկապես քաղաքական բնույթով սկզբունքների, քաղաքականությունների եւ միտումների հրապարակային մի հայտարարություն (public declaration)»[7]: Այսքանը բավարար է եզրակացնելու, որ մանիֆեստը բովանդակային առումով տարբեր է ծրագրից ու պլատֆորմից եւ հիմնականում իր մեջ պարունակելով հրապարակային բնույթի հայտարարություններ՝ բնականաբար չունի ծրագրային եւ պլատֆորմային հասկացությունների խորքայնությունը եւ հեռանկարայնությունը: Դա կարելի է համարել որեւէ կուսակցության գաղափարական հեռանկարների եւ քաղաքական նպատակների մասին համեմատաբար վերնագրային բնույթով եւ առավել պարզաբանված հայտագիր, որով կուսակցությունը քաղաքական ընտրությունների նախօրյակին կամենում է ներկայանալ հանրությանը:

Այս ամենը որքանո՞վ է իրականություն դառնում քաղաքական կյանքում: Միանշանակորեն հնարավոր չէ օրինաչափություններ ենթադրել այս ուղղությամբ, համընդհանուր չափանիշ ճշտել, որ յուրաքանչյուր քաղաքական ուժ միաժամանակ պիտի ունենա ե՛ւ ծրագիր, ե՛ւ պլատֆորմ, ե՛ւ մանիֆեստ≠ Սակայն այս մասին կարելի է պատկերացում կազմել կենդանի օրինակներից: Վերցնենք պատմական պատկառելի անցյալ ու փորձ ունեցող եւ քաղաքական կյանքի կանոնական բոլերից անցած բրիտանական Բանվորական կուսակցության (Labour Party) օրինակը: Նրա պաշտոնական կայքէջում կուսակցության պաշտոնական քաղաքականության համար գոյություն ունեն երեք կարգի փաստաթղթեր.



ա. ««Բանվորական» քաղաքականության ուղեցույց» (Labour⌣s Policy Handbook), որը տրամադրվում է միայն կուսակցության անդամներին (for members only), ուր ամրագրված են ծրագրային մաքսիմալ ըմբռնումները:

բ. «Բրիտանիայի ապագան» (Future of Britain), ուր

լեփեղված է մանկանց, փարեցների, դպրոցների, հանցագործության դեմ պայքարի, աշխատանքային հարցերի եւ ընդամենի այլ բնագավառների վերաբերյալ կուսակցության տեսանկարային պատկերացումների եւ տեսակետների համամատչելի շարադրանքը. ուսումնասիրությունից պարզվում է, որ դրանք պարունակում են կուսակցության պլատֆորմային եւ մինիմալ հասկացությունները:

գ. «Բանվորական կուսակցության մանիֆեստ» (The Labour Party Manifesto), ուր վերոնշյալ բնագավառների վերաբերյալ կարգախոսային վերտառությամբ, հղումներով, մեջբերումներով պարզաբանված եւ պատկերավարդ գրություններով ներկայացվում են կուսակցության մոտեցումները, որոնց մեջ հիմնականում ակնառելի է քարոզչական ոճն ու կշիռը:

Անշուշտ, սույն տեսակի երեք փաստագրերով հանդես գալը անհրաժեշտ նախապայման չի կարելի համարել: Սակայն մեկ հետաքրքրում է այդ երեք հասկացությունները տեղին օգտագործելու եւ չշփոթելու հարցը, քանզի այդ եզրերի խորքում ընկած են տեսական լուրջ մեկնաբանություններ:

Փորձենք այս տեսական մեկնաբանությունները փոխադրել մեր իրականություն: ՀՅ Դաշնակցությունը, լինելով համազգային մասշտաբով աշխատող կազմակերպություն, հետապնդում է համապատասխան նպատակներ: Հետեւաբար, Դաշնակցությունը չի կարող հրաժարվել ծրագրային հասկացությունների կիրառումից: Ինչպես միշտ, նա ունի Ծրագիր, ուր ամրագրված են ինչպես Դաշնակցության գաղափարական արժեքները, հավատամքներն ու համոզումները մարդկային եւ ազգային հարթության վրա, այնպես էլ նրա քաղաքական, տնտեսական եւ հասարակական գերագույն իղձերն ու վախճանական նպատակները: Հայ ազգի ու հայ մարդու լիակատար ազատագրության, Հայ Դատի արդար լուծման ճամփին նորանկախ Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գոյության փաստերը, նրանց պետականության հետ կապված հարակից հիմնահարցերը համարվում են հանգրվան, եթե ճիշտ լինի ասել՝ միջնափուլ: Մեկնելով ծրագրային հասկացություններից՝ Դաշնակցությունը հետամուտ է այս միջնափուլի, կույգ հանրապետությունների պետականության ամրապնդմանը՝ սատարելով իրավական պետության, քաղաքացիական հասարակության եւ արդար կարգերի հաստատումը: Հետեւաբար, Դաշնակցությունը այս բնագավառներում անխուսափելիորեն կանգնած է պլատֆորմային մակարդակի մտքերի, տեսակետների եւ գաղափարների ձեւավորման, մշակման, վերանայության եւ տեւական հետապնդման անհրաժեշտության առջեւ, հատկապես այսօր, երբ նա ունի բավարար փորձ պետական կառավարման կանոնական ոլորտներում: Պլատֆորմում է ահա պատկերացվում Դաշնակցական սոցիալիզմը գյուղատնտեսական, արդյունաբերական եւ տնտեսական բնագավառներում, կամ Դաշնակցական ազգայնությունը մշակութային, կրթական եւ հասարակական բնագավառներում եւ այլն: Իսկ պետականության կառուցման եւ արդյունավետ կառավարման համար պայման է աշխույժ մասնակցությունը քաղաքական դաշտում, ինչը նշանակում է ժողովրդավար ընտրությունների ճամփով օրենսդիր ու գործադիր ոլորտներում դերակատարություն ունենալ եւ պատասխանատվություն ստանձնել: Ահավասիկ, երրորդ փաստագրի՝ մանիֆեստի հրապարակման հարց է առաջադրվում այստեղ:

Հստակ է, որ ՀՅԴ Ծրագիրը հաստատվում է ՀՅԴ Ընդհանուր ժողովում եւ անհրաժեշտության դեպքում կարող է վերամշակվել յուրաքանչյուր Ընդ. ժողովում՝ չորս կամ հինգ տարվա հաճախականությամբ: Ելնելով պատմական նախընթացից եւ դատելով ՀՅԴ կանոնադրական ըմբռնումներից՝ ՀՅԴ Հայաստանյան կամ Արցախյան գործունեության պլատֆորմները պիտի մշակվեն եւ հաստատվեն համապատասխանաբար ՀՅԴ Հայաստանի Գերագույն եւ ՀՅԴ Արցախի Շրջանային ժողովներում՝ ՀՅԴ ծրագրային հասկացությունների հիման վրա, եւ պիտի վերամշակվի կամ վերանայվի յուրաքանչյուր ժողովում՝ երկու տարվա հաճախականությամբ: Պիտի ընդգծել, որ պլատֆորմն այս դեպքում ուղղակիորեն կապ չունի ընտրապայքարների հետ եւ չի համարվում այդ բնույթի փաստաթուղթ: Սակայն դրա, ինչպես նաեւ ծրագրի հիման վրա հայաստանյան կամ Արցախում ընտրությունների նախօրյակին Հայաստանի Գերագույն մարմնի կամ Արցախի Կենտրոնական կոմիտեի միջոցով պիտի պատրաստվեն մանիֆեստներ կամ նախընտր-

րական ծրագրեր, որոնց մեջ, ինչպես ասվեց, պիտի արծարծվեն ինչպես իրավիճակին եւ ապագա գործունեությանը, այնպես էլ տվյալ ընտրարշավին եւ ընտրացուցակին առնչվող, քարոզչական բնույթի շարադրանքներ, վերտառություններ, հղումներ եւ այլն:

Ահա թե ինչպես կարելի է պատկերացնել ծրագիրը, պլատֆորմը եւ մանիֆեստը մեր պարագայում: Իսկ թե ինչպես կարելի է հավելյալ պատկերացումներ տալ մանիֆեստի մասին, այստեղ բացում ենք մի փոքր փակագիծ... Այս բոլորից բնավ չպիտի եզրակացնել, որ մանիֆեստը, լինելով նախընտրական փաստաթուղթ, կազմվում է բացարձակապես քարոզչական եւ գովազդային հիմունքներով: Մանիֆեստը կարող է պարունակել կուսակցության գաղափարական, քաղաքական, ընկերային-տնտեսական եւ մշակութային հայացքների մի լայն սպեկտր, համապարփակ ամբողջություն: Այս իմաստով վիճակագրական պատկեր ենք կազմել բրիտանական երկու մայր կուսակցությունների՝ Բանվորական եւ Պահպանողական կուսակցությունների 1900-2001 թթ. հրապարակած մանիֆեստների ծավալների վերաբերյալ, որը բերում ենք ստորեւ.



Այս պատկերից եզրակացվում է, որ երկու կուսակցությունների մանիֆեստների բառաքանակը աճ է ունեցել: Այսպես՝ պահպանողականների մոտ աճել է 15, իսկ բանվորականների մոտ՝ շուրջ 140 անգամ: Սա գերազանցապես նշանակում է, որ հանրության քաղաքական գիտակցության կարգացմանը զուգընթաց բարձրացել է կուսակցությունների բացատրական հայտագրերի ծավալը: Քննելով երկու կուսակցությունների մանիֆեստները՝ կարելի է հասկանալ, որ եթե անցյալ դարասկզբում երկուսն էլ հանդես էին գալիս կարճ, հպանցիկ եւ նույնիսկ կարգախոսային գրություններով, ստրիճանաբար ճոխացնելով մանիֆեստային բովանդակությունները, ընդլայնել են իրենց ընկալումների եւ տեսակետների բացատրությունը կանոնական բնագավառների շուրջ: Եվ սա ինքնին հաշվառելի փորձ է քաղաքական կյանքում:

---

1 Մալխասյան Ստ., »Հայերեն բացատրական բառարան«, Բեյրութ, 1955:

2 http://www.thefreedictionary.com

3 Նույնը:

4 Bogdanor V. "The Blackwell Encyclopedia of Political Science", Cambridge, 1991, p. 424.

5 »Նյութեր Հ.Յ.Դաշնակցության պատմության համար«, Գ. հատոր, էջ 252:

6 http://encyclopedia.farlex.com/Manifestos

7 http://encyclopedia.thefreedictionary.com/manifesto

Մերի Ալեքսանյան

Հաշմանդամները՝ հասարակության լիարժեք անդամ

Խորհրդային կարգերի 70-ամյա պատմությունը եւ համայնավարական դաստիարակությունը իրենց ազդեցությունն ունեցան հաշմանդամների նկատմամբ հասարակության սխալ վերաբերմունքի ձեւավորման հարցում: Այդ ողջ ժամանակահատվածում հաշմանդամներն ապրում էին հասարակությունից օտարված, նրանց խնդիրները լռության մատնված եւ թողարկված էին մնում: Արդյունքում՝ հասարակությունը կեղծակ չէր հաշմանդամների խնդիրներին եւ չէր մասնակցում դրանց լուծմանը:

Անկախացումից հետո Հայաստանը սկսեց շարժվել դեպի ժողովրդավարական արժեքներ, ինչը ենթադրում է մարդու իրավունքների պաշտպանության գերակայություն: Երկրի օրենսդրությունը (այդ թվում՝ մարդու իրավունքների ոլորտի) ասպիճանաբար համապատասխանեցվում է միջազգային ստանդարտներին:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության տվյալներով՝ Հայաստանի Հանրապետությունում կա մոտ 143.000 հաշմանդամ, որից մոտ 8.300-ը մինչեւ տասնութ, իսկ 24.000-ը՝ տասնութից քառասուն տարեկանների խմբում են: Պետությունը նրանց համար սահմանել է որոշակի արտոնություններ՝ առաջին եւ երկրորդ խմբի հաշմանդամներն իրավունք ունեն անվճար օգտվել ներքաղաքային տրանսպորտային միջոցներից, պետպատվերի շրջանակներում ստանալ բուժօգնություն եւ պրոտեզաօրթոպեդիկ սարքեր ու դեղորայք: Այս կարգի օգնություններից բացի, առաջին հերթին հարկավոր է հաշմանդամներին ինտեգրել հասարակության մեջ եւ փոխել հասարակության վերաբերմունքը նրանց նկատմամբ (խոսքս ավելի շատ վերաբերում է վիկուալ՝ տեսանելի հաշմանդամություն ունեցող մարդկանց, հակառակ դեպքում ինտեգրացիան մեծ դժվարություն չի ներկայացնում):

Ձեւավորվեցին եւ շարունակում են ձեւավորվել հաշմանդամների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական (ոչ կառավարական) կազմակերպություններ, որոնք գնալով ավելի մեծ դերակատարում են ունենում սոցիալական այս խմբի մարդկանց խնդիրների լուծման գործում: Այդ ՀԿ-ները, կոնկրետ խնդիրների լուծումից զատ, շատ են կարեւորում ինտեգրացիայի խնդիրը, ինչպես նաեւ՝ հաշմանդամների նկատմամբ ձեւավորված սխալ կարծրատիպերի, որ տեղեկացվածության պակասի արդյունք է, հաղթահարմանը:

Ներառական կրթությունը՝ որպես սկիզբ

«Կրթության մասին» օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամ երեխաները այլ երեխաների հետ ունեն հավասար իրավունքներ հաճախելու հանրակրթական դպրոցներ, իսկ պետությունը պարտավոր է ապահովել հավասար պայմաններ նրանց կրթության համար:

Օրինակ՝ խուլ ու համր մարդիկ նույնպես կարող են դառնալ լավ մասնագետներ գիտության տարբեր ճյուղերում, սակայն ուսուցման համապատասխան մեթոդների բացակայության կամ պակասի պատճառով նրանք չեն կարողանում կրթություն ստանալ: Իսկ դպրոցներում եւ բուհերում ժեստերի լեզվի թարգմանիչների առկայության դեպքում կրթությունը մատչելի կլինի նաեւ նրանց:

2005 թ. սեպտեմբերին ուժի մեջ մտավ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը, որը պետականորեն ամրագրում է ներառական կրթությունը Հայաստանում: Ներառական կրթությունը ենթադրում է կրթության մատչելիություն եւ համահավասար սկզբունքներ ինչպես հատուկ կարիքներ ունեցող երեխաների, այնպես էլ չունեցողների համար: Հանրակրթական դպրոցներում ստեղծվում են ուսուցման ճկուն պայմաններ, որպեսզի բավարարվեն բոլորի կրթական պահանջները: Սկզբունքը հետեւյալն է՝ բոլոր երեխաներն էլ կարող են սովորել, եւ պետք է համապատասխան պայմաններ ապահովել նրանցից յուրաքանչյուրի կրթության համար (օրինակ՝ լսողության կամ տեսողության խանգարումներ ունեցողների): Ներառական կրթությունը կնպաստի հաշմանդամ եւ ոչ հաշմանդամ մարդկանց միջեւ պատնեշների վերացմանը՝ սկսած մանուկ հասակից, ինչը ավելի կհեշտացնի ինտեգրացիան, քանի որ փորձը ցույց է տալիս, որ երեխաների մեջ դեռեւս չկան կարծրատիպեր ու նախապաշարմունքներ, եւ նրանք ավելի հեշտությամբ են դիմացինին ընդունում այնպիսին, ինչպիսին որ կա, քան մեծահասակները:

Ի դեպ, մեր տարածաշրջանում Հայաստանը միակ երկիրն է, որ ներառական կրթությունը դարձրել է պետական քաղաքականություն՝ իր վրա վերցնելով համակարգի ֆինանսավորումը: Ներկայումս Երեւանի հինգ տարբեր դպրոցներում կիրառվում է ներառական՝ ինտեգրացված կրթության համակարգը: Գործընթացը, սակայն, այնքան էլ հեշտ չի ընթանում, եթե հաշվի առնենք խորհրդային շրջանից ժառանգած բավմաթիվ ճարտարապետական եւ հոգեբանական արգելքները, համապատասխան կրթամեթոդական նյութերի բացակայությունը եւ ուսուցչական անձնակազմի փորձառության պակասը: Բացի այդ, հանրապետությունում գործում են հատուկ դպրոցներ կույրերի եւ վատ տեսնողների, խուլերի եւ թույլ լսողների, ինչպես նաեւ հենաշարժողական ապարատի խնդիրներ ունեցող հաշմանդամների համար:

Գոյություն չունեն ներառական կրթության համընդհանուր չափանիշներ: Յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում կրթական համակարգի մատչելիության սկզբունքները՝ ելնելով ազգային առանձնահատկություններից: Բայց կան չափանիշներ, որոնք պարտադիր են բոլորի համար: Դրանք են՝

- *երեխան հաճախում է տեղական (իր բնակավայրին մոտ գտնվող) դպրոց կամ նախակրթարան,*
- *ուսուցման մեթոդիկան այնպիսին է, որ մատչելի լինի տարբեր հնարավորություններ ունեցող երեխաներին,*
- *բոլոր երեխաները մասնակցում են դպրոցական միջոցառումներին՝ մրցույթներ, ցերեկույթներ, էքսկուրսիաներ եւ այլն,*
- *ներառական կրթության զարգացմանն օժանդակում է թե՛տվյալ հաստատության անձնակազմը, թե՛ ծնողները, թե՛ բոլոր նրանք, ովքեր կարող են ինչ-որ կերպ օգնել,*
- *ներառական կրթության նպատակն է շտկել խտրական վերաբերմունքը տարբեր կարողություններ ունեցող երեխաների նկատմամբ եւ նրանց սատարել՝ իրենց հասարակության լիիրավ անդամ զգալու գործում:*

Բարձրագույն կրթության բնագավառում իրավիճակը միանշանակ չէ: ՀՀ օրենսդրությունը 1-ին եւ 2-րդ կարգի հաշմանդամներին որոշակի արտոնություններ է տալիս: Բայց, միեւնույն ժամանակ, միայն քիչ թվով հաշմանդամներ կարող են օգտվել այդ հնարավորությունից, քանի որ

բուհերի շենքային պայմանները, մուտքն ու ելքը հարմարեցված չեն ֆիզիկական տարբեր խախտումներ ու տեղափոխման դժվարություններ ունեցող մարդկանց համար: Բացի այդ, քիչ չեն նաեւ այնպիսի հաշմանդամները, որոնք վերը նշված պատճառներով չեն ստացել նույնիսկ միջնակարգ կրթություն եւ, բնականաբար, չեն կարող սովորել բուհում: Արդյունքում հաշմանդամների զգալի մեծամասնությունը չունի բարձրագույն կրթություն:

Վերջերս ներմուծվել է նոր կարգ, ըստ որի՝ հաշմանդամ դիմորդը (կամ նրա ծնողը) կարող է դիմում ներկայացնել բժշկա-սոցիալական փորձաքննության գործակալություն, որպեսզի իր համար հատուկ պայմաններ ստեղծվեն ընդունելության քննությունների ժամանակ: Այդ գործակալության եզրակացության հիման վրա Կրթության եւ գիտության նախարարության իրավաբանական վարչությունը տալիս է իր եզրակացությունը, որը ներկայացվում է կենտրոնական ընդունող հանձնաժողով: Վերջինիս կազմում գտնվող հատուկ հանձնաժողովը քննարկում եւ որոշում է կայացնում կամ ընդունելության քննությունների ժամանակ հատուկ պայմանների ստեղծման, կամ էլ հարցազրույցի հիման վրա հաշմանդամ դիմորդի ընդունելության մասին:

Ծնողի դերը շատ կարեւոր է

«Մարդկային արժանապատվություն եւ խաղաղություն» հիմնադրամի իրականացրած «Հայաստանի երիտասարդ հաշմանդամների տնային կրթության ռազմավարության մշակում» ծրագրի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվեցին 7-25 տարեկան շատ հաշմանդամներ, ովքեր ընդհանրապես կրթություն չեն ստացել, մեկուսացած են հասարակությունից, խուսափում են նույնիսկ տանից դուրս գալ եւ շփվել արտաքին աշխարհի հետ: Ծրագիրն իրականացնողները փորձել են պարզել երեխաների եւ երիտասարդների՝ կրթությունից դուրս մնալու պատճառները: Դրանք տարբեր են. բացի տեղաշարժման եւ այլ խնդիրներից, խոչընդոտ են հանդիսացել ընտանիքի ֆինանսական անապահով վիճակը եւ ծնողների անտեղյակությունը հաշմանդամի՝ կրթություն ստանալու իրավունքի վերաբերյալ: Պատճառներից պակաս կարեւոր չէ հոգեբանական խնդիրը: Այն երիտասարդները, ովքեր դուրս են մնացել դպրոցներից, այլեւս կրթությունը չեն շարունակել որեւէ կրթական հաստատությունում, մեկուսացած են արտաքին միջավայրից եւ անգամ տանից դուրս գալու ցանկություն չունեն:

Հոգեբանները կարծում են, որ եթե երեխան ի ծնե ունի որեւէ ֆիզիոլոգիական կամ մտավոր խնդիր, պետք է դրան ադապտացվի մանուկ հասակից, երբ սկսում է գիտակցել իր «ես»-ը: Նա պետք է դուրս գա բակ, շփվի հասակակիցների հետ, ձեռք բերի ընկերներ: Հակառակ դեպքում՝ հետագայում որոշ բարդույթներ են ձեւավորվում հաշմանդամության հետ կապված, եւ նա նախընտրում է մեկուսանալ:

Այս հարցում շատ է կարեւոր է ծնողների դերը: Երեխան կարող է համակերպվել իր խնդրի հետ, եթե ծնողն իրեն ընդունի այնպիսին, ինչպիսին նա կա, արտասովոր վերաբերմունք չդրսեւորի: Իսկ եթե ծնողի վերաբերմունքը հոգեբանորեն ճնշում է երեխային, նա բարդույթներ ձեռք կբերի:

Ծնողն է երեխայի մեջ ինքնուրույնություն սերմանողը եւ դա փշրողը: Եթե ծնողը խղճահարությամբ վերաբերվի իր հաշմանդամ երեխային, նրան պահի «աչքի լույսի նման» եւ նրա փոխարեն անի ամեն ինչ, ապա այդ երեխան մեծանալով կդառնա ոչ ինքնուրույն, բարդույթավորված ու անօգնական: Այդ իսկ պատճառով շատ կարեւոր է, որ համապատասխան աշխատանք տարվի նաեւ հաշմանդամի ծնողի հետ:



Հայաստանում գործում են հասարակական կազմակերպություններ, որոնց շահառուները հաշմանդամ երեխաների ծնողներն են («Հավատ» վատ լսող երեխաների մայրերի ՀԿ, «Աստղիկ» հաշմանդամ երեխաների

ծնողների միություն եւ այլն): Մյուս ՀԿ-ներում («Հույսի կամուրջ» ՀԿ եւ այլն) կան աջակցության կամ փոխօգնության խմբեր, որոնց մեջ ընդգրկված են ֆիզիկական, մտավոր կամ հոգեկան խնդիրներ ունեցող երեխաների ծնողները: Որոշ ծնողներ վճռական են գտնվում եւ իրենք են կատարում առաջին քայլը, իսկ որոշները իրենց մեջ ուժ չեն գտնում դուրս գալու մեկուսացումից: Վերջիններիս հետ աշխատանք են տանում փոխօգնության խմբերում ներգրավված ծնողները, ովքեր խորհուրդների, զրույցների, սեմինարների, տեղեկատվության փոխանցման միջոցով փորձում են օգնել նրանց՝ դուրս գալու մեկուսացածությունից:

Հաշմանդամների իրավունքների միջազգային շարժումը ճիշտ է համարում հաշմանդամության հետեւյալ ձեւակերպումը. «Հաշմանդամությունը ֆիզիկական, մտավոր, զգայական եւ հոգեբանական շեղումներով մարդու գործունեության արգելքներ կամ սահմանափակումներ են, որոնք հասարակության մեջ գոյություն ունեցող պայմանների հետեւանք են, ինչը եւ զրկում է մարդկանց ակտիվ կյանք վարելու հնարավորությունից»: Հետեւաբար հաշմանդամությունը սոցիալական, այլ ոչ թե բժշկական հասկացություն է: Եվ հարկավոր է օգտագործել համապատասխան տերմինաբանություն, որը չի ստեղծի բացասական ստերեոտիպեր եւ չի վիրավորի հաշմանդամ մարդու արժանապատվությունը: Երբեք մի՛ հիշատակեք մարդուն բացառապես ըստ նրա հաշմանդամության՝ կաղ, խուլ, համր, կույր, մտավոր հետամնաց, հոգեկան հիվանդ եւ այլն: Շեշտը դրեք «մարդու» վրա՝ հաշմանդամ մարդ, հոգեկան շեղումներ ունեցող մարդ, մտավոր հետամնացություն ունեցող մարդ եւ այլն:

Հաշմանդամային սպորտը կարգանում է

Վերջին 10-15 տարիների ընթացքում հաշմանդամային սպորտը կգալի առաջընթաց է ունեցել: 1989-ից սկսած՝ «Փյունիկ» հաշմանդամների հանրապետական միության նախաձեռնությամբ կազմակերպվում են ամառային եւ ձմեռային մարզաառողջարանային ճամբարներ, որտեղ հաշմանդամները հանգստանում ու մարզվում են: 2003 թվականից գործում է «Սկարպ» առողջարարական կենտրոնը, որի առաքելություններից է հաշմանդամային սպորտի զարգացումը:

«Փյունիկ» հաշմանդամների միությունը, որը կբաղվում է հաշմանդամների ֆիզիկական, սոցիալական եւ հոգեբանական ռեաբիլիտացիայով, մեծապես կարեւորում է սպորտի դերը հաշմանդամների ինքնադրսեւորման հարցում:

Սպորտում հաշմանդամը հնարավորություն է ստանում դրսեւորելու իր կարողությունները, հաղթահարելու իր առջեւ դրված խնդիրները՝ ամրապնդելով կամքի ուժը եւ վստահություն ձեռք բերելով սեփական ուժերի նկատմամբ: Այս առումով շատ կարեւոր են պարաօլիմպիական խաղերը, որոնք անցկացվում են 1960 թվականից:

Պարաօլիմպիական խաղերի գաղափարը անգլիացի նյարդավիրաբույժ Լյուդվիգ Աթմանին է պատկանում: Նա սպորտը ներկայացրեց որպես հաշմանդամների վերականգնման լավագույն միջոց: 1948 թ. Լոնդոնի օլիմպիադային զուգահեռ կազմակերպվեցին միջազգային անվասայլակային խաղեր, որոնք ավելի շուտ ցուցադրական բնույթ ունեին:

Այդ գաղափարը մարմնացում ստացավ միայն 1960 թ. Հռոմի օլիմպիական խաղերից մի քանի շաբաթ անց, երբ տեղի ունեցան առաջին պարաօլիմպիական խաղերը: Այդ օրը 23 երկրների 400 հաշմանդամ մարզիկներ միաձուլվեցին օլիմպիական շարժմանը:

Առաջին մի քանի մրցաշարերին մասնակցում էին միայն սայլակավոր մարզիկները: Հետագայում նրանց միացան նաեւ այլ հաշմանդամություն ունեցող մարզիկներ:

Պարաօլիմպիական խաղերը ներկայումս կազմակերպում եւ կոորդինացնում է Միջազգային պարաօլիմպիական կոմիտեն (ՄՊԿ), որին 1992 թվից փոխարինեց Միջազգային կոորդինացնող կոմիտեն (ՄԿԿ):

Պարաօլիմպիական մրցաշարի սիմվոլը կարմիր, կանաչ, կապույտ կաթիլներն են, որոնք խորհրդանշում են միտքը, մարմինը եւ հոգին:

Հայաստանի ազգային պարաօլիմպիական կոմիտեն հիմնադրվել է 1994 թվականին, իսկ 1996-ին հայ հաշմանդամ մարզիկները պատմության մեջ առաջին անգամ մասնակցեցին Ատլանտայի պարաօլիմպիական խաղերին եւ Հայաստանը ներկայացրեցին երկու մարզաձեւերում՝ առագաստանավային սպորտ եւ ծանրամարտ: Դրան հաջորդեցին Նագանոյի (1998 թ.), Սիդնեյի (2000 թ.), Սոլթ Լեյք Սիթիի (2002 թ.), Աթենքի (2004 թ.) պարաօլիմպիական խաղերը:

Անցած տարի Թուրինում կայացած ձմեռային պարաօլիմպիական խաղերին Հայաստանը ներկայացնում էին երկու լեռնադահուկորդներ: Այն, որ հայ հաշմանդամ մարզիկները դեռեւս մեծ հաջողությունների չեն հասել այս ասպարեզում, թերեւս, պայմանավորված է ֆինանսական համապատասխան միջոցների բացակայությամբ: Պետությունը տարեկան շուրջ 3 միլիոն դրամ էր հատկացնում Հայաստանում հաշմանդամային սպորտի զարգացմանը, իսկ այս տարի պետբյուջեից կհատկացվի 13 միլիոն դրամ: Հույս ունենք, որ 2008 թվականի պարաօլիմպիական խաղերին մեր մարզիկները Հայաստանը կներկայացնեն հավուր պատշաճի եւ կվերադառնան միայն հաղթանակներով, թեեւ, ինչպես ասում են, մասնակցությունն արդեն իսկ հաղթանակ է:

Արվեստն օգնում է ինքնադրսեւորվել

Որոշ հասարակական կազմակերպությունների գործունեությունն ուղղված է հաշմանդամ անձանց կրթական մակարդակի բարձրացմանը, հոգեւոր-մշակութային զարգացմանը եւ հոգեբանական վերականգնմանը: Այս նպատակով 1998 թ. «Կամք եւ կորով» ՀԿ-ն հիմնադրեց Հայաստանում իրենց տեսակի մեջ եզակի խուլերի մնջախաղի «Օվասիս» թատրոնը, պարային համույթը եւ խեցեգործական ստուդիան, որոնց շնորհիվ հաշմանդամ մարդիկ հնարավորություն ունեն իրենց դրսեւորել որպես հասարակության լիարժեք անդամ, իսկ հասարակությունն էլ իր հերթին ծանոթանում է նրանց կարողություններին ու հնարավորություններին եւ համոզվում է, որ հաշմանդամը շատ ավելին կարող է անել, քան թվում է:

Խեցեգործական ստուդիան լսողության եւ խոսելու խնդիրներ ունեցող մարդկանց հնարավորություն է տալիս կավի միջոցով արտահայտելու սեփական զգացմունքներն ու մտահղացումները, ինքնադրսեւորվելու:

Հաշմանդամների թատրոն է գործում նաեւ «Հույսի կամուրջ» ՀԿ-ին կից, որտեղ ընդգրկված են նաեւ ոչ հաշմանդամ երիտասարդներ, ինչը նպաստում է հաշմանդամների ինտեգրմանը հասարակության մեջ:

Զբաղվածությունը շարունակում է խնդիր մնալ

Նախկինում գործում էր հաշմանդամների սոցիալական ապահովության բավականին արդյունավետ համակարգ: Գոյություն ունեին կույրերի, խուլերի եւ այլ արտադրական կոմբինատներ: Հայաստանի անկախացումից հետո փակվեց ձեռնարկությունների, այդ թվում նաեւ՝ հաշմանդամների արտադրական կոմբինատների մեծ մասը: Այդպիսով աշխատանքից զրկվեցին շատերը:

Անկախության առաջին տարիներին Հայաստանում գործում էր օրենք, համաձայն որի՝ այն ձեռնարկությունները, որոնց աշխատողների 50%-ը կազմում էին հաշմանդամները, օգտվում էին հարկային զգալի արտոնություններից: Օրենքի այդ դրույթի վերացմամբ՝ ձեռնարկու-

թյունները, որտեղ աշխատում էին շատ հաշմանդամներ, չկարողացան դիմանալ հարկային բեռին ու ստիպված էին ազատել իրենց հաշմանդամ աշխատողներից շատերին:

Այժմ, պաշտոնական տվյալներով, աշխատունակ հաշմանդամների միայն 7%-ն է ապահովված աշխատանքով:

Մի շարք հասարակական կազմակերպություններ իրենց աշխատանքներում ընդգրկում են նաեւ սահմանափակ հնարավորություններով մարդկանց՝ դրանով մասնակիորեն լուծելով հաշմանդամների զբաղվածության եւ սոցիալական մակարդակի բարձրացման խնդիրը: Ժամանակ առ ժամանակ հաշմանդամների համար կազմակերպվում են նաեւ տարբեր անվճար դասընթացներ (համակարգչային, անգլերեն լեզվի եւ այլն): Համապատասխան որակավորում ստանալուց հետո որոշ հաշմանդամների հաջողվում է գտնել մշտական կամ ժամանակավոր աշխատանք: Բայց ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, նման դեպքերը հազվադեպ են:

Նախ պետք է շտկել հասարակության վերաբերմունքը

Այս ոլորտի հասարակական գործիչները համոզված են, որ հաշմանդամության բոլոր սոցիալական խնդիրներն ունեն մեկ ընդհանուր նախապատճառ՝ հասարակության սխալ, կարծրատիպերի վրա հիմնված վերաբերմունքը հաշմանդամ մարդկանց նկատմամբ, ուստի կարեւոր է ամեն բան սկսել հենց այդ վերաբերմունքի շտկմամբ: Հասարակությունը պետք է հաշմանդամներին ընկալի որպես լիարժեք մարդկանց, հասարակության լիարժեք անդամների, որեւէ արտառոց վերաբերմունք չցուցաբերի նրանց նկատմամբ:



Իսկ ի՞նչ պետք է անել, որպեսզի մարդկանց վերաբերմունքը հաշմանդամության նկատմամբ շտկվի: Հարկավոր է ժամանակ եւ տքնաջան աշխատանք, ընդ որում՝ աշխատանքներ պետք է տարվեն երկկողմանի՝ թե՛ հաշմանդամների, թե՛ հասարակության մյուս անդամների հետ: Այդ հարցում շատ կարեւոր է կանգվածային լրատվամիջոցների դերը, որոնք պետք է ժամանակ առ ժամանակ լուսաբանեն հաշմանդամ մարդկանց կյանքը, առօրյան, խնդիրները, հնարավորությունները եւ այլն: Հասարակության իրազեկության բարձրացումը ավելի կհեշտացնի ինտեգրացիան:

Հասարակական վայրերը մատչելի չեն հաշմանդամներին

Հայաստանում հաշմանդամների սոցիալական ապահովության հարցերը կարգավորող հիմնական օրենքն է «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 1993-ին, փոփոխություններ են մտցվել 1997-ին, 1998-ին, 2000-ին եւ 2002-ին): Օրենքում ամրագրված է, որ հասարակական վայրերը, շինությունները ու հաստատությունները պետք է մատչելի լինեն հաշմանդամների համար, սակայն Երեւանի կենտրոնական փողոցների մայթերից շատերը չունեն անգամ թեքահարթակներ, էլ չենք խոսում հասարակական շենքերի ու շինությունների մատչելիության մասին:

Խորհրդային կարգերից ժառանգած շինություններից որոշները կարելի է վերակառուցել եւ հարմարեցնել ֆիզիկական խնդիրներ ունեցող մարդկանց, սակայն հաշվարկների համաձայն՝ դա մեծ գումարներ է պահանջում: Եթե նոր կառուցվող շինությունն է ի սկզբանե հարմարեցվում հաշմանդամներին, ծախսերը մոտ 3 տոկոսով ավելի են կազմում, իսկ եթե արդեն կառուցված շենքն է վերակառուցվում եւ հարմարեցվում, ծախսերն ավելանում են 30 տոկոսով:

Եթե խոսում ենք ինտեգրացիայի անհրաժեշտության մասին, ապա առաջին հերթին պետք է պայմաններ ստեղծվեն, որպեսզի հաշմանդամություն ունեցող մարդը դուրս գա տնից եւ մասնակցի հասարակական կյանքին, ինչն այսօր ֆիզիկական խնդիրներ ունեցող շատ հաշմանդամների համար մեծ խնդիր է հասարակական տրանսպորտի անմատչելիության պատճառով: Զարգացած երկրների դեպքում այս խնդիրը վաղուց լուծված է, իսկ Հայաստանում՝ ոչ: Թերեւս, նպատակահարմար է, որ ինտեգրացիայի խնդրի լուծումը սկսենք նախ եւ առաջ **ֆիզիկական արգելքների վերացմամբ:**

Հ.Յ.Դ. Կ.Պոլսի «Ազատամարտ» եւ «Ճակատամարտ» օրաթերթերը

Մարիամ Հովսեփյան

1909-1915 թթ. «Ազատամարտ»-ը ՀՅԴ Արեւմտյան բյուրոյի պաշտոնաթերթն էր: Օրաթերթի արտոնատերը, պատասխանատու տնօրենը եւ խմբագիրը արեւմտահայ անվանի հասարակական-քաղաքական գործիչ, արձակագիր Ռուբեն Զարդարյանն էր: Այդ տարիներին ՀՅԴ Արեւմտյան բյուրոն, արդարեւ, խոհեմաբար է վարվել՝ «Ազատամարտ»-ի խմբագիր ընտրելով Ռ. Զարդարյանին, քանզի հիմնականում նրա շնորհիվ այն չի վերածվել նեղ-կուսակցական թերթի: «Թերթը իր շնորհիւ կուսակցութեան մը օրկանը չեղաւ միայն, այլ՝ հայ ժողովուրդի առողջ բնազդներուն ամբողջական արտայայտութիւնը, հայ մտքին ճիգերուն ասպարէզը»,- կարդում ենք «Հայրենիք» ամսագրում (1925, թիվ 3, էջ 28-44):

Ռ. Զարդարյանը ծնվել է 1874 թ. Խարբերդում: Ավարտել է տեղի Ազգային վարժարանը: 1892-1903 թթ. աշխատել է Խարբերդի Կենտրոնական վարժարանում որպես ավագ ուսուցիչ՝ դասավանդելով հայոց լեզու, հայ գրականություն եւ հայ ժողովրդի պատմություն: 1904 թ. տեղափոխվել է Իզմիր, որտեղ շուրջ մեկ տարի եղել է Մանիսայի Ազգային վարժարանի տեսուչը: Բազմակողմանիորեն կրթված, մի քանի լեզվի տիրապետող, 17 տարեկանից գրաստեր հասարակությանը հայտնի Ռ. Զարդարյանը գրել է դպրոցական դասագրքեր, զբաղվել թարգմանությամբ: Նրա հրապարակախոսական հոդվածները եւ գրական ստեղծագործությունները (հեքիաթներ, նովելներ, արձակ բանաստեղծություններ) 1890 թվականից տպագրվել են արեւմտահայ մամուլում: 1910 թ. Կ. Պոլսում հրատարակվել է նրա անդրանիկ եւ միակ ժողովածուն՝ «Ցայգալույսը», որը 1912 թ. լույս է տեսել նաեւ Փարիզում Ա. Չոպանյանի, Է. Գոլանճյանի, Զ. Եսայանի կողմից արված ֆրանսերեն թարգմանությամբ: Ռ. Զարդարյանը բազմիցս ենթարկվել է ոստիկանության հետապնդումներին, բանտարկվել է եւ ազատ արձակվելով՝ մեկ այլ ձերբակալությունից խուսափելու նպատակով 1905 թ. Իզմիրից փախել է Բուլղարիա: Նա Պլովդիվ քաղաքում 1905-1908 թթ. հրատարակել ու հայրենիքում տարածել է «Ռազմիկ» թերթը: Ռ. Զարդարյանը հմուտ խմբագիր էր եւ քաղաքական պայքարի բովով անցած գործիչ: Հիշյալ արժանիքները նպաստել են այն բանին, որ 1908 թ. վերադառնալով Կ. Պոլիս՝ նա ստանձնել է «Ազատամարտ»-ի խմբագրի պաշտոնը: Ռ. Զարդարյանը երբեմն տպագրվել է «Աչք Եհովայի» եւ «Էժդահար» ծածկանուններով: 1909-1915 թթ. նա «Ազատամարտ»-ում հրատարակվելու հնարավորություն է ստեղծել ոչ միայն հայ մտավորականության հանրաճանաչ ներկայացուցիչների, այլեւ շնորհալի երիտասարդ ստեղծագործողների համար:

ՀՅԴ Արեւմտյան բյուրոյի պաշտոնաթերթը «Ակատամարտ» է անվանվել է. Ակնունու առաջարկով: «Ի՞նչ կը նշանակէ ան, եթե ոչ՝ ապատ կռիւ, շատ-շատ՝ ապատի, ազնուականի կռիւ, բայց՝ ոչ երբէք ապատութեան կռիւ, ապատութեան համար կռիւ»,- կարդում ենք «Հայրենիք» ամսագրում հրատարակված Հ. Սիրունու հուշերում (1924, թիվ 9, էջ 112-120): Այստեղ թերեւս սքողվել է բառի բուն նշանակությունը:

«Ակատամարտ»-ը տպագրվել է Բերայի Ենի Չարշը փողոցում, թիվ 32 հասցեում այդ նպատակով կառուցված Ատոմ Շահենի տպարանում: Նույն շենքում է եղել ՀՅԴ պաշտոնատեղին: Հետագայում՝ 1910 թ., երբ կուսակցությունը բացել է սեփական տպարանը (տնօրեն՝ Հայկ Թիրյաքյան) Համալ Պաշը փողոցի թիվ 74 շենքում, այնտեղ են փոխադրվել ՀՅԴ Արեւմտյան բյուրոյի գրասենյակը, «Ակատամարտ»-ի խմբագրությունը եւ տպարանը (խմբագրության գետնահարկ նկուղում): Խմբագրության շենքից են 1915 թ. ապրիլի 24-ի կեսգիշերին ձերբակալել եւ բանտարկել «Ակատամարտ»-ի վերջին (թիվ 1815)՝ այդպես էլ լույս չտեսած համարի վրա աշխատող հերթապահ խմբագրին, գրաշարին, մեքենավարին, բեռնակրին ու դռնապանին: Թերթի մնացած աշխատակիցներին (գրեթե բոլորին) ձերբակալել են իրենց բնակարաններում: Նրանց ճակատագիրն արդեն կանխորոշված էր. նահատակություն մնայյալի հետ: Իսկ խմբագրության շենքը բռնագրավել ու թալանել են հենց կեսգիշերին, այդ թվում՝ դրամարկղում գտնվող 400 ոսկին, «Ակատության մատենադարանի» գրքերի պահեստը: Ապրիլի 24-ին ձերբակալվածների ու նահատակվածների թվում էր նաեւ Ռ. Զարդարյանը: Դեռեւս 1915 թ. մարտ ամսին նա հրաժարվել էր հեռանալ Կ. Պոլսից արտերկիր՝ փրկելով իր կյանքը: «Հայրենիք» ամսագրում տպագրված է Ռ. Զարդարյանի պատասխանը՝ Թուրքիայից հեռանալու առաջարկով իրեն դիմած գործընկերոջը. «Հրաչն ու ես չենք կրնար Պոլիսը թողուլ: Հրաչը պէտք է մնայ իրեն վստահուած պարտականութեան գլուխը, իսկ ես «Ակատամարտի» գլուխը պէտք է ըլլամ մինչեւ իր վերջին օրը» (1925, թիվ 3, էջ 28-44):

«Ակատամարտ»-ի վարչական հոգսերով կբաղվել են Կարապետ Փաշայանը (Թափառիկը), Սարգիս Օհանջանյանը (Ֆարհատը) եւ Հայկ Թիրյաքյանը (Հրաչը): Վերջինը թերթի մատակարարությունը վարել է մինչեւ նրա փակման օրը՝ 1915 թ. ապրիլի 24ը[1]: Խմբագրական քարտուղարությունը փոխեփոխ ստանձնել են Գեղամ Բարսեղյանը, Շավարշ Միսաքյանը, Հակոբ Սիրունին (Ճոլոյանը): Օրաթերթի աշխատակիցների (հաստիքային եւ արտահաստիքային) թիվը բավական մեծ է եղել ու պարբերաբար փոփոխվել է[2]: «Ակատամարտ»-ի հիմնական աշխատակազմում ընդգրկված էին Խաչատուր Մալումյանը (Է. Ակնունին), Հարություն Շահրիկյանը (Ատոմը), Գեղամ Բարսեղյանը, Գասպար Իփեքյանը, Ներսես Փափազյանը: Թերթի աշխատանքներին մասնակցել են Ս. Զավարյանը, Հ. Համբարձումյանը, Ռ. Դարբինյանը, Ռ. Լեռնյանը, Ա. Խաչատրյանը, Ս. Մինասյանը, Հ. Մանուկյանը, Լ. Մոլյանը, Ս. Սրենցը եւ հայ մտավորականության սերունդն ընդհանրապես: Թերթն ունեցել է 6 անդամից բաղկացած խմբագրական մարմին: Նրանք եւ «Ակատամարտ»-ի վարչությունից 3 անդամ ղեկավարել են օրաթերթը: «Ակատամարտ»-ն ունեցել է թարգմանիչներ, լրաբերներ ու թղթակիցներ Թուրքիայի, Արեւմտյան Հայաստանի եւ աշխարհի տարբեր մասերում: «Ակատամարտ»-ն իբրեւ ՀՅԴ պաշտոնաթերթ արտահայտել է իր կուսակցության ծրագրային դրույթները, ՀՅԴ դիրքորոշումն Օսմանյան կայսրությունում եւ աշխարհում կատարվող իրողությունների նկատմամբ: Այն ունեցել է հետեւյալ առաքելությունը. նպաստել արդարության, ժողովրդավարության եւ սահմանադրական կարգերի հաստատմանը Թուրքիայում (1909, թիվ 7): Թերթը ղեկավարվել է «Ամէն ինչ ժողովուրդին համար եւ ժողովուրդին միջոցով» նշանաբանով (1909, թիվ 1): «Ակատամարտ»-ը հրատարակման տարիներին վերլուծել եւ լուսաբանել է օսմանյան խորհրդարանի եւ կառավարության, հայոց ազգային մար-

Հրաչ Տիրիաքյան

մինների ու հայ պատգամավորների գործունեությունը, քննադատել է Թուրքիայում իրականացվող հայաջինջ քաղաքականությունը, հայկական ջարդերն Ադանայում եւ այլուր՝ մեղադրելով պետական պաշտոնյաներին: Օրինակ՝ 1909 թ. հավաքածուի գրեթե բոլոր համարներում «Ակատամարտ»-ն անդրադարձել է Ադանայում հայերի կոտորածին եւ քննիչ հանձնաժողովի աշխատանքներին: Ընդհանրապես, իր անաչառ վերլուծությունների համար թերթը պարբերաբար ներգրավվել է դատական գործընթացների մեջ եւ հալածանքի է ենթարկվել գրաքննիչների կողմից: Սակայն պետք է նաեւ հետեւյալ հանգամանքը նկատի ունենալ: 1909-1915 թթ. ՀՅԴ Արեւմտյան բյուրոյի պաշտոնաթերթը, դատապարտելով օսմանյան պետության քայլերը հայ ժողովրդի հանդեպ, չի դրել անկախության պահանջ եւ կողմ է եղել «Իթթիհատ վե թերաքգ» կուսակցության հետ ՀՅԴ-ի համագործակցությանը, թեեւ վստահ չի եղել, որ Թուրքիայում կիրականանա նույնիսկ հայկական բարենորոգումների որեւէ նախագիծ կամ ծրագիր՝ հիմնվելով վերջինիս անցյալի ու ներկայի պետական քաղաքականության վրա:

«Ակատամարտ»-ը գրաքննությունից խուսափելու նպատակով հրատարակվել է նաեւ այլ անուններով՝ «Առաջամարտ» (1912 թ.), «Բիւթանիա» (1912-1913 թթ.), «Ակդակ» (1912-1913 թթ.), «Բագին» (1912 թ.), «Մեղու» (1913 թ.), «Շանթ» (1913-1914 թթ.) եւ «Ճակատամարտ» (1914 թ.)[3]:

«Ակատամարտ»-ն ունեցել է կայուն խորագրեր ու բաժիններ՝ «Հայկական հարց», «Բռնապետական արարք», «Գաւառական կեանք», «Տեղեկութիւններ Կիլիկիայէն», «Այսօր», «Վերջին ժամ», «Հայկական կեանք», «Օսմանեան խորհրդարանի նիստերի դահլիճից հաղորդում են», «Բայց ու գոցի» խնդիրը», «Գաղթը սպանիչ է», «Հողային հարց», «Կրթական գործ» եւ այլն: Հրատարակվող նյութերի միջոցով «Ակատամարտ»-ը համապարփակ պատկերացում է տվել ժամանակաշրջանի ազգային եւ համաշխարհային հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի մասին, արտացոլել է թուրքական իրականությունը, կարկ է տվել հայրենի գրականության զարգացմանը՝ երբեմն որպես դասագիրք օգտագործվելով հեռավոր գյուղերում[4]: Թուրքական կառավարական շրջանները հաշվի են առել «Ակատամարտ»-ի կարծիքը պետական կարեւոր հիմնահարցերով զբաղվելիս[5], իսկ թուրքական թերթերը հաճախ են թարգմանաբար արտատպել «Ակատամարտ»-ի խմբագրականները[6]: «Ակատամարտ»-ը եղել է սիրված եւ գնահատված թերթ ընթերցողների շրջանում: Դրան նպաստել են թերթի հրապարակումները ազգային էական խնդիրների վերաբերյալ (հողային հարց, կրթական խնդիրներ, Ադանայի կոտորածն ու դրա մեղավորներին պատժելու վերաբերյալ սկսված գործընթացը, հայկական գավառում կատարվող անօրինություններն ու բռնությունները, օսմանյան խորհրդարանի եւ հայ պատգամավորների, Պատրիարքարանի եւ ազգային մարմինների գործունեությունը եւ այլն): Արժեքավոր են թվարկված խնդիրներին նվիրված, օրինակ՝ Վահրամ Փափազյանի «Օսմանյան պառլամենտը», նույն թեմայի վերաբերյալ Գրիգոր Զոհրապի «Զանգակի մը տպավորությունները», Հարություն Շահրիկյանի «Պետական վերանորոգությունն ու հողային հարցը» հոդվածաշարերը եւ այլն:

1918-1924 թթ. Կ. Պոլսում, որպես «Ակատամարտ»-ի իրավահաջորդ, հրատարակվել է «Ճակատամարտ» օրաթերթը՝ գրեթե նոր խմբագրակազմով եւ Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրումից հետո ՀՅԴ որդեգրած նոր ծրագրին ու մարտավարությանը հարազատ բաժիններով ու թեմաներով: Օրաթերթի խմբագիրը Հակոբ Ճոլոյանն էր: Պատասխանատու տնօրեններն էին Մանուկ Ասլանյանը եւ Շավարշ Միսաքյանը, իսկ արտոնատերը՝ Վրթանես Մարտիկյանը: «Ճակատամարտ»-ն ունեցել է 3 անվանում՝ «Արդարամարտ» (1918 թ., թիվ 2-12), «Արիամարտ» (1918 թ., թիվ 13-32), «Ճակատամարտ» (1918 թ., թիվ 33-ից մինչեւ 1920 թ.): Աշխատակիցները Մեծ եղեռնից մազապուրծ եղած արեւմտահայ ճանաչված եւ հայտնի գրողները, հրապարակախոսները եւ մտավորականներն էին: Օրաթերթի էջերում հանդես են եկել Շավարշ Միսաքյանը, Երվանդ Օտյանը, Թեոդիկը (Թեոդորոս Լաբճինճյան), Արամ Զարըգը (Վկարանդի), Սարգիս Գասրճյանը (Ծերուկ), Մկրտիչ Պարսամյանը, Գեւորգ Մեսրոպը, Ենովք Արմենը, Վահան Շահրիմանը եւ ուրիշներ: «Ճակատամարտ»-ում

Շավարշ Միսաքյան

պահպանվել են «Ակատամարտ»-ի ավանդույթներն ու բաժինները: Վերջիններին ավելացել են նորերը՝ «Մեր խօսքը» խորագրով ամենօրյա խմբագրականները, «Առտուան տոմսեր», «Եղեռնապատում», «Վերապրողները», «Հայաջինջ սարսափներ», «Հայկական դատը գաղութներու մէջ», «Շարժումը հայ գաղութներու մէջ», «Մեր գաղութները եւ անոնց կեանքը», «Կը փնտռուին», «Կեանքը Հայաստանի մէջ», «Հայաստանի խորհրդարանի նիստերը» եւ այլն: Ազգային-մշակութային կյանքի խաթարման պատճառով օրաթերթում մինչեւ 1919 թ. նոյեմբեր ամիսը չկան մշակութային ուղղվածությամբ նյութեր: «Ճակատամարտ»-ի համար առաջնահերթ էին Հայ դատի պաշտպանության, Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին եւ իրագործողներին միջազգային դատարանի կողմից պատժի ենթարկելու, հայ ժողովրդի կրած մարդկային, նյութական եւ բարոյական կորուստների փոխհատուցման, հայ տարագիրների ներգաղթի կազմակերպման, անկախ եւ միացյալ Հայաստան հիմնելու նպատակները: «Ճակատամարտ» օրաթերթում մեծ տեղ են գրավում Հայաստանի Առաջին Հանրապետության կյանքի գրեթե բոլոր ոլորտների լուսաբանումները: Հիշատակենք Հ. Ամատունու «Հայաստանի Հանրապետութիւնը եւ իր մէկ տարուայ կեանքն ու գործը» եւ «Մեր պարտքը հայ բանակին» հոդվածաշարերը (1920, թիվ 345-350, 357, 372, 383), Ս. Ստեփանյանի «Հայաստան տնտեսական տեսակէտով» շարքը (նույն տեղում, 1920, թիվ 357, 366), Հ. Բագրունու «Մտաւորական շարժումը Հայաստանի մէջ» հոդվածը (1920, թիվ 360), «Հայաստանի գրական ընկերութիւնները» եւ «Հայ թատրոնը մեր մէջ» խմբագրականները (1919, թիվ 299, 300) եւ այլն: «Հայաստանը կազմելու համար» խմբագրականում «Ճակատամարտ»-ը պարզաբանում է իր ընտրած ուղեգիծը. «Ցնորք մը չէ այլեւս Անկախ Հայաստանը: Բայց՝ զգոյշ, արբենալու ժամը չէ այս: Երբ որ մեզ հրաւիրեն Հայաստանը կազմելու, կարենանք ասել առանց շիկնելու.

- Ահա մեր բաժինը Հայաստանի համար,- պահեցինք ինչ որ մնացած էր. ահա որբեր - վաղուան ցոլքերը, ահա տարագիրները - անդրանիկ ուխտաւորները, եւ ահա մենք՝ բախտաւորներս, որ կուզենք մեր Հայրենիքին հիմերը դնել» (1918, թիվ 28): «Ճակատամարտ»-ը գրեթե բոլոր համարներում դատապարտել է Հայոց ցեղասպանությունը – պահանջել պատժի ենթարկել կազմակերպիչներին ու մեղավորներին: Թերթի էջերում Եղեռնը վերապրողները պատմել են տեսած սարսափները: «Ճակատամարտ»-ը համոզված էր, որ թուրքական կառավարությունը Հայկական հարցը «ջնջելու համար» ցանկացել է ոչնչացնել հայ ժողովրդին, ինչը նրան չի հաջողվել: Թերթն իր նյութերում նաեւ փաստել է, որ «հայակեր» քաղաքականությունը շարունակվում է 1918-1920 թթ. նույնպես (1918, թիվ 2, 1919, թիվ 108):

---

1 «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 12, էջ 115-137:

2 Նույն տեղում, 1924, թիվ 9, էջ 112-120, 1925, թիվ 3, էջ 28-44:

3 Հայոց պարբերական մամուլը, Ե., 1934, էջ 57, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն, Ե., 1970, էջ 84:

4 «Հայրենիք», 1924, թիվ 9, էջ 118:

5 Վարանդյան Մ., Հ.Յ.Դ. պատմութիւն, Կահիրէ, 1950, հ.2, էջ 22:

6 «Հայրենիք», 1924, թիվ 12, էջ

«Դրօշակը» և՛ Սփյուռքում, և՛ Հայրենիքում նվաճել է իր ընթերցողների յուրահատուկ լսարանը: Նրա ընդմիջումով առաջացած բացը չլրացրեց ոչ մի ուրիշ պարբերական: «Դրօշակի» խորհուրդն արտահայտված է նրա անվան, իսկ առաքելությունը՝ համազգային խնդիրների լուսաբանման մեջ: Համոզված ենք, որ շատերն անհամբեր սպասում են «Դրօշակի» վերադարձին:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն Մարմնի «Երկիր» պաշտոնաթերթի խմբագրական խորհուրդ

Երկիր

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

"Աշխարհում ոչ մի ուրիշ ազգ չունի Մատենադարանին համարժեք գրադարան: Եվ ոչ մի ուրիշ ժողովուրդ չունի աշխարհին ներկայացնելիք ձեռագրերի հաւաքածու, իբրեւ իր գլխաւոր ազգային յուշարձան: Մենք՝ Բենեդիկտինցիներս, յայտնի ենք սրբազան եւ աշխարհիկ բնագրերի հանդէպ մեր հոգատարութեամբ, սակայն հայերի կողքին մենք ընդամենը սիրողներ ենք: Դա մեծագոյն պատիւ է անանխադէպ այդ հրաշքի վերականգնման եւ պահպանման գործընթացը մեզ վստահելու փաստը."

Լիլիթ Հովսեփյան

Այս խոսքերն ասել է Կոլամբա Սթյուարթը՝ HMML - Hill Museum & Manuscript Library (սուրբ Բենեդիկտին քոլեջ և սուրբ Հովհաննես համալսարանին կից Հիլլ թանգարան-ձեռագրերի գրադարանի) ղեկավարը Մատենադարանի տնօրինության հետ 17.000 ձեռագրերի թվայնացման մասին նախնական համաձայնագիր կնքելուց հետո: Դա տեղի էր ունեցել ապրիլի 13-ին, իսկ երեք շաբաթ անց Մատենադարանի տնօրինությունը հրապարակեց համաձայնագիրը լուծարելու մասին իր պաշտոնական հայտարարությունը:

...Սկանդալը ճայթել էր դեռևս չմեկնարկած գործարքի լուրը տարածվելուն պես, որովհետև "անանխադեպ հրաշքի" տեր ժողովրդի մի մասը հանկարծ որոշեց, որ տվյալ գործարքը՝ սպառնալիք է այդ հրաշքի նկատմամբ իր սեփականատիրական իրավունքի համար, որ Hill-ի միակ իսկական նպատակը մեր իսկ մշակույթի միջոցով մեզ պատվազուրկ անելն է, որ Մատենադարանի տնօրինությունը թաքնված թշնամիների կամ՝ անհեռատես անբանների կամ էլ՝ պարզապես մաքսանենգների մի կոլեկտիվ է, որի ակնկալիքները գործարքից սահմանափակվում են շահույթի շրջանակներով: Իսկ ամենահետաքրքիրն այն էր, որ կատարվածն անմիջապես ներկայացվեց հասարակությանը գրեթե անուղղելի ճակատագրական սխալի տեսքով, այն դեպքում, երբ ստորագրված փաստաթուղթն իրենից ընդամենը մտադրությունների հուշագիր էր ներկայացնում, որին՝ կողմերի համաձայնության գալու արդյունքում միայն, պետք է հաջորդեին արդեն ամեն տեսակի խնդիրներն ու մանրուքները հաշվի առնող երեք պայմանագրեր: Դրա ապացույցը կարելի էր գտնել նույն HMML-ի պաշտոնական կայքում, որտեղ ապրիլի 18-ին տեղադրված տեղեկատվության մեջ վերոհիշյալ փաստաթուղթը հիշատակվում է "ֆորմալ համաձայնագիր" կարգավիճակով:

Բայց սկանդալն արդեն ճայթել էր, և ժողովուրդն արդեն բորբոքվել էր, իսկ ժողովրդին բորբոքելու համար շատ բան պետք չէ՝ բավական է, որ իրավիճակը համեմվի մի քանի առեղծվածային սյուժեներով: Մատենադարանում ասենք,պահվող 17.000 ձեռագրերից միայն 900-ն են հետազոտված ու փաստորեն ոչ ոք դեռ չգիտե, թե պետական ինչ կարևորության գաղտնիքներ կարող են հայտնաբերել թվայնացման քողի տակ մնացածի բովանդակությունը քչփորող օտարերկրյա լրտեսները: Կամ այսպիսի սյուժե. թվայնացման ողջ գումարը տրամադրում է անհայտ մի բարերար, որի անունը նույնիսկ Մատենադարանում չգիտեն կամ էլ՝ գիտեն, չեն ասում, և ուրեմն այդ "բարերարն" աստված գիտե, թե ինչ նպատակներ է հետապնդում, իսկ գուցե նա թու՞րք է... Սյուժեները շատ էին, սակայն դրանցից ամենաազդեցիկն, իհարկե, "ազգային մեծագույն արժեքների նկատմամբ մեր սեփականության իրավունքն ուրիշին փոխանցելու" վտանգն էր: Եվ եթե թվարկած ու մնացյալ բոլոր սպառնալիքները կարելի էր հերքել փաստերի կամ բանականության օգնությամբ, ինչն, ի դեպ, Մատենադարանի տնօրինությանը շատ թե քիչ հաջողվել էր

03. Մայիսի. 2007 թ.

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մաշտոցի անվան Մատենադարանի՝ Հիլլ թանգարան-ձեռագրերի գրադարանի (ԱՄՆ) կազմակերպության հետ կնքված մտադրությունների մասին հուշագիրը, որով նախատեսվում էր հետագա երեք աշխատանքային պայմանագրերի կնքումից հետո սկսել Մատենադարանում պահվող ձեռագրերի թվայնացման աշխատանքները, հասարակական բարձր հնչեղություն ստացավ և հակասական կարծիքների տեղիք տվեց:

Արտահայտված մտահոգություններում հատկապես շեշտվեց, որ ձեռագրերի թվայնացումը պետք է իրականացնել Հայաստանի պետության, բարերարների և ընդհանրապես ժողովրդի աջակցությամբ և տրամադրած միջոցներով, կրկնօրինակը Հայաստանից դուրս չհանելով և առանց այնպիսի նախապայմանների, որոնք կխախտեն ձեռագրերի իրական սեփականատիրոջ՝ Հայաստանի Հանրապետության իրավունքները ձեռագրերի թվայնացվելիք նկարների նկատմամբ:

Մաշտոցյան Մատենադարանը սկսեց ձեռագրերի թվայնացման քննարկումներն արտասահմանյան կազմակերպության հետ և ստորագրեց հիշյալ մտադրությունների հուշագիրը եւ նախնական պայմանագրերը, որպեսզի թվայնացման միջոցով հնարավորինս արագ ապահովագրվի հայ ժողովրդի մեծագույն հարստությունը, ձեռագրային խոշորագույն ժառանգությունը:

Մատենադարանի տնօրինությունն ու աշխատակազմն իրենց երախտագիտությունն են հայտնում հնչած բոլոր ազնիվ մտահոգությունների և կառավարական ու հասարակական մակարդակով կազմակերպված քննարկումների համար, որոնց ընթացքում ներկայացվեցին նաև բոլոր այն հարցերը, որոնք վերաբերում են Մատենադարանում պահվող ձեռագրերի գիտական պահպանությանը, նորոգմանը և ուսումնասիրմանը: Արդյունքում՝ որոշակի հայեցակարգ ձևավորվեց աշխատանքները ազգային ուժերով կազմակերպելու համար:

Բոլոր այս քննարկումները հույս ներշնչեցին, որ մեր կառավարության, բարերարների և ընդհանրապես հասարակության աջակցությամբ ինքնուրույն կարելի է իրականացնել հայերեն ձեռագրերի թվայնացման ծրագիրը: Մատենադարանի տնօրինությունը իր շնորհակալությունն է հայտնում Հիլլ կազմակերպությանը, առաջարկված համագործակցության համար,միաժամանակ տեղեկացնելով, որ լուծում է (չեղյալ է հայտարարում) կնքված համաձայնագիրն ու նախնական պայմանագրերը՝ձեռնամուխ լինելով ձեռագրերի թվայնացման աշխատանքների ծրագրի մշակմանը և համապատասխան նախահաշվով այն Հայաստանի կառավարությանն ու հասարակությանը ներկայացնելուն:

բազմաթիվ ասուլիսներում արդարանալու ընթացքում,ապա սեփականության կորստի նույնիսկ ուրվականի նկատմամբ ազգային բարդույթի ակնթարթային ծաղկելու ընդունակությունը հիրավի սարսափ ներշնչեց: Ավելի սարսափելի է այդ բարդույթը բզբզողների կեցվածքն ու բզբզելու պատրաստակամությունը, որն, իբրև օրենք, ուղեկցվում է անձնական բարդույթների առկայությամբ և ոչ թե բուն խնդիրը լուսաբանելու, առավել ևս՝ լուծման տարբերակներ փնտրելու ցանկությամբ: Իսկ քանի որ ձեռագրերի թվայնացման շուրջ Մատենադարանի "ծածուկ գործելակերպը" գործարքին չմասնակցած գիտնականների վրդովմունքի հիմնական դատապարտիչ կարգախոսն էր, ապա բողոքավորների պատասխանն այն հարցին, թե ինչու՞ իրենք ինքնուրույն չեն կապվում հենց HMML-ի, այսինքն՝ համաձայնագիրը ստորագրած մյուս կողմի հետ, որպեսզի պարզաբանեն իրողությունը, բավականին պերճախոս էր. "Իսկ ինչու՞ մենք պետք է դրանով զբաղվենք": Դե արի ու բացատրի, թե ինչու... Կատարող-ֆինանսավորողի միտումներն ու հավակնությունները շատ հստակ և մատչելի ձևակերպմամբ հրապարակված են HMML-ի կայքում ապրիլի 18-ի տեղեկատվության մեջ. "Հիլլ թանգարան-գրադարանը ստեղծվել է քառասուն տարի առաջ ի պատասխան վերջին երկու համաշխարհային պատերազմների կործանարար հետևանքների, որոնց թվում է նաև բազմաթիվ անգյուտ ձեռագրերի ոչնչացումը: Սա աշխարհում միակ կազմակերպությունն է, որի գործունեությունը նվիրված է բացառապես ձեռագրերի լուսանկարչական պահպանմանն ու հետազոտմանը, հատկապես բնական աղետների կամ պատերազմի վտանգի տակ գտնվող տարածաշրջաններում: Երևանում պահպանվող բնագրերի թվայնացման համար Հիլլը պատրաստ է տրամադրել վերջին սերնդի տեխնոլոգիաները՝ ինչպես վերականգնողական և լուսանկարչական, այնպես էլ հետագա անվտանգությունն ապահովելու ողջ գործընթացի ընթացքում: Մատենադարանի տնօրինության տակ են գտնվելու թվայնացված բնօրինակները, իսկ պատճեններն ամենայն հոգատարությամբ կպահպանվեն HMML-ի պահոցում: Համացանցում տեղադրված տիպային լուսանկարներից մասնակի տեղեկատվություն ստացած այն գիտնականները, ուսանողները և լայն հասարակության ներկայացուցիչները, որոնք ձեռագրերին մանրամասն ծանոթանալու ցանկություն կհայտնեն, պետք է դիմեն HMML՝ պատճեններն օգտագործելու խնդրանքով, որի բավարարումը հնարավոր կլինի միայն Մատենադարանի հեղինակային իրավունքներն ու ֆինանսական շահերն ամրագրող պաշտոնական թույլտվության դեպքում:"

Բողոքավորների մյուս կարգախոսը տեղի մասնագետների "գործազրկության" մասին էր, որոնց փոխարեն "փողը վաստակելու էին օտարները": Մինչդեռ այս դրույթի վերաբերյալ պարզաբանումներ նույնպես կարելի էր գտնել՝ ինչպես հուշագրի բովանդակության մեջ, այնպես էլ HMML-ի կայքում. "HMML-ն ստանձնում է տեխնիկական սարքավորումներով ապահովումը, տեղի մասնագետների լրացուցիչ ուսուցանումը և լուսանկարչական աշխատանքների վարձատրումը, ինչպես նաև՝ հետագա համագործակցության ընթացքում տարեկան բյուջեի նախատեսումը:"

Այս ամենը,իհարկե,կարելի է դատարկ խոսքեր համարելով կասկածի տակ առնել եւ չվստահել ոչ միայն HMML-ին,այլեւ հնարավոր բոլոր այն գործընկերներին,որոնց մեջ,անշուշտ,կլինեն նաեւ իրենց շահերը կամ հետին նպատակներ հետապնդողներ,համաշխարհայնացման շարժման հմուտ գործակալներ:Բայց եւ շարունակել փակված մնալ "ագռավի քարում" եւ այլոց անվերջ կասկածելով խոստովանել կամ փաստել սեփական թուլությունն,այլեւս հնարավոր չէ:

Ելքը միակն է.օգտվելով անխուսափելի համաշխարհայնացման առավելություններից՝չտրորվել նույն այդ անխուսափելիության ոտքերի տակ:

Կրթության և գիտության նախարարությունը խնդրի կապակցությամբ ,վերջերս,նիստ հրավիրեց, որին, բացի Մատենադարանի տնօրինությունից, մասնակից էին տարբեր կազմակերպությունների և հաստատությունների ներկայացուցիչներ՝ինչպես գործարքի կողմնակիցներ, այնպես էլ խռով դիրք բռնած ընդդիմադիրներ: Խնդիրների ամբողջ փաթեթը քննարկելուց հետո, որոշվեց լուծարման հայտարարությունը փոխարինել գործընթացի ժամանակավոր դադարեցմամբ, ինչի մասին տեղեկացվեց նաև համաձայնագիրը ստորագրած մյուս կողմը՝Հիլլ թանգարան-գրադարանի ղեկավարությունը, որն իր հերթին հավաստիացրեց, թե պատրաստ է սպասել այնքան ժամանակ, որքան հարկավոր է:

Իսկ մինչ կհասունանա վերջնական պայմանագիրը կնքելու կամ դրանից հրաժարվելու պահը, անհրաժեշտ է հստակեցնել հիմնական վիճելի հարցադրումներն ու ստանալ դրանց ամենաճշգրիտ պատասխանները.

1. Հնարավո՞ր է արդյոք թվայնացման գործընթացն իրականացնել Հայաստանում, եթե այն ոչ միայն բարձրակարգ մասնագետներ է պահանջում, այլև ծախսատար է, քանի որ ենթադրում է. ձեռագրերի մանրամասն նկարագրություն, հետո՝վերանորոգում, լուսանկարչություն, այնուհետև՝ թվայնացում: Որո՞նք են այդ ծախսերը հոգալու հնարավոր միջոցների աղբյուրները. պետական բյուջե՞ն, սփյուռքի կամ հայրենական մեծահարուստնե՞րը, ժողովրդի հանգանակությունն՞ը... Թե՞ բոլորը միասին:

2. Եթե այնուամենայնիվ Մատենադարանը Հիլլ թանգարան-գրադարանի հետ պայմանագիր կնքի, ի՞նչ երաշխիքներ կարող են ներկայացնել կողմերը Մատենադարանին, իսկ հետևաբար՝Հայաստանին պատկանող գործընթացային և հետագա հեղինակային իրավունքի պահպանման վերաբերյալ:

Բացի ընդհանուր հարցադրումներից, շրջագծվեցին նաև Մատենադարանի՝իբրև ինքնուրույն կազմակերպության իրավունքների և պարտավորությունների սահմանները, որոնք թույլ են տալիս տնօրինությանն առանց այլոց միջամտության որոշել, թե հատկապես ո՞ր ձեռագրերն են ենթակա թվայնացման, ինչպես նաև՝պարտավորեցնում են 20 օրվա ժամկետում մշակել և ներկայացնել մի ամբողջական ծրագիր, որի հիմնավորումները վերջ կտան երկու ամիս տևող սկանդալին:

Սպասենք եւ հուսանք, որ խնդրի ճշգրիտ լուծումը չի ուշանա:



«ԴՐՕՇԱԿ»-ի պատկերասրահ

“Համազգային” կրթամշակութային միության Երևանի գրասենյակի նախաձեռնությամբ, Բոյաջյան ցուցասրահում ներկայացվեցին Հայաստանի 12 կին նկարիչներ:
“Դրօշակ”-ի պատկերասրահը հյուրնկալել է նրանցից մի քանիսին:



Սոնա Բանոյան “Տիրամայր”

Մարինե Դիլանյան “Թռչուն”



Պայծառ Ավետիսյան “Կեսօր”

Լիլիթ Սողոմոնյան “Խաղ”